

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**ԱՆՁԻ ԴԻՍՊՈԶԻՑԻՈՆԱԼ ԳԾԵՐ ԵՎ
ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐ.**

ՀՈԳԵԶԱՓՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՏԵՂԱՅՆԱՅՈՒՄ

**ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2021**

ՀՏԴ 316.61
ԳՄԴ 88.52
Ա 597

*Հրապարակության է երաշխավորել
ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի
գիտական խորհուրդը:*

Գրախոս՝ հ.գ.դ., պրոֆեսոր Սվետլանա Հարությունյան

Մասնագիտական խմբագիր՝ հ.գ.թ. Նարինե Խաչատրյան

Հեղինակներ՝

Աստղիկ Սերոբյան, Նարինե Խաչատրյան (բաժին առաջին)

Անի Գրիգորյան, Նարինե Խաչատրյան (բաժին երկրորդ)

Ա 597 Անձի դիսպոզիցիոնալ գծեր և սոցիալ-մշակութային կողմնորոշումներ. հոգե-
չափողական գործիքների տեղայնացում: Գիտամեթոդական ձեռնարկ. -Եր.,
ԵՊՀ հրատ., 2021, 128 էջ:

Ձեռնարկում ներկայացված են անձի դիսպոզիցիոնալ գծերի և սոցիալ-մշակութային կողմնորոշումների ուսումնասիրման էմպիրիկ մոդելները, դրանց հիման վրա ստեղծված հար-
ցարանները, ինչպես նաև տեղայնացման գործընթացը հայալեզու ընտրանքի համար, մասնա-
վորապես նկարագրված են հոգեչափողական հատկությունների՝ հուսալիության ու վալիդու-
թյան ստուգման արդյունքները: Ձեռնարկը կարող է օգտակար լինել անձի և սոցիալական հո-
գեբանությամբ զբաղվող հետազոտող մասնագետներին, ինչպես նաև կարող է ծառայել որպես
մեթոդական ուղեցույց երիտասարդ մասնագետների և ուսանողների համար՝ իրականացնելու
իրենց հետազոտություններում կիրառվող գործիքակազմի տեղայնացման գործընթացը:

ՀՏԴ 316.61
ԳՄԴ 88.52

ISBN 978-5-8084-2489-0

© ԵՊՀ հրատ., 2021

© Հեղ. խումբ, 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....	5
--------------	---

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ

ԱՆՁԻ ԴԻՍՊՈԶԻՑԻՈՆԱԼ ԳԾԵՐԻ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՀԱՐՑԱՐԱՆՆԵՐ	9
----------------------------------	---

1. «ՄԵԾ ՀՆԳՅԱԿ» ՀԱՐՑԱՐԱՆ (BIG FIVE).....	11
Տեսական հիմքեր	11
Տեղայնացման գործընթացը	13
Հարցարանի նկարագրություն	25
Ենթագործոնների նկարագրությունը	30
Էքստրավերտություն	30
Հարցարանի բլանկ	38
2. «ՄԵԾ ՀՆԳՅԱԿ» ՀԱՐՑԱՐԱՆ (ԿԱՐՃ ՏԱՐԲԵՐԱԿ)	43
Տեղայնացման գործընթացը	43
Հարցարանի նկարագրություն	46
Հարցարանի բլանկ	48
3. ԱՆՁԻ ՎԵՅԳՈՐԾՈՆԱՅԻՆ ՀԱՐՑԱՐԱՆ (HEXACO)	50
Տեսական հիմքեր	50
Տեղայնացման գործընթացը	51
Հարցարանի նկարագրություն	56
Հարցարանի բլանկ	64
4. «ՄՈՒԹ ԵՌՅԱԿ» ՀԱՐՑԱՐԱՆ (DARK TRIAD DIRTY DOZEN)	
Տեսական հիմքեր	70
Տեղայնացման գործընթացը	70
Հարցարանի նկարագրություն	72
Հարցարանի բլանկ	75

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ

ԱՆՁԻ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՀԱՐՑԱՐԱՆՆԵՐ	77
----------------------------------	----

5. ԲԱԶԱՅԻՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐ	79
Տեսական հիմքեր	79
Տեղայնացման գործընթացը	85
Հարցարանի նկարագրություն	86
Հարցարանի բլանկ	87
6. ՈՒՂՂԱՀԱՅԱՑ ԵՎ ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ	
ԿՈՒԼԵԿՏԻՎԻԶՄ-ԻՆԴԻՎԻԴՈՒԱԼԻԶՄ	93
Տեսական հիմքեր	93
Տեղայնացման գործընթացը	96

Հարցարանի նկարագրություն	99
Հարցարանի բլանկ.	100
7. «ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ», «ՊԱՏՎԱՍԻՐՈՒԹՅԱՆ», «ԴԵՄՔԸ ՉԿՈՐՑՆԵԼՈՒ» ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐ	102
Տեսական հիմքեր	102
Տեղայնացման գործընթացը	104
Հարցարանի նկարագրություն	113
Հարցարանի բլանկ	114
8. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՔՍԻՈՄՆԵՐ	116
Տեսական հիմքեր	116
Տեղայնացման գործընթացը	117
Հարցարանի նկարագրություն	122
Հարցարանի բլանկ	124

ՆԱԽԱԲԱՆ

Անձի հիմնախնդրի ճանաչման մեջ միշտ արդիական է եղել մարդու ունիվերսալ, մասնավոր և յուրահատուկ առանձնահատկությունների ուսումնասիրումը: Հոգեբանության մեջ գոյություն ունեն անձնային դրսևորումների ուսումնասիրման տարբեր մոտեցումներ, որոնք բխում են նոմոթետիկ՝ հոգեչափողական կամ քանակական ուսումնասիրությունների և իդեոգրաֆիկ՝ մեկնողական կամ որակական ուսումնասիրությունների մեթոդաբանությունից¹: Վերոնշյալ մեթոդաբանությունները տարբեր կերպ են մոտենում և տարբեր բացատրական մոդելներ են առաջարկում անձնային ունիվերսալության և եզակիության հասկացման համար: Անձի հոգեբանության՝ որպես առանձին բնագավառի ձևավորման համար նշանակալի դեր են ունեցել Գ. Օլպորտի² ու Հ. Մյուրեյի³ աշխատությունները, որոնք ուղղված են միավորելու ընդհանուր ու մասնավոր օրինաչափությունների ներքո անձնային դրսևորումների ուսումնասիրումը:

Թեպետ վերջերս որակական ուսումնասիրությունները սկսել են ավելի կարևորվել անձի հոգեբանության մեջ, առայժմ ազդեցիկ դեր են կատարում քանակական՝ հոգեչափողական մեթոդները: Անկախ այն հանգամանքից, որ վերջին ժամանակներում այս մեթոդաբանությունը ենթարկվում է քննադատության՝ այն փաստից ելնելով, որ հնարավորություն չի տալիս ուսումնասիրելու առանձին անձին իր ամբողջականության մեջ, այնուամենայնիվ այն համարվում է ապացուցահեն մեթոդաբանություն անձնային դրսևորումների ուսումնասիրման համար:

Սույն գրքում հավաքագրվել են «Անձ և սոցիալական միջավայր» գիտահետազոտական լաբորատորիայի ուսումնասիրությունների շրջանակներում կիրառվող տարբեր հարցարանային գործիքներ: Գործիքների մեծ մասը տեղայնացված է միջնշակութային ուսումնասիրությունների շրջանակներում՝ համագործակցելով տարբեր մասնագետների հետ, մասնավորապես լաբորատորիան համագործակցել է Երուսաղեմի եբրայական համալսարանի պրոֆեսոր Շալոմ Շվարցի (Իսրայել), Վարշավայի՝ Կարդինալ Ստեֆան Վիշինսկու համալսարանի պրոֆեսոր Մագդա Ժեմոտել Պիոտրովսկայայի հետ «Սուր-

¹ Տե՛ս Winter D. G. & Barenbaum N. B. (1999) History of modern personality theory and research. *Handbook of personality: Theory and research*, 2, pp. 3-27:

² Տե՛ս Allport G. W. (1966) Traits revisited. *American Psychologist*, 21(1), pp. 1-10:

³ Տե՛ս Murray H. A. (1977) Indispensables for the making, testing, and remaking of a personological system. In R. W. Rieber & K. Salzinger (Eds.), *The roots of American psychology: Historical influences and implications for the future* (pp. 323-331), New York: New York Academy of Sciences:

յեկտիվ բարեկեցություն և անձի իրավահավակնության բնութագրեր», ինչպես նաև Մանհեյմի համալսարանի պրոֆեսոր Ջոզեֆ Գերաուերի «Նարցիսիզմ և անձի ինքնագնահատական», Միացյալ Թագավորության Սասեքսի համալսարանի պրոֆեսոր Պիտեր Սմիթի հետ «Արժանապատվության, պատվասիրության և դեմքը չկորցնելու մշակույթներ», Մոսկվայի «Տնտեսագիտության բարձրագույն դպրոց» ազգային հետազոտական համալսարանի պրոֆեսոր Նարտովա-Բոչավերի հետ «Կլիմայական փոփոխությունների ժխտում» ծրագրերի շրջանակներում:

Գրքի առաջին բաժնում ներկայացված են անձի դիսպոզիցիոնալ գծերի ուսումնասիրման առավել տարածում ստացած հարցարանները: Անձնային գծերը մարդու կայուն, ժամանակի մեջ քիչ փոփոխություններ կրող առանձնահատկություններն են, որոնց ձևավորման համար մեծ նշանակություն ունեն բնածին գործոնները: Անձնային գծերն իրավիճակից անկախ են և բնութագրում են անձի՝ տարբեր իրավիճակներում գործելու ու հակազդելու բազային միտումը, ինչը թույլ է տալիս կանխատեսել մարդու վարքը՝ անկախ իրավիճակի ազդեցությունից⁴: Ներկայացված է Մեծ հնգյակի հարցարանը՝ երկար ու կարճ տարբերակներով, ինչպես նաև HEXACO՝ վեցգործոնային մոդելը, որն առաջարկվել է որպես «Մեծ հնգյակին» այլընտրանքային տարբերակ՝ հաշվի առնելով բազմամշակութայնության գործոնը: Քանի որ «Մեծ հնգյակի» բառային (լեքսիկական) մոդելը մշակվել է անգլերենի հիման վրա, վեցգործոնային հարցարանը մշակվել է 12 լեզուների համադրության արդյունքում: Այս բաժնում ներկայացված է նաև անձի բացասական՝ հասարակական հարաբերություններում ոչ ցանկալի, խնդրահարույց գծերը չափող մոդելը՝ Dark Triad Dirty Dozen:

Գրքի երկրորդ բաժնում խմբավորվել են անձի սոցիալ-մշակութային կողմնորոշումները նկարագրող հարցարաններ: Վերջիններս անձի դինամիկ բնութագրերն են. դրանք ձևավորվում են անձի սոցիալականացման արդյունքում և անմիջապես իրենց վրա կրում են միջավայրի բովանդակային բնութագրերը՝ մշակութային/սոցիալական նորմերը, սոցիալական պրակտիկաները, իրավիճակային «ճնշումները»⁵: Ներկայացված են Շ. Շվարցի բազային արժեքային կողմնորոշումների մոդելը, Հ. Տրիանդիսի ինդիվիդուալիզ-կոլեկտիվիզմ արժեքային կողմնորոշիչները, «Արժանապատվություն-պատվասիրություն-դեմքը չկորցնելու» մշակույթները և սոցիալական համոզմունքներն ուսումնասիրող «սոցիալական աքսիոմների» մոդելը:

⁴ Տե՛ս **McAdams D. P.** (1995) What do we know when we know a person?. *Journal of personality*, 63(3), pp. 365-396:

⁵ Տե՛ս նույն տեղը:

Ձեռնարկն արժեքավոր է նրանով, որ ներկայացված են ոչ միայն հարցա-
րանները, այլև տվյալ գործիքների տեղայնացման գործընթացը հայալեզու
ընտրանքի համար: Մասնավորապես ներկայացված են հարցարանների հո-
գեչափողական հատկությունների՝ հուսալիության ու վալիդության ստուգման
արդյունքները: Ձեռնարկում ներկայացված հարցարանային մեթոդիկաները
հնարավորություն կտան հետազոտողներին վստահաբար կիրառելու դրանք
իրենց հետազոտություններում, համադրելու իրենց ստացված ցուցանիշներն
արդեն դուրս բերված ցուցանիշների հետ: Բացի վերոնշյալից՝ ձեռնարկը կա-
րող է ծառայել որպես մեթոդական ուղեցույց երիտասարդ մասնագետների
համար՝ իրականացնելու իրենց հետազոտություններում կիրառվող գործիքա-
կազմի տեղայնացման գործընթացը: Այս գործընթացը հիմնականում բացա-
կայում է մեզանում իրականացվող ուսումնասիրություններում, այնինչ հոգե-
չափողական գործիքների տեղայնացումը մեծացնում է հետազոտության ար-
դյունքների հավաստիությունը:

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ

**ԱՆՁԻ ԴԻՍԴՐՈՉԻՑԻՈՆԱԼ ԳԾԵՐԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՀԱՐՑԱՐԱՆՆԵՐ**

1. «ՄԵԾ ՀՆԳՅԱԿ» ՀԱՐՑԱՐԱՆ (BIG FIVE)

ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐ

Անձի հոգեբանության տեսական մոտեցումներից յուրաքանչյուրը մարդուն նկարագրում է իր դրսևորման տարբեր մակարդակներում (կենսաբանական, անձնային գծերի, հոգեդինամիկ, դրդապատճառային և այլն): Անձի հոգեբանության մոտեցումներից անձնային գծերի կամ դիսպոզիցիոնալ մոտեցումն ուսումնասիրում է անձնային կայուն բնութագրերը և վարքային միտումները, որոնցով մարդիկ միմյանց նման են կամ տարբերվում են իրարից⁶: Այս հարցով զբաղվող հետազոտողների խնդիրն է գտնել ամենակարևոր, կայուն և, ինչու չէ, համընդհանուր գծերը՝ փորձելով պատասխանել հետևյալ երկու հարցերին.

1. որո՞նք են մարդուն նկարագրող հիմնական հոգեբանական գծերը,
2. ինչպե՞ս կարելի է լավագույնս ուսումնասիրել և նկարագրել մարդկանց միջև տարբերությունները՝ ըստ այդ գծերի:

Վերը թվարկված հարցերի տեսական ու հետազոտական պատասխանները նպաստում են նրան, որ հնարավոր է դառնում չափել, նկարագրել, դասակարգել ու վերլուծել անձնային գծերը: Այս ոլորտում աշխատանքների մեծ մասը հիմնված է այն ենթադրության վրա, որ անձը նկարագրող կարևոր հատկությունները ներառում են մեծ, սակայն սահմանափակ քանակությամբ գծեր: Դիսպոզիցիոնալ տեսության ներկայացուցիչները կարծում են, որ «...գծերը անձնային տարբերություններ են, որոնք կայուն են տարբեր իրավիճակներում և ժամանակի ընթացքում...»⁷: Բացի դրանից՝ համարվում է, որ անձնային գծերը չափելի են և ունեն դրևորման տարբեր աստիճան, այսինքն՝ ինչ-որ մի գիծ մի մարդու մոտ կարող է վառ արտահայտված լինել, իսկ մյուսի մոտ՝ քիչ: Հիմնվելով այս ենթադրության վրա՝ փորձեր են արվում ստեղծելու անձնային գծերի դասակարգման մի ընդհանուր համակարգ: Նման համակարգի ստեղծման մեկնակետ են ընդունվել անձի այն բնութագրիչները, որոնք օգտագործվում են բնական կամ առօրյա լեզվում: Մոտեցման հիմնական սկզբունքն այն է, որ հետազոտողները բառարաններից դուրս են բերել անձը նկարագրող բոլոր ածականները, որոնք հետագայում ենթարկվել են վերլու-

⁶ Տե՛ս **Mischel W., Shoda Y., Ayduk O.** (2008) *Introduction to personality: Toward an integrative science of the person*, 8th ed., Wiley Global Education, էջ 58-59:

⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 60-61:

ծության⁸: Գ. Օլպորտը և Հ. Օդբերտը (1936) առաջիններից էին, որոնք սկսեցին անհատականության հատկությունները ամփոփել բառարաններից: Նրանց աշխատանքները հետագայում շարունակեց և մշակեց Ու. Նորմանը (1967)⁹՝ փորձելով խմբերի բաժանել բնութագրիչների ողջ բազմությունը⁹: Սակայն ինչպես Օլպորտի և Օդբերտի, այնպես էլ Նորմանի դասակարգումների խնդիրն այն էր, որ առանձնացված խմբերը իրար նման էին և ունեին համընկնող ընդհանուր եզրեր: Հետազոտողների մի մասը դա համարեց անընդունելի՝ փորձելով գտնել անձնային գծերի դասակարգման այլ տարբերակներ: Ռ. Բեթելը (1943) օգտագործեց Օլպորտի և Օդբերտի ցուցակը՝ որպես մեկնարկային կետ անձի բազմաչափ կառուցվածքի նկարագրման համար¹⁰: Սակայն Բեթելի առաջարկած մոդելը բավականին լայն էր ու ընդգրկում էր 16 գործոն: Սա էր պատճառը, որ հետագայում գիտնականները փորձեցին ստեղծել անձի այլ մոդել, որը կներառեր ավելի քիչ փոփոխականներ: Առաջինը Դ. Ֆիսկեն էր (1949), որն առաջարկեց Բեթելի մոդելի ավելի սեղմ տարբերակը: Նրա կողմից առաջարկված փոփոխականները, որոնք դուրս էին բերվել ինքնագնահատման և այլ մարդկանց գնահատման միջոցով, հիմք հանդիսացան հինգ գործոնային մոդելի ստեղծման համար: Առաջին անգամ հինգգործոնային մոդելը նկարագրվեց 1960-ական թվականներին¹¹: Հետևելով մախորդ հեղինակներին, հատկապես Գ. Օլպորտին, Ռ. Բեթելին, Ռ. Նորմանին՝ Գոլդբերգը որպես անձնային գծի էմպիրիկ ապացույց օգտագործեց անհատների շարքեր՝ ենթադրելով, որ լեզուն է մարդու անձնային բնութագրիչների կրողը¹²: Անձի կառուցվածքի ուսումնասիրման այս մոտեցումը հայտնի է որպես հոգեկենդանական մոտեցում: Հիմնվելով հոգեկենդանական մոտեցման ու գործոնային վերլուծության մեթոդի վրա՝ հետազոտողները եզրակացրին, որ անձին կարելի է նկարագրել հինգ հիմնական գծերի միջոցով: Այդ հինգ գծերից յուրաքանչյուրը ներկայացնում է անձի մեկ կարևորագույն կողմ, որը դրսևորվում է նրա գործունեության մեջ և մարդկանց հետ շփման ընթացքում¹³: «Մեծ հնգյակ» անվանումն առաջին անգամ հանդիպում է հենց Գոլդբերգի ուսում-

⁸ Տե՛ս **Goldberg L.** (1992) The development of markers for the Big-Five factor model: *Psychological Assessment*, 4 (1), pp. 26-42:

⁹ Տե՛ս **Первин Л., Джон О.** (2001) *Психология личности: Теория и исследования*, пер. с англ. М. С. Жамкоян, под ред. Б. С. Маргуна, М.: «Аспект Пресс», էջ 255-327:

¹⁰ **John O., Srivastava S.** (1999) The Big Five trait taxonomy: history, measurement and theoretical perspectives in L. Pervin and O.P. John (eds.), *Handbook of personality: Theory and research* (2nd ed.). New York: Guilford, pp. 102-138:

¹¹ Տե՛ս **Первин Л., Джон О.** (2001) նշվ. աշխ., էջ 291-292:

¹² Տե՛ս **Goldberg L.** (1992) The development of markers for the Big-Five factor model. *Psychological Assessment*, 4 (1), pp. 26-42:

¹³ Տե՛ս **Первин Л., Джон О.** (2001) նշվ. աշխ., էջ 285-288:

նասիրություններում¹⁴: «...Հինգգործոնային մոդելը դիտարկվում է որպես անհատի հուզական, կոգնիտիվ, դրդապատճառային բազային ոճերի, ինչպես նաև միջանձնային հարաբերությունների կառուցման անհատական ոճերի ուսումնասիրման գործիք...»¹⁵: Այդ հինգ գործոններն են՝ նեյրոտիզմ (անգլ.՝ Neurotism), էքստրավերտություն (անգլ.՝ Extraversion), լայնախոհություն (փորձին բաց լինել) (անգլ.՝ Openness), բարյացակամություն (համաձայնեցվածություն) (անգլ.՝ Agreeableness), բարեխղճություն (գիտակցականություն) (անգլ.՝ Conscientiousness): Այս գծերը կայուն են ժամանակի մեջ, անկախ են իրավիճակից, և դրանց միջոցով հնարավոր է համակողմանի նկարագրել մարդուն¹⁶:

ՏԵՂԱՅՆԱՅՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

Փուլ 1

Հայալեզու հարցարան ստեղծելու համար մենք օգտվել ենք International Personality Item Pool-ից, որտեղ հավաքագրված են անձնային բոլոր գծերը չափող գործիքների սանդղակները¹⁷: Բոլոր ընտրված սանդղակների հարցերը անցել են երկփուլ քարգմանության գործընթաց (անգլերենից հայերեն և հետքարգմանություն), այնուհետև ընտրվել են այն հարցերը, որոնք ընկալելի են հայ լեզվամտածողության համար, անհրաժեշտության դեպքում վերջիններս շտկվել են: Նախնական հարցարանը բաղկացած էր 155 հարցից: Յուրաքանչյուր մեծ գործոն ներկայացվել է վեց ենթագործոնով, որոնցից յուրաքանչյուրի համար կազմվել է հինգ պնդում: Բացի դրանից՝ հարցարանում ընդգրկված է եղել նաև 5 լրացուցիչ պնդում, որպեսզի հետազայում ընտրվեն առավել հուսալի ու վալիդ փոփոխականները:

Առաջին փուլի հարցմանը մասնակցել է ՀՀ տարբեր բուհերի 259 ուսանող ($M_{տարիք}=20$, $SD_{տարիք}=2.29$, կանայք՝ 71 %): Արդյունքները հետազայում ենթարկվել են վերլուծության՝ օգտագործելով մաթեմատիկական վիճակա-

¹⁴ Տե՛ս Goldberg L. (1992) նշվ. աշխ.:

¹⁵ Տե՛ս Mischel W., Shoda Y., Ayduk O. (2008) նշվ. աշխ., էջ 57-59:

¹⁶ Տե՛ս McAdams D. P., Pals J. L. (2006) A new Big Five: Fundamental principles for an integrative science of personality. *American psychologist*, 61 (3), pp. 204-217, McCrae R., Costa P. Jr., A five factor theory of personality. In O. John, L. Pervin (Eds.) (1999), *Handbook of personality: Theory and research*, 2nd ed. New York, NY: Guilford Press, pp. 139-153, McCrae R., Costa P. Jr. (2008) Empirical and theoretical status of the five-factor model of personality traits. In Boyle G., Matthews G. & Saklofske D. (eds) *The SAGE Handbook of Personality Theory and Assessment: Volume 1, Personality Theories and Models*, SAGE Publications Ltd, pp. 273-294:

¹⁷ Տե՛ս International Personality Item Pool: A Scientific Collaboratory* for the Development of Advanced Measures of Personality and Other Individual Differences / <http://ipip.ori.org>:

գրության մեթոդները: Վերլուծության նախնական փուլում ստուգվել է՝ ստացված հինգ մեծ գործոններից յուրաքանչյուրի բաշխվածությունը համապատասխանում է նորմալ բաշխմանը, թե ոչ: Արդյունքները ներկայացված են Աղյուսակ 1.1-ում:

Աղյուսակ 1.1

«Մեծ հնգյակը» չափող հարցարանի գործոնների նորմալ բաշխվածության չափանիշները. փուլ 1

Գործոնի անվանումը	Միջին արժեք (M)	Ստանդարտ շեղում(StDev)	Կոլմոգորով-Սմիրնովի Z	Նշ. գործակից (Assymp.sig.)
Նեյրոտիզմ	3,0	0,478	0,626	0,829
Էքստրավերտություն	3,5	0,465	0,855	0,458
Լայնախոություն	3,5	0,337	0,798	0,548
Բարյացակամություն	3,4	0,385	1,109	0,170
Բարեխղճություն	3,4	0,389	0,654	0,786

Աղյուսակ 1.1-ում ներկայացված են գործոնների միջին արժեքներն ու ստանդարտ շեղումները, ինչպես նաև Կոլմոգորով-Սմիրնովի Z չափանիշն ու դրա նշանակելիության աստիճանը: Բաշխվածությունը համարվում է նորմալ, երբ Կոլմոգորով-Սմիրնովի չափանիշի նշանակելիության աստիճանը մեծ է 0,05-ից¹⁸: Այսինքն՝ ելնելով աղյուսակի տվյալներից՝ կարելի է ասել, որ բոլոր հինգ գործոնները բաշխվել են նորմալ: Սա թույլ է տալիս, որ հետազոտության արդյունքները ենթարկվեն հետագա վիճակագրական վերլուծության:

Հարցարանի ներքին համաձայնվածությունը կամ, որ նույնն է, ներքին հուսալիությունը ստուգելու համար օգտվել ենք Կրոնբախի α ցուցանիշից: Այն ցույց է տալիս, թե յուրաքանչյուր պնդում որքանով է համապատասխանում այն սանդղակին, որը չափում է: Իսկ հարցարանի կայունությունը կամ արտաքին հուսալիությունը ստուգվել է թեստ-ռեթեստային մեթոդով: Մեթոդի էությունն այն է, որ հետազոտվողների մի մասը նույն հարցարանը լրացրել են երկու անգամ երկու ամիս ընդմիջմամբ: Ժամանակի մյուս հատվածն ընտրվել է, քանի որ անձնային գծերը ժամանակի կարճ հատվածի համար կայուն հատկանիշներ են, և երկու ամիսը բավական չէ՝ էական փոփոխություններ կատարվելու համար, սակայն բավարար է որպեսզի հետազոտվողը մոռանա այն պատասխանները, որոնք տվել է նախորդ անգամ: Հետազոտությանը մասնակցել է 69 ուսանող ($M_{\text{տարիք}}=19.8$, $SD_{\text{տարիք}}=1.346$, կանայք՝ 71 %):

¹⁸ Տե՛ս **Митина О. В.** (2011) *Разработка и адаптация психологических опросников*, М.: «Смысл», էջ 57-71:

Կրոնբախի α և թեստ-ռեթեստային գործակցի արդյունքները «Մեծ հնգյակի» յուրաքանչյուր գործոնի համար ներկայացված են Աղյուսակ 1.2-ում:

Աղյուսակ 1.2

«Մեծ հնգյակը» չափող հարցարանի գործոնների Կրոնբախի ալֆան և թեստ-ռեթեստային գործակիցը. փուլ I^[1]

Գործոնի անվանումը	Կրոնբախի α	Կրոնբախի α (թեստ-ռեթեստ)	Կրոնբախի α ըստ IPIP	Թեստ-ռեթեստային գործակից
Նեյրոտիզմ	0,86	0,88	0,95	0,81
Էքստրավերտություն	0,86	0,82	0,92	0,89
Լայնախոհություն	0,72	0,76	0,92	0,58
Բարյացակամություն	0,79	0,78	0,90	0,75
Բարեխղճություն	0,82	0,78	0,92	0,83

Ինչպես երևում է աղյուսակում ներկայացված տվյալներից, Կրոնբախի α երկու անկախ չափումների արդյունքում բոլոր հինգ գործոնների համար ստացվել է 0,7-ից մեծ թիվը, ինչպես նաև գործակիցները մոտ են IPIP սանդղակների գործակիցներին: Հաշվի առնելով նշված երկու համգամանքը՝ ստացված արդյունքները կարելի է համարել հուսալի: Ինչ վերաբերում է թեստ-ռեթեստային կորելյացիոն գործակցին, ապա այս դեպքում արդյունքները համարվում են հուսալի, եթե գործակիցը 0,75-0,8 է և ավելի¹⁹: «Մեծ հնգյակի» չորս գործոնները՝ նեյրոտիզմը, էքստրավերտությունը, բարյացակամությունը և բարեխղճությունը, համապատասխանում են այդ չափանիշին, իսկ լայնախոհության համար գործակիցը ստացվել է մոտավորապես 0,6: Սա նշանակում է, որ սանդղակում կան պնդումներ, որոնք վերանայման կարիք ունեն: Կրոնբախի α ՝ Աղյուսակ 1.3-ում ներկայացված տվյալներից էլ պարզ է դառնում, որ կան ենթագործոններ, որոնք կազմող պնդումները հարկավոր է վերանայել:

ՓՈՒԼ 2

Հետազոտության առաջին փուլում հավաքագրված արդյունքների հիման վրա նորից վերանայվել են բոլոր հինգ գործոններն ու երեսուն ենթագործոնները կազմող փոփոխականները ինչպես իմաստային, այնպես էլ վիճակա-

¹⁹ Տե՛ս նույն տեղը:

գրական տարբեր ցուցանիշների առումով: Արդյունքում ստացվել է, որ չափի զգացումի պակաս, ակտիվություն, լիբերալիզմ, վստահություն, կամքի ուժ ենթագործոնները վիճակագրորեն ոչ այնքան հուսալի ու վալիդ արդյունքներ են տալիս: Այդ պատճառով որոշվել է վերջիններս չընդգրկել հարցարանի մեջ: Այսպիսով՝ հետազոտության առաջին փուլի արդյունքում «Մեծ հնգյակը» չափող հարցարանի 150 հարցից 25 հարց կրճատվեց, և մնաց 125-ը, ինչպես նաև որոշ հարցեր վերանայվել են:

Հետազոտության երկրորդ փուլին մասնակցել է ընդհանուրը 223 հոգի (ինչպես տարբեր բուհերի ուսանողներ, այնպես էլ ոչ ուսանողներ): Մասնակիցների 32,7 %-ը տղամարդ է, իսկ 67,3 %-ը՝ կին ($M_{տարիք}=19,1$, $StDev_{տարիք}=5.196$): Հետազոտության բոլոր մասնակիցները լրացրել են հարցաթերթ, որում ընդգրկված է եղել «Մեծ հնգյակ» հայալեզու անձնային հարցարանը:

Հարցարանի ներքին համաձայնվածությունը կամ, որ նույնն է, ներքին հուսալիությունը ստուգելու համար օգտվել ենք Կրոնբախի α ցուցանիշից: Այն ցույց է տալիս, թե յուրաքանչյուր պնդում որքանով է համապատասխանում այն սանդղակին, որը չափում է: Կրոնբախի α գործակցի արդյունքները «Մեծ հնգյակի» յուրաքանչյուր մեծ գործոնի համար ներկայացված են Աղյուսակ 1.3-ում: Ինչպես երևում է աղյուսակներում ներկայացված տվյալներից, Կրոնբախի α հինգ մեծ գործոնների համար ստացվել է 0,7-ից բարձր: 25 ենթագործոնների ալֆաների գործակիցները տատանվում են 0,6-0,8 միջակայքում, որը նույնպես համարվում է ընդունելի ցուցանիշ: Այսինքն՝ ստացվում է, որ պնդումների վերանայումից ու վերաձևակերպումից հետո սանդղակները դարձել են ավելի հուսալի:

Աղյուսակ 1.3 «Մեծ հնգյակը» չափող հարցարանի գործոնների Կրոնբախի α , միջին արժեքները և սրանդարը շեղումները 1-ին և 2-րդ փուլերի համար

Գործոնների և ենթագործոնների անվանումը	α Փուլ 1	α Փուլ 2	M Փուլ 1	StDev Փուլ 1	M Փուլ 2	StDev Փուլ 2
ԷԶՍՏՐԱՎԵՐՏՈՒԹՅՈՒՆ	0,862	0,868	3.5	0.465	3.4	0.513
Ընկերասիրություն	0.776	0.727	3.6	0.749	3.4	0.745
Մարդամոտություն	0.819	0.834	3.4	0.854	3.3	0.901
Հաստատակամություն	0.643	0.615	3.4	0.659	3.4	0.576
Ակտիվություն	0.569	-	3.2	0.593	-	-
Ոգևորվածություն/ հաճույք փնտրող	0.553	0.593	3.4	0.653	3.5	0.676
Կենսուրախություն	0.597	0.593	3.9	0.590	3.7	0.653
ԲԱՐՅԱՑԱԿԱՍՈՒԹՅՈՒՆ	0.797	0.835	3.4	0.385	3.3	0.466
Վստահություն	0.445	-	3.0	0.563	-	-
Շշմարտասիրություն	0.640	0.767	3.8	0.624	3.6	0.800

Մարդասիրություն	0.803	0.716	3.8	0.636	3.8	0.651
Համագործակցություն	0.378	0.529	3.3	0.566	3.2	0.664
Համեստություն	0.559	0.524	3.1	0.653	2.9	0.632
Կարեկցանք	0.601	0.647	3.5	0.591	3.2	0.565
ԲԱՐԵԽՂՈՒԹՅՈՒՆ	0.820	0.835	3.4	0.390	3.5	0.453
Ինքնադյուրմավետություն	0.507	0.555	3.3	0.455	3.4	0.540
Ճշտապահություն	0.659	0.661	3.6	0.689	3.5	0.685
Պարտաճանաչություն	0.544	0.641	3.6	0.608	3.6	0.688
Նպատակասլացություն	0.625	0.709	3.4	0.601	3.6	0.661
Կամքի ուժ	0.505	-	3.3	0.582	-	-
Զգուշավորություն	0.619	0.679	3.4	0.623	3.4	0.691
ՆԵՅՐՈՏԻԶՄ	0.856	0.852	3.0	0.478	3.1	0.529
Տագնապայնություն	0.635	0.676	3.1	0.692	3.0	0.693
Զայրույթ	0.781	0.757	3.2	0.829	3.3	0.802
Դեպրեսիվություն	0.640	0.651	3.2	0.691	3.2	0.711
Անաչկոտություն	0.575	0.631	3.1	0.691	3.1	0.676
Չափի զգացման պակաս	0.331	-	2.6	0.573	-	-
Խոցելիություն	0.595	0.604	2.9	0.627	2.8	0.688
ԼԱՅՆԱԽՈՂՈՒԹՅՈՒՆ	0.719	0.787	3.5	0.337	3.6	0.396
Երևակայություն	0.707	0.722	3.8	0.738	3.8	0.730
Արվեստասիրություն	0.662	0.727	3.7	0.660	3.7	0.650
Հուզականություն	0.453	0.555	3.7	0.528	3.7	0.559
Արկածախնդրություն	0.463	0.596	3.7	0.552	3.5	0.618
Ինտելեկտուալ ակտիվություն	0.410	0.506	3.3	0.569	3.4	0.558
Լիբերալիզմ	0.273	-	3.0	0.567	-	-

«Մեծ հնգյակ» հայալեզու հարցարանի սանդղակների վալիդությունը ստուգելու համար յուրաքանչյուր սանդղակի համար իրականացվել է հիմնական բաղադրիչների վերլուծություն (անգլ.՝ PCA կամ Principal component analysis), որտեղ դուրս բերվող գործոնների քանակը նշվել է 1: Ընդհանուր առմամբ իրականացվել է 30 մոդելների վերլուծություն: Ստացված մոդելները բացատրում են ամբողջի ցրվածության 23-68 %-ը, Կայզեր-Մայեր-Օլկինի գործակիցը մոդելից մոդել տատանվում է 0,493-0,806, որը համարվում է ընդունելի, Բարտլետի գործակցի նշանակալիության աստիճանը բոլոր մոդելների համար փոքր է 0,05-ից: Ինչ վերաբերում է ամեն սանդղակը կազմող պնդումներին, ապա դրանց գործոնային գործակիցները յուրաքանչյուր սանդղակում տատանվում են 0,4-0,8: Բոլոր 5 մեծ գործոնների ու 25 ենթագործոնների համար վերը նկարագրված գործակիցները ներկայացված են Աղյուսակ 1.4-ում:

Աղյուսակ 1.4

«Մեծ հնգյակը» չափող հայալեզու հարցարանի սանդղակների
գործոնային կառուցվածքը

ՆԵՅՐՈՏԻՉՄ					
	Տազմապայ- նություն	Զայրույթ	Դեպրեսի- վություն	Ամաչկո- տություն	Խոցելիու- թյուն
Նոր իրավիճակներում չեմ լարվում:	-.713				
Պահպանում եմ հանգստություն, երբ անե- լիքներս շատ են:	-.641				
Անսովոր իրավիճակնե- րում շփոթվում եմ:	.611				
Շուտ եմ հուզվում և նյար- դայնանում:	.532				
Չեմ անհանգստանում արդեն անցած բաների համար:	-.532				
Հեշտ եմ հունից դուրս գալիս:		.825			
Ինձ հեշտ է գայրացնել:		.797			
Հաճախ կորցնում եմ համբերությունս:		.772			
Հազվադեպ եմ բարկա- նում:		-.584			
Հազվադեպ եմ վրդով- վում:		-.508			
Հաճախակի եմ ունենում տրամադրության անկում- ներ:			.765		
Հաճախ եմ ունենում հու- սահաստության զգացում:			.762		
Հաճախ ինձ ուժասպառ եմ զգում:			.741		
Հիմնականում ինձնից գոհ եմ:			-.442		
Հազվադեպ եմ տխրում:			-.414		
Անհանգստանում եմ, թե ուրիշները ինչ կմտածեն իմ մասին:				.753	
Վախենում եմ, որ ինչ-որ սխալ, քննադատելի բան կանեմ:				.752	

Վախենում եմ ուշադրության կենտրոնում հայտնվելուց:				.523	
Ինձ հարմարավետ եմ զգում միայն ընկերներիս միջավայրում:				.426	
Չեմ շփոթվում ուրիշների ներկայությամբ խոսելիս:				-.378	
Հանգիստ եմ նույնիսկ լարված իրավիճակներում:					-.745
Կարողանում եմ գլուխ հանել բարդ իրավիճակներից:					-.634
Վստահորեն հաղթահարում եմ անհաջողություններս:					-.619
Հաճախ չեմ կարողանում մտքերս հավաքել:					.546
Հեշտությամբ եմ խուճապի մատնվում:					.528
ԷՔՍՏՐԱՎԵՐՏՈՒԹՅՈՒՆ					
	Ընկերասիրություն	Մարդամոտություն	Հաստատակամություն	Ստիմուլյացիա	Կենսուրախություն
Ինձ լավ եմ զգում մարդկանց շրջապատում:	.761				
Հեշտ եմ ընկերանում:	.760				
Արագ եմ ստեղծում մտերիմ հարաբերություններ:	.690				
Ինձ հեռու եմ պահում մարդկանցից:	-.672				
Խուսափում եմ նոր ծանոթություններից:	-.535				
Միքում եմ մեծ խնջույքներ:		.855			
Խնջույքների ժամանակ շփվում եմ շատ մարդկանց հետ:		.802			
Հաճույք եմ ստանում շատ մարդկանց շրջապատում լինելուց:		.767			
Խուսափում եմ մարդաշատ վայրերից:		-.733			

Մեծ խնջույքների ժամանակ նախընտրում եմ մեկուսանալ:		-.693			
Սովորաբար նախընտրում եմ ստվերում մնալ:			-.777		
Սովորաբար չեմ արտահայտում իմ կարծիքը:			-.746		
Սպասում եմ, որ մեկ ուրիշը նախաձեռնություն ցուցաբերի:			-.678		
Հիմնականում նախաձեռնությունը վերցնում եմ իմ ձեռքը:			.240		
Հաճախ եմ մյուսներին ուղղություն ցույց տալիս:			.206		
Միրում եմ սուր զգացողություններ:				.667	
Հաճախ եմ խենթ բաներ անում:				.647	
Միրում եմ ցանկացած նոր բան գոհնեմի անգամ փորձել:				.641	
Երբեք չեի թռչի դելտապլանով կամ պարաշյուտով:				-.558	
Հեռու եմ մնում վտանգավոր տեղերից:				-.548	
Տեսնում եմ կյանքի պայծառ կողմը:					.718
Միրում եմ կյանքը:					.714
Կարողանում եմ երեխայի պես զվարճանալ:					.643
Ուրախություն եմ սփռում շուրջս:					.634
Հազվադեպ եմ կատակներ անում:					-.361
ԼԱՅՆԱԽՈՀՈՒԹՅՈՒՆ					
	Երևակայություն	Արվեստասիրություն	Հուզականություն	Արկածախնդրություն	Ինտելեկտուալ ակտիվություն
Գրեթե չունեմ երևակայելու ունակություն:	-.836				

Երևակայության ազատություն չեմ տալիս:	-.818				
Հազվադեպ եմ երագում:	-.726				
Տրվում եմ երևակայությանը:	.456				
Ունեմ վառ երևակայություն:	.438				
Վայելում եմ բնության գեղեցկությունը:		.720			
Արվեստն ինձ համար կարևոր է:		.674			
Չեմ սիրում պատկերասրահներ այցելել:		-.667			
Նկատում եմ գեղեցիկն այնտեղ, որտեղ ուրիշները կարող են չտեսնել:		.608			
Չեմ սիրում պոեզիա:		-.484			
Զգտում եմ հասկանալ իմ ապրումները:			.752		
Սիրում եմ ուսումնասիրել ինձ և իմ կյանքը:			.685		
Կարողանում եմ զգալ մյուսների հույզերը:			.559		
Արտահայտում եմ իմ հույզերն ու զգացմունքները:			.483		
Չեմ կարողանում արտահայտել զգացմունքներս:			-.242		
Չեմ սիրում փոփոխություններ:				-.807	
Կյանքում գերադասում եմ բազմազանությունը միօրինակությունից:				.662	
Սիրում եմ այցելել արտասովոր վայրեր:				.606	
Չեմ սիրում փորձել նոր իրեր, ճաշատեսակներ:				-.603	
Սովորության մարդ եմ:				-.257	
Սիրում եմ լուծել բարդ խնդիրներ:					.793
Կարող եմ մեծ ծավալով տեղեկատվություն յուրացնել:					.746
Խուսափում եմ բարդ բաներ կարդալուց:					-.505

Սիրում եմ կարդալ լուրջ գրականություն:					.416
Չեմ սիրում կոնկրետ խնդիրներին չառնչվող, վերացական քննարկումները:					.203
ԲԱՐՅԱՅԱԿԱՄՈՒԹՅՈՒՆ					
	Ճշմարտասիրություն	Մարդասիրություն	Համագործակցություն	Համեստություն	Կարեկցանք
Կարելի է դիմել խաբեության՝ առաջ գնալու համար:	-.843				
Օգտագործում եմ մարդկանց լավ վերաբերմունքն իմ հանդեպ՝ ուզածիս հասնելու համար:	-.830				
Օգտվում եմ մարդկանց միամտությունից:	-.786				
Գիտեմ, թե ինչպես շրջանցել օրենքը:	-.656				
Պահպանում եմ ընդունված վարքականոցները:	.260				
Ուշադիր եմ մյուսների կարիքների հանդեպ:		.757			
Մտահոգվում եմ ուրիշների խնդիրներով:		.740			
Սիրում եմ օգնել մարդկանց:		.725			
Անտարբեր եմ ուրիշների հոգսերի հանդեպ:		-.691			
Ուրիշներին օգնելու ժամանակ չունեմ:		-.464			
Քեմ պահող եմ:			-.739		
Դժվարությամբ եմ ներում:			-.596		
Չեմ սիրում իմ կարծիքը պարտադրել ուրիշներին:			.566		
Չեմ սիրում վիճաբանել:			.490		
Առաջնահերթությունը տալիս եմ իմ անձնական շահին:			-.472		

Հաճախ են պարծենում իմ արժանիքներով:				-674	
Կարծում եմ, որ ես մյուս- ներից առավել եմ շատ ա- ռումներով:				-621	
Սիրում եմ արտահայտել իմ կարծիքը:				-586	
Չեմ սիրում ուշադրու- թյան կենտրոնում լինել:				.522	
Չեմ սիրում խոսել իմ մա- սին:				.508	
Կարեկցում եմ ինձնից վատ վիճակում գտնվող- ներին:					.833
Կարեկցում եմ անտուն մարդկանց:					.767
Չեմ սիրում գթասիրտ մարդկանց:					-.436
Տանել չեմ կարողանում խեղճ մարդկանց:					-.410
Կարծում եմ, որ յուրա- քանչյուրն ինքը պետք է իր մասին հոգ տանի:					-.311
ԲԱՐԵՆՂՃՈՒԹՅՈՒՆ					
	Ինքնարդյու- նավետություն	Ճշտապա- հություն	Պարտա- ճանաչու- թյուն	Նպա- տակա- լացու- թյուն	Զգուշավո- րություն
Գիտեմ ինչպես գործել և վարվել:	.821				
Առաջադրանքները հաջո- ղությամբ եմ կատարում:	.741				
Իմ գործերում հիմնակա- նում ձախողումներ չեմ ունենում:	.568				
Կարողանում եմ լավ լու- ծումներ գտնել:	.543				
Իրավիճակը գնահատե- լիս կարող եմ սխալվել:	-.239				
Պարտադիր չէ, որ ամեն ինչ իր տեղում դրված լինի:		-.796			
Թափթփվածությունը ինձ չի անհանգստացնում:		-.792			

Հաճախ մոռանում եմ իրերը դնել իրենց տեղը:		-.680			
Սիրում եմ կարգուկանոն:		.564			
Սիրում եմ գործել ըստ պլանի:		.210			
Հաճախ չեմ պահում խոստումներս:			-.750		
Հաճախ քերանում եմ իմ պարտականություննե- րում:			-.725		
Հաճախ չեմ հետևում կա- նոններին:			-.722		
Չեմ սիրում ուշանալ:			.489		
Վճարումները ժամանա- կին եմ կատարում:			.422		
Եռանդով եմ աշխատում:				.790	
Խոսքից անմիջապես անցնում եմ գործի:				.765	
Ամբողջությամբ տարվում եմ նպատակներիս իրա- կանացմամբ:				.711	
Անում եմ ավելին, քան ինձանից սպասվում է:				.706	
Բարձր պահանջներ եմ դնում իմ և ուրիշների առջև:				.376	
Առանց երկար մտածելու որոշումներ եմ կայաց- նում:					-.785
Գործում եմ առանց մտածե- լու:					-.723
Մի բան սկսելուց առաջ երկար ծանրութեթև եմ անում:					.689
Գործում եմ հնարավորինս զգույշ, որպեսզի չսխալվեմ:					.531
Հաճախ որոշումներս վերջին պահին եմ ընդու- նում:					-.507

ՀԱՐՑԱՐԱՆԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հարցարանը բաղկացած է 125 պնդումից: Հինգ մեծ գծերից յուրաքանչյուրը չափվում է 25 պնդումով: Բացի 5 հիմնական գծերից՝ չափվում է նաև 25 ենթագիծ՝ ամեն մեծ գործոնի համար 5 ենթագործոն: Դրանցից յուրաքանչյուրի համար նախատեսաված է 5 պնդում: Պնդումներից յուրաքանչյուրի համար մասնակիցը պետք է նշի, թե ինչ չափով է համաձայն դրան: Համաձայնության աստիճանը չափվում է հինգմիավորանոց սանդղակով, որտեղ 1 թիվը նշանակում է, որ «ընդհանրապես համաձայն չեմ», 2-ը՝ «համաձայն չեմ», 3-ը՝ «ոչ համաձայն եմ, ոչ համաձայն չեմ», 4-ը՝ «համաձայն եմ», իսկ 5-ը՝ «միանշանակ համաձայն եմ»: Հարցարանի հիմնական սանդղակներն են նեյրոտիզմ (տագնապայնություն, զայրույթ, դեպրեսիվություն, ամաչկոտություն, խոցելիություն), էքստրավերտություն (ընկերասիրություն, հաստատակամություն, մարդամոտություն, սոսիալյացիա, կենսուրախություն), լայնախոհություն (երևակայություն, արվեստասիրություն, հուզականություն, արկածախնդրություն, ինտելեկտուալ ակտիվություն), բարյացակամություն (ճշմարտասիրություն, մարդասիրություն, համագործակցություն, համեստություն, կարեկցանք), բարեխղճություն (ինքնարդյունավետություն, ճշտապահություն, պարտաճանաչություն, նպատակասլացություն, զգուշավորություն):

Արդյունքների հաշվարկը և մեկնաբանությունը

Ըստ մեթոդիկայի բանալու՝ հաշվարկվում է յուրաքանչյուր գծի և ենթագծի ընդհանուր միավորը: Ուղիղ պնդումներին տրվում են պատասխանի տարբերակի թվին համարժեք, իսկ հակադարձ պնդումներին (բանալիում հարցի համարի կողքին նշված է R տառը)՝ պատասխանի տարբերակի թվին հակառակ միավորներ: Տվյալ գործոնի համար արդյունքը հաշվարկվում է ըստ բանալու բոլոր պնդումների միավորների միջին թվաբանականի: Պատասխանների տարբերակներին տրվող միավորները ուղիղ և հակառակ հարցերի դեպքում ներկայացված են Աղյուսակ 1.6-ում:

Աղյուսակ 1.5

Ուղիղ և հակադարձ պնդումներին համապատասխանող միավորները

Պատասխանի տարբերակներ	Ուղիղ հարցերի միավորներ	Հակառակ հարցերի միավորներ
ընդհանրապես համաձայն չեմ	1	5
համաձայն չեմ	2	4
չեզոք եմ (ոչ համաձայն եմ, ոչ համաձայն չեմ)	3	3
համաձայն եմ	4	2
միանշանակ համաձայն եմ	5	1

«Մեծ հնգյակ» անձնային գծերի հարցարանի բանալի

Սանդղակներ	Հարցի համարը
Էքստրավերտություն	2, 27, 52, R77, R102, 6, 31, 56, R81, R106, 11, 36, R61, R86, R111, 20, 45, 70, R95, R120, 23, 48, 73, 98, R123
Ընկերասիրություն	2, 27, 52, R77, R102
Մարդամոտություն	6, 31, 56, R81, R106
Հաստատակամություն	11, 36, R61, R86, R111
Ստիմուլյացիա	20, 45, 70, R95, R120
Կենսուրախություն	23, 48, 73, 98, R123
Բարյացակամություն	8, R33, R58, R83, R108, 13, 38, 63, R88, R113, 17, 42, R67, R92, R117, 22, 47, R72, R97, R122, 24, 49, R74, R99, R124
Դժարտասիրություն	8, R33, R58, R83, R108
Մարդասիրություն	13, 38, 63, R88, R113
Համագործակցություն	17, 42, R67, R92, R117
Համեստություն	22, 47, R72, R97, R122
Կարեկցանք	24, 49, R74, R99, R124
Բարեխղճություն	4, 29, 54, 79, R104, 9, 34, R59, R84, R109, 14, 39, R64, R89, R114, 18, 43, 68, 93, 118, 25, 50, R75, R100, R125
Ինքնարդյունավետություն	4, 29, 54, 79, R104
Դժտապահություն	9, 34, R59, R84, R109
Պարտաճանաչություն	14, 39, R64, R89, R114
Նպատակասլացություն	18, 43, 68, 93, 118
Զգուշավորություն	25, 50, R75, R100, R125
Նեյրոտիզմ	1, 26, R51, R76, R101, 5, 30, 55, R80, R105, 10, 35, 60, R85, R110, 15, 40, 65, 90, R115, 19, 44, R69, R94, R119
Տագնապայնություն	1, 26, R51, R76, R101
Զայրույթ	5, 30, 55, R80, R105
Դեպրեսիվություն	10, 35, 60, R85, R110
Ամաչկոտություն	15, 40, 65, 90, R115
Խոցելիություն	19, 44, R69, R94, R119
Լայնախոհություն	3, 28, R53, R78, R103, 7, 32, 57, R82, R107, 12, 37, 62, 87, R112, 16, 41, R66, R91, R116, 21, 46, 71, R96, R121
Երևակայություն	3, 28, R53, R78, R103
Արվեստասիրություն	7, 32, 57, R82, R107
Հուզականություն	12, 37, 62, 87, R112
Արկածախնդրություն	16, 41, R66, R91, R116
Ինտելեկտուալ ակտիվություն	21, 46, 71, R96, R121

Յուրաքանչյուր սանդղակի ընդհանուր միավորը հաշվարկելու համար այդ սանդղակի բոլոր պնդումների ստացված միավորներից հանվում է միջին քվաբանական: Յուրաքանչյուր սանդղակի արտահայտվածության ցուցանիշը պետք է լինի 1-5-ն ընկած թիվ (հնարավոր է նաև ոչ ամբողջ թիվ):

ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Էքստրավերտություն (Extraversion)

Էքստրավերտիան բնութագրում է արտաքին աշխարհի հետ հարաբերություններում ներգրավվածության աստիճանը: Էքստրավերտները սիրում են լինել մարդկանց միջավայրում, լի են էներգիայով և հաճախ են ունենում դրական հույզեր: Նախաձեռնող են, գործունյա, բաց չեն թողնում զվարճանալու հնարավորությունը: Մարդկանց մեջ նրանք սիրում են խոսել, դրսևորել իրենց, ուշադրություն գրավել իրենց նկատմամբ:

Ինտրովերտները (էքստրավերտիայի գործոնով ցածր միավորներ ունեցողները) ունեն էներգիայի, նախաձեռնողականության, ակտիվության պակաս արտահայտվածություն, քան էքստրավերտները: Նրանք ավելի հանգիստ են, աչքի չընկնող, ինքնավերլուծող, սոցիալական աշխարհից մեկուսացած: Սոցիալական ներգրավվածության ցածր աստիճանը չպետք է հասկացվի որպես ամոթխածություն կամ դեպրեսիա: Ինտրովերտը կարիք ունի ավելի քիչ խթանման, քան էքստրավերտը, և նախընտրում է միայնությունը: Ինտրովերտի անկախությունն ու զսպվածությունը երբեմն շփոթում են ընկերասիրության բացակայության կամ գոռոզության հետ: Իրականում, եթե ինտրովերտը բարձր ցուցանիշներ ունի բարյացակամություն/համերաշխություն գործոնի դեպքում, ապա նա չի փնտրի այլ մարդկանց ընկերակցությունը, բայց շատ բարյացակամ կլինի, եթե նրա հետ մտերմանան:

Բարյացակամություն (Agreeableness)

Բարյացակամության գործոնը ցույց է տալիս համագործակցության ու համերաշխության անհատական տարբերությունները: Բարյացակամ անհատները կարևորում են ուրիշների հետ հարմարվելը: Նրանք նրբանկատ են, ընկերասեր, մեծահոգի, պատրաստ են օգնելու և զիջելու: Բարյացակամ մարդիկ ունեն նաև լավատեսական մոտեցում մարդկային բնույթին. նրանք հավատում են, որ մարդիկ հիմնականում անկեղծ են, բարոյական և վստահելի: Այս գործոնի ցածր ցուցանիշներ ունեցող մարդիկ (անբարյացակամ) իրենց շահերը վեր են դասում մյուսների հետ հարմարվելու անհրաժեշտությունից: Նրանք սովորաբար անտարբեր են մյուսների բարեկեցության նկատմամբ,

հետևաբար հակված չեն իրենց նեղություն տալ՝ մյուսներին հարմարվելու համար: Երբեմն մարդկանց հանդեպ նրանց կասկածամտությունը ստիպում է նրանց զգուշավոր, անբարյացակամ ու անհամագործակցող լինել: Բարյացակամ մարդիկ ավելի մեծ հավանության են արժանանում շրջապատի կողմից, քան անբարյացակամ մարդիկ: Մյուս կողմից, բարյացակամությունը խանգարում է այն իրավիճակներում, երբ կա խիստ կամ բացարձակ որոշումներ կայացնելու անհրաժեշտություն: Անբարյացակամ մարդիկ կարող են լինել շատ լավ գիտնականներ, քննադատներ կամ զինվորականներ:

Բարեխղճություն (Conscientiousness)

Բարեխղճությունը ցույց է տալիս, թե ինչպես ենք մենք կարգավորում, վերահսկում և ուղղորդում մեր ազդակները, մղումները: Իմպուլսիվ գործելը ոչ միշտ է սխալ, հաճախ ժամանակային սուղ սահմանները մեզ ստիպում են ընդունել արագ որոշումներ, և գործելով մեր առաջին իմպուլսով՝ մենք կարող ենք տալ արդյունավետ հակազդում: Նաև ի տարբերություն աշխատանքի՝ ժամանցի ժամանակ ինքնաբերական ու իմպուլսիվ գործելը կարող է զվարճանք պատճառել: Սակայն, մյուս կողմից, իմպուլսիվ գործելը կարող է հանգեցնել տարբեր խնդիրների: Որոշ իմպուլսներ հակասոցիալական են: Չվերահսկվող հակասոցիալական գործողությունները ոչ միայն վնասում են հասարակության այլ անդամներին, այլ նաև հանգեցնում են այդ գործողությունները կատարողի պատժին: Իմպուլսիվ գործողությունները տալիս են անմիջական արդյունք՝ հաճույքի տեսքով, բայց ունենում են տևական, հաճախ ոչ ցանկալի հետևանքներ, օրինակ՝ իմպուլսիվ արարքների հետևանքով աշխատանքի կամ նշանակալի հարաբերությունների կորուստ, հոգեակտիվ նյութերի օգտագործում, ինչը բերում է առողջության վատթարացման:

Իմպուլսիվ վարքագիծը, նույնիսկ երբ դեստրուկտիվ չէ, նշանակալիորեն ազդում է գործունեության արդյունավետության վրա: Իմպուլսիվ գործելը թույլ չի տալիս դիտարկել գործողության/արարքի այլընտրանքային տարբերակները, որոնց մի մասը կարող են ավելի խելամիտ լինել, քան իմպուլսիվ տարբերակը: Իմպուլսիվ մարդիկ նաև հեշտությամբ շեղվում են այնպիսի գործունեությունից, որը պահանջում է հստակ ընթացակարգ: Այդ իսկ պատճառով իմպուլսիվ անհատի կատարողականությունը ցածր է և ոչ արդյունավետ:

Բարեխղճությունը ցույց է տալիս գործելուց առաջ հետազա հետևանքների մասին մտածելու ունակությունը: Բարեխղճությունը բնորոշվում է հեռահար նպատակներ դնելու, այդ նպատակներին հասնելու քայլերը ծրագրելու ու այդ ծրագրերի իրականացմանը համառոտ հետամուտ լինելու կարողությամբ՝ չտրվելով կարճատև իմպուլսների ազդեցությանը: Գիտակցվածու-

քյան գործոնի բարձր ցուցանիշները մաս վկայում են անձի շրջահայացության մասին: Գիտակցվածության գործոնի բարձր ցուցանիշներ ունեցող անհատները սովորաբար լուրջ խնդիրների մեջ չեն ընկնում և ունենում են նշանակալի ձեռքբերումներ նպատակային պլանավորման, շրջահայացության ու համառության շնորհիվ: Ուրիշները նրանց համարում են խելացի ու հուսալի: Մյուս կողմից, նրանք կարող են լինել կոմպուլսիվ պերֆեկցիոնիստներ (կատարելության սեռում ձգտում) և աշխատամոլներ: Ծայրահեղ դրսևորմամբ այս գիծը մարդուն դարձնում է ձանձրալի ու անհետաքրքիր:

Գիտակցվածության գործոնի ցածր ցուցանիշներով մարդիկ համարվում են անհուսալի, հավակնություններ չունեցող, անհաջողակ, բայց նրանք կյանքում ունենում են բազմաթիվ կարճատև հաճույքներ և մյուսների կողմից ընկալվում են որպես պայծառ, ուրախությամբ լի ու խենթ:

Նեյրոտիզմ (Neuroticism)

Նեյրոտիզմը բնութագրում է բացասական հույզեր ունենալու հակվածությունը: Նեյրոտիզմի բարձր ցուցանիշներով մարդիկ կարող են ունենալ հիմնականում մեկ բացասական հույզի գերակայում, օրինակ՝ զայրույթ, տագնապ կամ դեպրեսիա, բայց ավելի հավանական է, որ կունենան այս հույզերից մի քանիսի միաժամանակյա արտահայտվածություն: Նրանք հուզականորեն են հակազդում այն իրադարձություններին, որոնք այլ մարդկանց չեն հուզում, և նրանց հակազդումները ավելի ինտենսիվ են, քան նորմալում: Նրանք հակված են սովորական իրավիճակները համարել սթրեսային և նվազագույն խոչընդոտները ընկալել որպես ծայրահեղ անհույս դժվարություններ: Նրանց բացասական հուզական հակազդումները հակված են լինել սովորականից ավելի տևական, ինչով պայմանավորված է նրանց վատ տրամադրությունը: Սա կարող է սահմանափակել հստակ մտածելու, որոշումներ կայացնելու և սթրեսները հաղթահարելու ունակությունը:

Նեյրոտիզմի ցածր ցուցանիշներ ունեցող անհատները ավելի ուշ են հուսահատվում և հուզականորեն պակաս արձագանքող են: Նրանք հակված են լինել հանգիստ, հուզականորեն կայուն և չունեն տևական բացասական հույզեր: Բացասական հույզեր չունենալը չի նշանակում, որ նեյրոտիզմի ցածր ցուցանիշներով անհատները մշտապես ապրում են դրական հույզեր. դրական հույզերի հաճախականությունը պայմանավորված է էքստրավերսիայի գործոնով:

Լայնախոսություն (Openness)

Փորձին բաց լինելը բնութագրում է մտածողության ոճը (cognitive style)՝ տարբերակելով վառ երևակայություն ունեցող, ստեղծարար մարդկանց ավելի պրագմատիկ, պահպանողական մտածող մարդկանցից: Լայնախոս, բաց մարդիկ ունեն ճանաչողական/ինտելեկտուալ հետաքրքրասիրություն, սիրում են արվեստը և անտարբեր չեն գեղեցիկի նկատմամբ: Ի տարբերություն ոչ լայնախոս մարդկանց՝ նրանք ավելի լավ են ճանաչում սեփական զգացմունքները, հակված են մտածել և գործել անհատական/օրիգինալ, մեծամասնությունից տարբերվող ձևով: Ինտելեկտուալ մարդիկ սովորաբար բարձր ցուցանիշներ են ունենում լայնախոսության գործոնից, ինտելեկտուալությունը համարվում է լայնախոսություն գործոնի ենթագծերից մեկը: Սակայն չպետք է շփոթել ինտելեկտուալությունը ինտելեկտի գործակցի՝ IQ-ի հետ. հետազոտությունները ցույց են տալիս, որ լայնախոսության գործոնի ցուցանիշները քիչ են առնչվում կրթական մակարդակի ու ստանդարտ ինտելեկտի քեստերի IQ-ի գործակցի ցուցանիշներին:

Բաց մտածողության մի այլ բնութագիրը կոնկրետ փորձից վերացարկված սիմվոլներով և արատրակցիաներով մտածելու ունակությունն է: Կախված անհատի սպեցիֆիկ ինտելեկտուալ կարողություններից՝ այս սիմվոլիկ ճանաչողությունը կարող է դրսևորվել մաթեմատիկական, տրամաբանական, կամ երկրաչափական մտածողության, խոսքի պատկերավոր կամ մետաֆորիկ կիրառության, երաժշտության ստեղծագործման կամ կատարման, կամ արվեստի այլ ձևերում: Լայնախոսության գործոնի ցածր ցուցանիշներ ունեցող անձինք հակված են ունենալ նեղ, սովորական հետաքրքրություններ: Նրանք նախընտրում են պարզ, դյուրին ու ակնհայտ բարդից, երկակիից ու նրբաճաշակից: Նրանք կասկածով են վերաբերվում արվեստին ու գիտությանը՝ դրանք համարելով անհասկանալի կամ ոչ կիրառական: Ոչ լայնախոս անձինք նախընտրում են ծանոթը, հայտնին նորույթից, պահպանողական են և չեն սիրում փոփոխություններ:

ԵՆԹԱԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԷՔՍՏՐԱՎԵՐՏՈՒԹՅՈՒՆ

E1 Ընկերասիրություն (Friendliness)

Այս որակից բարձր արդյունքներ ունեցող անձինք շատ արագ են մտերմանում մարդկանց հետ, խիստ կարևորում են մարդկանց շրջապատում լինելը, ջերմ հարաբերություններ ունենալը: Իրապես սիրում են մարդկանց և արտահայտում իր դրական զգացմունքները նրանց նկատմամբ: Այս որակի

ցածր մակարդակը կարող է խոչընդոտել կյանքի տարբեր ոլորտներում միջանձնային հարաբերությունների կայացմանն ու պահպանմանը:

E2 Մարդամոտություն (Gregariousness)

Այս գործոնից բարձր արդյունքներ ունեցող անձինք մարդկանց շրջապատում գտնվելուց հաճույք են ստանում: Նրանց դուր է գալիս, երբ մարդիկ կամ խումբը, որտեղ և որոնց շրջապատում ինքը գտնվում է, հիանում է իրենով:

Ցածր արդյունքներով անձինք խուսափում են մեծ քանակությամբ մարդկանց մեջ լինելուց, քանի որ այնտեղ իրենց ընկճված են զգում: Դա չի նշանակում, որ նրանք չեն սիրում լինել մարդկանց շրջապատում, ուղղակի այս տիպի մարդկանց հաճախ առանձին լինելու ցանկությունն ավելի մեծ է, քան բարձր արդյունքների դեպքում:

E3 Հաստատակամություն (Assertiveness)

Այս որակի վառ արտահայտվածությունը կարող է հանգեցնել մյուսների կարծիքի անտեսմանը: Իրավիճակի վերահսկողությունն իր ձեռքն է վերցնում, վստահորեն գործում է իր նպատակների իրականացման ուղղությամբ: Միշտ արտահայտում է իր կարծիքը և ուղղորդում մյուսներին: Ունի լիդերի վառ արտահայտված ունակություններ: Այս որակի ցածր արտահայտվածությունը կարող է հանգեցնել անհամարձակ գործելաոճի:

E4 Ոգևորվածություն, հաճույք փնտրող (Excitement-Seeking)

Բարձր արտահայտվածությամբ անձինք շատ են սիրում սուր զգացողություններ ու բուռն ապրումներ ունենալ և դիմում են ռիսկի: Խանդավառվում են նոր տպավորություններից, ինչի հետևանքով կարող են չմտածված արարքներ գործել: Ցածր արտահայտվածության դեպքում չեն սիրում զնալ ռիսկի, սուր զգացողություններ ունենալ, բուռն ապրումներ ունենալ, ինչի հետևանքով ցուցաբերում են զգուշավոր ու զգոն վարքագիծ:

E5 Կենսուրախություն (Cheerfulness)

Տվյալ սանդղակը ցույց է տալիս անձի դրական տրամադրությունն ու զգացմունքները, այլ ոչ թե բացասական հույզերը, որոնք նեյրոտիզմի մասն են կազմում: Բարձր արդյունքներ ունեցող անձանց բնորոշ է դրական ապրումների շատ լայն սպեկտր, որը ներառում է ուրախությունը, լավատեսությունը, երջանկությունը և այլն: Ցածր արդյունքներ ունեցող անձինք հակված չեն այդ աստիճան բարձր աստիճանի ոգևորության ու եռանդի:

ՆԵՅՐՈՏԻՉՄ

N1 Տազնապալնություն (Anxiety)

Բարձր արտահայտվածության դեպքում անհանգստանում է ամեն մի առիթով, շատ տազնապալում է անսովոր իրավիճակներում, ունենում է մտավախություն, որ կարող է վատ բան պատահել իր ու իր մտերիմների հետ, դյուրագրգիռ է, ինչի հետևանքով բավականին հաճախ կարող է կորցնել ինքնատիրապետումը և թույլ տալ սխալներ: Ցածր արտահայտվածության դեպքում չի անհանգստանում ամեն մի առիթով, չի տազնապալում և մնում է հանգիստ նոր, անսովոր ու նույնիսկ շատ լարված իրավիճակներում: Չունի անհանգստացնող, վախեցնող մտքեր: Առանձին դեպքերում տվյալ որակի ցածր արտահայտվածությունը կարող է հանգեցնել ուժերի ոչ բավականաչափ լարմանը պատասխանատու իրավիճակներում:

N2 Ձայրույթ (Anger)

Բարձր արտահայտվածությունը հաճախ կարող է հանգեցնել սուր կոնֆլիկտների միջանձնային հարաբերություններում: Ունենում է զայրույթի պոռթկումներ, երբ իրադարձությունները չեն ընթանում իրենց հունով: Չգայուն է, երբ արժանանում է անարդար վերաբերմունքի և շատ է վրդովվում ու չարանում, երբ իրեն խաբված է զգում: Ցածր արտահայտվածությունը հաճախ կարող է հանգեցնել սեփական դիրքի թուլության ու զիջողականության: Լիովին կառավարում է իր վրդովմունքն ու դժգոհությունը, զայրույթի պոռթկումներ չի ունենում, երբ իրադարձությունները չեն ընթանում իրենց հունով:

N3 Գեարեսիվություն (Depression)

Սանդղակը չափում է տխուր, ընկճված, հուսալքված զգալու հակվածությունը: Բարձր արտահայտվածության աստիճան ունեցող անձինք հիմնականում տխուր են, իրենց միայնակ ու ընկճված են զգում, էներգիայի ու նախաձեռնողականության պակաս ունեն: Ցածր արդյունքները, ընդհակառակը, ցույց են տալիս, որ հակված չեն ունենալ մեծ դեպրեսիվ ապրումներ:

N4 Ամաչկոտություն (Self-Consciousness)

Բարձր արտահայտվածությամբ անձինք զգայուն են այն ամենի նկատմամբ, թե ինչ կարծիք ունեն շրջապատի մարդիկ իրենց մասին: Նրանց մտահոգությունն այն մասին, որ կարող են իրենց ծաղրել կամ մերժել շրջապատի մարդիկ, նպաստում է, որ մարդկանց մեջ ամաչեն ու անհարմարավետություն զգան: Նրանց անհանգստությունն ու վախը, որ ուրիշները կարող են իրենց քննադատել կամ ծաղրի ենթարկել, չափազանցված են և իրականությանը չեն

համապատասխանում: Սակայն նման անձանց անճարությունն ու անհանգստությունը կարող են այս վախերը իրենք իրենց համար դարձնել լիովին իրագործելի:

Ցածր արդյունքների դեպքում, ընդհակառակը, չեն տանջվում այն սխալ տպավորությունից, թե բոլորի ուշադրության կենտրոնում են, և բոլորը քննադատում են իրենց: Նրանք լարվածություն չեն զգում հասարակության մեջ: Նրանց ինքնագիտակցության մակարդակը բարձր է:

N5 Խոցելիություն (Vulnerability)

Որակի բարձր արտահայտվածությունը հանգեցնում է գործունեության մեջ անվստահության ու սխալների: Խուճապի է մատնվում և շփոթվում է անսովոր, լարված, իրավիճակներում, չի կողմնորոշվում ու չի կարողանում հաղթահարել դժվարությունները՝ ունենալով անօգնականության զգացում: Որակի ցածր արտահայտվածությունը խոսում է բարձր սթրեսակայունության ու լարված պայմաններում աշխատելու ունակության մասին: Անսովոր իրավիճակներում խուճապի չի մատնվում և կարողանում է պահպանել վստահությունը, կողմնորոշվել, կշռադատել լարված իրավիճակներում:

ԼԱՅՆԱԽՈՀՈՒԹՅՈՒՆ

O1 Երևակայություն (Imagination)

Բարձր արդյունքների դեպքում ունի վառ երևակայություն, նորարարական գաղափարներ, որոնք ծառայեցնում է կյանքի միօրինակությունը ավելի հետաքրքիր դարձնելուն: Չի կառչում փաստերից ու կարծրատիպային լուծումներից, այլ ազատություն է տալիս մտքին:

Ցածր արտահայտվածության դեպքում չունի վառ երևակայություն, նորարարական գաղափարներ, իրականության ընկալման ու գնահատման համար հիմնվում է միայն եղած փաստերի վրա՝ ազատություն չտալով մտքի թռիչքին:

O2 Արվեստասիրություն (Artistic Interests)

Բարձր արտահայտվածությամբ անձինք սիրում են գեղեցիկը և՛ արվեստում, և՛ բնության մեջ: Նրանք հեշտությամբ ներգրավվում և ամբողջությամբ տարվում են մշակութային, բնության հետ կապ ունեցող տարբեր միջոցառումներով: Պարտադիր չէ, որ նրանք ունենան արվեստաբանական կրթություն կամ տաղանդավոր լինեն, չնայած շատերը կարող էին լինել: Ցածր արդյունքներ հավաքած անձինք այնքան էլ էսթետիկորեն զգայուն չեն և հետաքրքրված չեն արվեստով:

O3 Հուզականություն (Emotionality)

Բարձր արտահայտվածության դեպքում շատ հետաքրքրված է ուրիշների ներաշխարհը հասկանալու հարցով, միշտ ձգտում է գիտակցել ու հասկանալ սեփական զգացմունքները և ուսումնասիրել մարդկանց: Լավ է հասկանում սեփական և այլ մարդկանց ապրումները:

Ցածր արտահայտվածության դեպքում գրեթե չի հետաքրքրվում ուրիշների ներաշխարհով, ունակ չէ ներթափանցելու և զգալու ուրիշների ու սեփական անձի ապրումները:

O4 Արկածախնդրություն (Adventurousness)

Բարձր արտահայտվածության դեպքում շարունակ ձգտում է նոր բաներ փորձել, գործողություններ ձեռնարկել, սիրում է փոփոխություններ և ձգտում է փոխել կյանքի միօրինակ ընթացքը, խուսափում է միապաղաղությունից, ինչ էլ կարող է հանգեցնել արկածախնդրության:

Ցածր արտահայտվածության դեպքում գրեթե միշտ խուսափում է փոփոխություններից և սիրում է գործել ծանոթ ճանապարհով: Չի սիրում նորույթ. նախընտրում է պահպանել ամեն ինչ այնպես, ինչպես կա՝ առանց փոփոխությունների, ինչը կարող է հանգեցնել գործելաոճի ու կյանքի ոճի կարծրատիպականացմանը:

O5 Ինտելեկտուալ ակտիվություն (Intellect) (Այս գործոնը ցույց է տալիս ոչ թե ինտելեկտուալ կարողությունը, այլ անձի ինտելեկտուալ ոճը:)

Բարձր արդյունքների դեպքում ունի արտահայտված ճանաչողական ակտիվություն, սիրում է զբաղվել բարդ մտավոր գործունեությամբ, սիրում է խորհել բարդ գաղափարների մասին («խաղալ գաղափարների հետ»), բանավիճել ինտելեկտուալ տարբեր խնդիրների շուրջ:

Ցածր արդյունքների դեպքում ճանաչողական ակտիվությունը արտահայտված չէ, իրեն չի ծանրաբեռնում բարդ մտավոր գործունեությամբ, հակված չէ խորհել կամ բանավիճել ինտելեկտուալ տարբեր խնդիրների շուրջ:

ԲԱՐՅԱՑԱԿԱՄՈՒԹՅՈՒՆ

A1 Ճմարտասիրություն (Morality)

Բարձր արտահայտվածությամբ անձինք մարդկանց հետ շփվելիս կեղծավորության ու մանիպուլյացիաների կարիք չեն տեսնում, ինչպես նաև նրանք անկեղծ են, շիտակ ու պարզ: Ցածր արտահայտվածությամբ անձինք համոզված են, որ միջանձնային հարաբերություններում ինչ-որ չափով խաբեությունը անհրաժեշտ է: Սակայն հարկ է նշել, որ նրանք ոչ սկզբունքային

կամ անբարոյական անձինք չեն: Այլ նրանք պարզապես ավելի զգոն են և պակաս պատրաստակամ՝ բացահայտելու ամբողջ ճշմարտությունը:

Մարդկանց մեծամասնությունը նախընտրում է հարաբերություններ ունենալ այս սանդղակից բարձր արդյունքներ ունեցող շիտակ մարդկանց, քան ցածր արդյունքներ ունեցողների հետ:

A2 Մարդասիրություն (Altruism)

Բարձր արտահայտվածությամբ անձինք մյուսներին օգնելը համարում են իրական պարգև: Հետևաբար նրանք ընդհանուր առմամբ պատրաստակամ են օգնելու կարիքավորներին: Մարդասեր մարդիկ գտնում են, որ ուրիշների համար մի բան անելն ավելի շուտ ինքնաբավարարման ձև է, քան անձնագոհություն:

Յաճոր արտահայտվածությամբ անձինք առանձնապես հակված չեն օգնել կարիքի մեջ գտնվողներին: Դեպի իրենց ուղղված օգնության խնդրանքը դիտարկում են ավելի շատ պարտադրանք, քան ինքնաբավ զգակու հնարավորություն:

A3 Համագործակցություն (Cooperation)

Բարձր արտահայտվածությամբ անձինք պատրաստ են անտեսել սեփական շահերը՝ մյուսների հետ հարաբերությունները չվնասելու համար: Միշտ ձգտում են մարդկանց հետ դրական, լավ հարաբերություններ պահպանել, չեն սիրում կոնֆրոնտացիաներ, հակված են փոխզիջման, փոխօգնության, համագործակցության, թիմային աշխատանքի: Յաճոր արտահայտվածությամբ անձինք պատրաստ են ճնշել ուրիշներին՝ իրենց ուզածին հասնելու համար: Չեն կարողանում կառուցել դրական հարաբերություններ, համագործակցել, չեն կարողանում աշխատել թիմում, չեն գնում զիջումների: Հակված են կոնֆրոնտացիաների ու կոնֆլիկտների, հատկապես այն դեպքերում, երբ իրենց շահերը պաշտպանելու անհրաժեշտություն կա:

A4 Համեստություն (Modesty)

Բարձր արտահայտվածության դեպքում անձը չի կարծում, որ ինքը մյուսների համեմատ նկատելի առավելություններ ունի ու արժանի է ավելիին, քան մյուսները: Շատ համեստ է, չի սիրում լինել ուշադրության կենտրոնում, խոսել իր մասին, հարգում և ընդունում է մյուսների արժանիքները, իրեն ավելի բարձր չի դասում դիմացինից (որոշ դեպքերում բարձր արտահայտված համեստությունը կարող է լինել ցածր ինքնագնահատականի և ինքնավստահության պակասի հետևանք): Յաճոր արտահայտվածությամբ անձը կարծում է,

որ ինքը մյուսների համեմատ նկատելի առավելություններ ունի ու արժանի է ավելիին, քան մյուսները: Սիրում է լինել ուշադրության կենտրոնում, խոսել իր մասին, ցուցադրել իր արժանիքները: Հաճախ անտեսում կամ մերժում է մյուսների արժանիքները՝ համարելով, որ իր արժանիքներն միանշանակ առավել են: Իրեն շատ բարձր է դասում դիմացինից և ինքնահավան է:

A5 Կարեկցանք (Sympathy)

Այս որակի բարձր արտահայտվածությամբ անձինք փափկասիրտ են ու կարեկցող: Նրանք միջնորդավորված զգում են ուրիշների ցավը և հեշտորեն լցվում են խղճահարության ու կարեկցանքի զգացումով: Ցածր արտահայտվածությամբ անձինք այդքան էլ չեն ազդվում ուրիշների տառապանքից: Նրանք հպարտանում են, որ կարող են փաստերի վրա հիմնելով առողջ դատողություններ անել: Նրանց ավելի մտահոգում են ճշմարտությունը և անաչառությունը, քան գրասրտությունը:

ԲԱՐԵԽՂՃՈՒԹՅՈՒՆ

C1 Ինքնարդյունավետություն (Self-Efficacy)

Բարձր արտահայտվածությունը հանգեցնում է նրան, որ գործի ավարտը տեսնելու ցանկությունը ստիպում է մարդուն հետևողականորեն և համառորեն գործել: Գրեթե միշտ համոզված է, որ կունենա հաջողություն, քանի որ ունի առողջ բանականություն ու ձգտում: Ունի սեփական կյանքի վերահսկողության զգացում: Միշտ ձգտում է ավարտին հասցնել իր ձեռնարկած գործերը: Այս որակի ցածր արտահայտվածությունը հանգեցնում է նրան, որ հաճախ մարդը հետևողական ու համառ չի լինում՝ գործը ավարտին հասցնելու համար: Համոզված է, որ հաջողություններն իր համար չեն, քանի որ չունի հաջողության հասնելու համար անհրաժեշտ որակներ: Հիմնականում կարծում է, որ իր կյանքի վերահսկողությունը իր ձեռքերում չէ, և իր գործողությունները չեն կարող հանգեցնել արդյունավետ ելքի:

C2 ճշտապահություն (Orderliness)

Այս որակի բարձր արտահայտվածությունը կարող է հանգեցնել գործելառճում ճկունության բացակայության: Գործում է խիստ պլանավորված և կազմակերպված, ունի անելիքների ցանկ, որն իրագործում է հաջորդաբար: Միշտ ձգտում է ամեն ինչ ծրագրել նախօրոք և հետևել նախատեսված քայլերին: Այս որակի ցածր արտահայտվածությունը կարող է հանգեցնել ինքնաբուխ և անկազմակերպ վարքի, ինչի հետևանքով կարող է նվազել նպատակին հասնելու արդյունավետությունը: Չի սիրում գործել պլանավորված. ան-

կազմակերպ է, երբեք չի կազմում անելիքների ցանկ, ոչինչ չի ծրագրում մախօրոք և չի հետևում սահմանված ընթացակարգերին: Չի սիրում կարգուկանոն. քափփված է և անփույթ:

C3 Պարտաճանաչություն (Dutifulness)

Բարձր արտահայտվածությամբ անձինք միշտ պարտաճանաչ են իրենց գործողություններում, պարտականությունները իրականացնում են ժամանակին և պատշաճորեն, հետևում են սահմանված կանոններին: Ունեն բարձր պատասխանատվության զգացում, վստահելի են:

Ցածր արտահայտվածության դեպքում անձը հաճախ կարող է ժամանակին չկատարել պարտականությունները կամ թերանալ դրանց կատարման մեջ: Հիմնականում չի սիրում հետևել սահմանված կանոններին, քանի որ գտնում է, որ կանոններն ու սահմանված կարգերը սահմանափակում են մարդուն, ինչը հանգեցնում է նրան, որ շատ դեպքերում նրա վարքը անպատասխանատու և անհուսալի է:

C4 Նպատակապաշարություն (Achievement)

Այս որակի բարձր արտահայտվածության դեպքում անձը կարող է չափազանց տարվել աշխատանքով՝ անտեսելով կյանքի մյուս ոլորտները: Ամբողջությամբ նվիրվում է աշխատանքին, բոլոր ուժերը ներդնում է նպատակների իրականացման գործում, խիստ նպատակապաշար է: Միշտ քրտնաջանորեն աշխատում է՝ գերազանց արդյունքի հասնելու համար: Կյանքում ունի հստակ ուղղվածություն և հաջողությամբ շարժվում է այդ ուղղությամբ:

Այս որակի ցածր արտահայտվածության դեպքում կարող է դրսևորվել անբավարար ներգրավվածություն աշխատանքի մեջ, ինչը կարող է նպաստել գործունեության ցածր արդյունավետության: Չի ծանրաբեռնում իրեն աշխատանքով, անում է նվազագույնը նպատակների իրագործման համար, հաջողության հասնելու ձգտումը շատ ցածր է: Շրջապատողների մոտ կարող է թողնել ծուլի տպավորություն:

C5 Զգուշավորություն (Cautiousness)

Բարձր արտահայտվածության դեպքում որոշումներ կայացնելիս անձը երկար մտածում է, ինչպես նաև հակված է գործելուց առաջ տարբեր հնարավորությունները ծանրութեթև անել: Ցածր արտահայտվածությամբ անձինք անում կամ ասում են այն, ինչ առաջինն է գալիս մտքներին՝ առանց քննարկելու որևէ այլընտրանքային տարբերակներ ու այդ տարբերակների միջև՝ կոնսենսուսներ:

ՀԱՐՑԱՐԱՆԻ ԲԼԱՆԿ

Հարգելի՛ մասնակից,

ստորև ներկայացված են մարդուն բնութագրող պնդումներ: Խնդրում ենք գնահատել յուրաքանչյուր պնդումն ըստ առաջարկված սանդղակի՝ շրջանակի մեջ վերցնելով այն թիվը, որն առավել ճիշտ կարող է բնութագրել Ձեզ:

1 = ընդհանրապես համաձայն չեմ,

2 = համաձայն չեմ,

3 = չեզոք եմ (ոչ համաձայն եմ, ոչ էլ համաձայն չեմ),

4 = համաձայն եմ,

5 = միանշանակ համաձայն եմ:

Ուշադրություն դարձրե՛ք ոչ թե նրան, թե ինչպիսին կցանկանաք Ձեզ տեսնել, այլ ինչպիսին եք ներկայում: Ավելի ճշգրիտ գնահատելու համար Ձեր որակները համեմատե՛ք Ձեզ նույն տարիքի ու սեռի մարդկանց հետ:

Խնդրում ենք պատասխանել բոլոր պնդումներին, եթե անգամ լիարժեք վստահ չեք Ձեր պատասխաններում:

	Ընդհանրապես համաձայն չեմ	Համաձայն չեմ	Չեզոք եմ (ոչ համաձայն եմ, ոչ էլ համաձայն չեմ)	Համաձայն եմ	Միանշանակ համաձայն եմ
1. Անսովոր իրավիճակներում շփոթվում եմ:	1	2	3	4	5
2. Արագ եմ ստեղծում մտերիմ հարաբերություններ:	1	2	3	4	5
3. Ունեմ վառ երևակայություն:	1	2	3	4	5
4. Առաջադրանքները հաջողությամբ եմ կատարում:	1	2	3	4	5
5. Ինձ հեշտ է զայրացնելը:	1	2	3	4	5
6. Սիրում եմ մեծ խնջույքներ:	1	2	3	4	5
7. Արվեստը ինձ համար կարևոր է:	1	2	3	4	5
8. Պահպանում եմ ընդունված վարքականոցները:	1	2	3	4	5
9. Սիրում եմ կարգուկանոն:	1	2	3	4	5
10. Հաճախ ինձ ուժասպառ եմ զգում:	1	2	3	4	5
11. Հիմնականում նախաձեռնությունը վերցնում եմ իմ ձեռքը:	1	2	3	4	5

12.	Կարողանում եմ զգալ մյուսների հույզերը:	1	2	3	4	5
13.	Ուշադիր եմ մյուսների կարիքների հանդեպ:	1	2	3	4	5
14.	Չեմ սիրում ուշանալ:	1	2	3	4	5
15.	Վախենում եմ, որ ինչ-որ սխալ, քննադատելի բան կանեմ:	1	2	3	4	5
16.	Կյանքում գերադասում եմ բազմազանությունը միօրինակությունից:	1	2	3	4	5
17.	Չեմ սիրում վիճաբանել:	1	2	3	4	5
18.	Ամբողջությամբ տարվում եմ նպատակներիս իրականացմամբ:	1	2	3	4	5
19.	Հաճախ չեմ կարողանում մտքերս հավաքել:	1	2	3	4	5
20.	Սիրում եմ սուր զգացողություններ:	1	2	3	4	5
21.	Սիրում եմ լուծել բարդ խնդիրներ:	1	2	3	4	5
22.	Չեմ սիրում ուշադրության կենտրոնում լինել:	1	2	3	4	5
23.	Ուրախություն եմ սպիռում շուրջս:	1	2	3	4	5
24.	Կարեկցում եմ անտուն մարդկանց:	1	2	3	4	5
25.	Գործում եմ հնարավորինս զգույշ, որպեսզի չսխալվեմ:	1	2	3	4	5
26.	Շուտ եմ հուզվում և նյարդայնանում:	1	2	3	4	5
27.	Ինձ լավ եմ զգում մարդկանց շրջապատում:	1	2	3	4	5
28.	Տրվում եմ երևակայությանը:	1	2	3	4	5
29.	Կարողանում եմ լավ լուծումներ գտնել:	1	2	3	4	5
30.	Հաճախ կորցնում եմ համբերությունս:	1	2	3	4	5
31.	Խնջույքների ժամանակ շփվում եմ շատ մարդկանց հետ:	1	2	3	4	5
32.	Նկատում եմ գեղեցիկը այնտեղ, որտեղ ուրիշները կարող են չտեսնել:	1	2	3	4	5
33.	Օգտվում եմ մարդկանց միամտությունից:	1	2	3	4	5
34.	Սիրում եմ գործել ըստ պլանի:	1	2	3	4	5
35.	Հաճախակի եմ ունենում տրամադրության անկումներ:	1	2	3	4	5
36.	Հաճախ եմ մյուսներին ուղղություն ցույց տալիս:	1	2	3	4	5
37.	Սիրում եմ ուսումնասիրել ինձ ու իմ կյանքը:	1	2	3	4	5
38.	Սիրում եմ օգնել մարդկանց:	1	2	3	4	5
39.	Վճարումները ժամանակին եմ կատարում:	1	2	3	4	5
40.	Վախենում եմ ուշադրության կենտրոնում հայտնվելուց:	1	2	3	4	5
41.	Սիրում եմ այցելել արտասովոր վայրեր:	1	2	3	4	5
42.	Չեմ սիրում իմ կարծիքը պարտադրել ուրիշներին:	1	2	3	4	5

43.	Եռանդով եմ աշխատում:	1	2	3	4	5
44.	Հեշտությամբ եմ խոնարհվում:	1	2	3	4	5
45.	Հաճախ եմ խենթ բաներ անում:	1	2	3	4	5
46.	Սիրում եմ կարողալ լուրջ գրականություն:	1	2	3	4	5
47.	Չեմ սիրում խոսել իմ մասին:	1	2	3	4	5
48.	Կարողանում եմ երեխայի պես զվարճանալ:	1	2	3	4	5
49.	Կարեկցում եմ ինձանից վատ վիճակում գտնվողներին:	1	2	3	4	5
50.	Մի բան սկսելուց առաջ երկար ծանրութեք եմ անում:	1	2	3	4	5
51.	Չեմ անհանգստանում արդեն անցած բաների համար:	1	2	3	4	5
52.	Հեշտ եմ ընկերանում:	1	2	3	4	5
53.	Հազվադեպ եմ երագում:	1	2	3	4	5
54.	Գիտեմ ինչպես գործել և վարվել:	1	2	3	4	5
55.	Հեշտ եմ հունից դուրս գալիս:	1	2	3	4	5
56.	Հաճույք եմ ստանում շատ մարդկանց մեջ լինելուց:	1	2	3	4	5
57.	Վայելում եմ բնության գեղեցկությունը:	1	2	3	4	5
58.	Գիտեմ, թե ինչպես շրջանցել օրերը:	1	2	3	4	5
59.	Հաճախ մոռանում եմ իրերը դնել իրենց տեղը:	1	2	3	4	5
60.	Հաճախ եմ ունենում հուսահատության զգացում:	1	2	3	4	5
61.	Սպասում եմ, որ նախաձեռնությունը մեկ ուրիշը ցուցաբերի:	1	2	3	4	5
62.	Ձգտում եմ հասկանալ իմ ապրումները:	1	2	3	4	5
63.	Մտահոգվում եմ ուրիշների խնդիրներով:	1	2	3	4	5
64.	Հաճախ չեմ պահում խոստումներս:	1	2	3	4	5
65.	Ինձ հարմարավետ եմ զգում միայն ընկերներիս միջավայրում:	1	2	3	4	5
66.	Չեմ սիրում փորձել նոր իրեր, ճաշատեսակներ:	1	2	3	4	5
67.	Քեն պահող եմ:	1	2	3	4	5
68.	Խոսքից անմիջապես անցնում եմ գործի:	1	2	3	4	5
69.	Կարողանում եմ գլուխ հանել բարդ իրավիճակներից:	1	2	3	4	5
70.	Սիրում եմ ցանկացած նոր բան գոնե մի անգամ փորձել:	1	2	3	4	5
71.	Կարող եմ մեծ ծավալով տեղեկատվություն յուրացնել:	1	2	3	4	5
72.	Կարծում եմ, որ ես մյուսներից առավել եմ շատ առումներով:	1	2	3	4	5

73.	Սիրում եմ կյանքը:	1	2	3	4	5
74.	Չեմ սիրում գրասիրտ մարդկանց:	1	2	3	4	5
75.	Առանց երկար մտածելու որոշումներ եմ կայաց- նում:	1	2	3	4	5
76.	Պահպանում եմ հանգստություն, երբ անելիքներս շատ են:	1	2	3	4	5
77.	Խուսափում եմ մոռ ծանոթություններից:	1	2	3	4	5
78.	Գրեթե չունեմ երևակայելու ունակություն:	1	2	3	4	5
79.	Իմ գործերում հիմնականում ձախողումներ չեմ ունենում:	1	2	3	4	5
80.	Հազվադեպ եմ վրդովվում:	1	2	3	4	5
81.	Խուսափում եմ մարդաշատ վայրերից:	1	2	3	4	5
82.	Չեմ սիրում պոեզիա:	1	2	3	4	5
83.	Կարելի է դիմել խաբեության` առաջ գնալու հա- մար:	1	2	3	4	5
84.	Պարտադիր չէ, որ ամեն ինչ իր տեղում դրված լինի:	1	2	3	4	5
85.	Հազվադեպ եմ տխրում:	1	2	3	4	5
86.	Սովորաբար նախընտրում եմ ստվերում մնալ:	1	2	3	4	5
87.	Արտահայտում եմ իմ հույզերն ու զգացմունքները:	1	2	3	4	5
88.	Անտարբեր եմ ուրիշների հոգսերի հանդեպ:	1	2	3	4	5
89.	Հաճախ քերանում եմ իմ պարտականություննե- րում:	1	2	3	4	5
90.	Անհանգստանում եմ, թե ուրիշները ինչ կմտածեն իմ մասին:	1	2	3	4	5
91.	Չեմ սիրում փոփոխություններ:	1	2	3	4	5
92.	Առաջնահերթությունը տալիս եմ իմ անձնական շահին:	1	2	3	4	5
93.	Անում եմ ավելին, քան ինձանից սպասվում է:	1	2	3	4	5
94.	Վստահորեն հաղթահարում եմ անհաջողություն- ներս:	1	2	3	4	5
95.	Երբեք չէի թռչի դելտապլանով կամ պարաշյու- տով:	1	2	3	4	5
96.	Չեմ սիրում կոնկրետ խնդիրներին չառնչվող, վե- րացական քննարկումները:	1	2	3	4	5
97.	Հաճախ եմ պարծենում իմ արժանիքներով:	1	2	3	4	5
98.	Տեսնում եմ կյանքի պայծառ կողմը:	1	2	3	4	5
99.	Կարծում եմ, որ յուրաքանչյուրն ինքը պետք է իր մասին հոգ տանի:	1	2	3	4	5
100.	Գործում եմ առանց մտածելու:	1	2	3	4	5
101.	Նոր իրավիճակներում չեմ լարվում:	1	2	3	4	5
102.	Ինձ հեռու եմ պահում մարդկանցից:	1	2	3	4	5

103.	Երևակայությանն ազատություն չեմ տալիս:	1	2	3	4	5
104.	Իրավիճակը գնահատելիս կարող եմ սխալվել:	1	2	3	4	5
105.	Հազվադեպ եմ բարկանում:	1	2	3	4	5
106.	Մեծ խնջույքների ժամանակ նախընտրում եմ մեկուսանալ:	1	2	3	4	5
107.	Չեմ սիրում պատկերասրահներ այցելել:	1	2	3	4	5
108.	Օգտագործում եմ մարդկանց լավ վերաբերմունքն իմ հանդեպ՝ ուզածիս հասնելու համար:	1	2	3	4	5
109.	Թափափվածությունը ինձ չի անհանգստացնում:	1	2	3	4	5
110.	Հիմնականում ինձանից գոհ եմ:	1	2	3	4	5
111.	Սովորաբար չեմ արտահայտում իմ կարծիքը:	1	2	3	4	5
112.	Չեմ կարողանում արտահայտել զգացմունքներս:	1	2	3	4	5
113.	Ուրիշներին օգնելու ժամանակ չունեմ:	1	2	3	4	5
114.	Հաճախ չեմ հետևում կանոններին:	1	2	3	4	5
115.	Չեմ շփոթվում ուրիշների ներկայությամբ խոսելիս:	1	2	3	4	5
116.	Սովորության մարդ եմ:	1	2	3	4	5
117.	Դժվարությամբ եմ ներում:	1	2	3	4	5
118.	Բարձր պահանջներ եմ դնում իմ և ուրիշների առջև:	1	2	3	4	5
119.	Հանգիստ եմ նույնիսկ լարված իրավիճակներում:	1	2	3	4	5
120.	Հեռու եմ մնում վտանգավոր տեղերից:	1	2	3	4	5
121.	Խուսափում եմ բարդ բաներ կարդալուց:	1	2	3	4	5
122.	Սիրում եմ արտահայտել իմ կարծիքը:	1	2	3	4	5
123.	Հազվադեպ եմ կատակներ անում:	1	2	3	4	5
124.	Տանել չեմ կարողանում խեղճ մարդկանց:	1	2	3	4	5
125.	Հաճախ որոշումներս վերջին պահին եմ ընդունում:	1	2	3	4	5

2. «ՄԵԾ ՀՆԳՅԱԿ» ՀԱՐՑԱՐԱՆ (ԿԱՐԴ ՏԱՐՔԵՐԱԿ)

Հոգեբանական հետազոտություններում հաճախ անհրաժեշտություն է առաջանում կիրառելու անձնային հարցարանների կարճ տարբերակները: Այդ պատճառով, բացի «Մեծ հնգյակ» հայալեզու հարցարանի երկար տարբերակից, կազմվել է նաև նույն հարցարանի կարճ տարբերակ:

ՏԵՂԱՅՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

Հետազոտությանը մասնակցել են ընդհանուր 323 հոգի, ինչպես տարբեր բուհերի ուսանողներ, այնպես էլ ոչ ուսանողներ: Մասնակիցների 15.8 %-ը տղամարդ է, իսկ 84.2 %-ը՝ կին ($M_{\text{տարիք}}=22.6$, $StDev_{\text{տարիք}}=5.726$): Ընտրանքի մի մասը, այն է՝ 68 հոգի, մասնակցել է նաև քեստ-ռեքեստային հետազոտությանը: Հետազոտության բոլոր մասնակիցները լրացրել են հարցաթերթ, որում ընդգրկված է եղել «Մեծ հնգյակ» հայալեզու անձնային հարցարանի կարճ տարբերակը:

Աղյուսակ 2.1

«Մեծ հնգյակը» չափող հարցարանի գործոնների նորմալ բաշխվածության չափանիշները, Կրոնբախի α և քեստ-ռեքեստային գործակիցը

	Միջին արժեք (M)	Ստ. շեղում (StDev)	Կոլմոգորով-Սմիրնովի Z	Նշ. Կ-Ս	Կրոնբախի α	Քեստ-ռեքեստային գործակից
Նեյրոտիզմ	3.1	0.629	0.91	0.379	0.72	0.77
Էքստրավերտություն	3.4	0.558	1.12	0.162	0.63	0.70
Լայնախոսություն	3.7	0.509	1.51	0.061	0.60	0.76
Բարյացակամություն	3.1	0.469	1.33	0.056	0.41	0.75
Բարեխղճություն	3.4	0.528	1.29	0.072	0.67	0.79

Աղյուսակ 2.1-ում ներկայացված են գործոնների միջին արժեքներն ու ստանդարտ շեղումները, ինչպես նաև Կոլմոգորով-Սմիրնովի Z չափանիշն ու դրա նշանակալիության աստիճանը: Բաշխվածությունը համարվում է նորմալ, երբ Կոլմոգորով-Սմիրնովի չափանիշի նշանակալիության աստիճանը մեծ է 0,05-ից²⁰: Այսինքն՝ ելնելով աղյուսակի տվյալներից՝ կարելի է ասել, որ բոլոր հինգ գործոնները բաշխվել են նորմալ: Սա թույլ է տալիս, որի հետազո-

²⁰ Տե՛ս **Митина О. В.** (2011) *Разработка и адаптация психологических опросников*, М.: «Смысл», էջ 57-71:

տությամբ արդյունքները ենթարկվեն հետագա վիճակագրական վերլուծության:

Հարցարանի ներքին համաձայնվածությունը կամ, որ նույնն է, ներքին հուսալիությունը ստուգելու համար օգտվել ենք Կրոնբախի α ցուցանիշից: Այն ցույց է տալիս, թե յուրաքանչյուր պնդում որքանով է համապատասխանում այն սանդղակին, որը չափում է: Իսկ հարցարանի կայունությունը կամ արտաքին հուսալիությունը ստուգվել է թեստ-ռեթեստային մեթոդով: Մեթոդի էությունն այն է, որ հետազոտվողների մի մասը նույն հարցարանը լրացրել է երկու անգամ երկու ամիս ընդմիջմամբ, այսինքն՝ կատարվել է կրկնակի թեստավորում: Հետազոտությանը մասնակցել է 68 ուսանող ($M_{տարիք} = 19.1$, $SD_{տարիք} = 0.790$, կանայք՝ 98%):

Կրոնբախի α և թեստ-ռեթեստային գործակցի արդյունքները «Մեծ հնգյակի» յուրաքանչյուր գործոնի համար ներկայացված են Աղյուսակ 2.1-ում: Ինչպես երևում է աղյուսակում ներկայացված տվյալներից, Կրոնբախի α հինգ գործոններից ոչ բոլորի համար է ստացվել 0,6-0,7-ից մեծ թիվ, մասնավորապես բարյացակամություն սանդղակի համար ալֆան 0,405 է, ինչը այդքան էլ հուսալի ցուցանիշ չէ: Հասկանալու համար, թե որ պնդումն է իջեցնում վերոնշյալ սանդղակի հուսալիության աստիճանը, Կրոնբախի α հաշվվել է մի քանի անգամ՝ ամեն անգամ հանելով պնդումներից մեկը: Արդյունքում «չեմ սիրում խոսել իմ մասին» պնդումը, եթե սանդղակի հաշվարկի մեջ չենք դիտարկում, բարյացակամություն սանդղակի α -ն էականորեն աճում է՝ դառնալով 0,6-ին մոտ թիվ:

Ինչ վերաբերում է թեստ-ռեթեստային կորելյացիոն գործակցին, ապա այս դեպքում արդյունքները համարվում են հուսալի, եթե գործակիցը 0,75-0,8 է և ավել: «Մեծ հնգյակի» հինգ գործոնները, այն է՝ նեյրոտիզմը, էքստրավերտությունը, լայնախոհությունը, բարյացակամությունը և բարեխղճությունը, համապատասխանում են այդ չափանիշին, այսինքն՝ հարցարանը կարող ենք համարել կայուն:

«Մեծ հնգյակ» հայալեզու անձնային հարցարանի կարճ տարբերակի համար չափվել են բովանդակային ու կոնստրուկտային վալիդություն: Բովանդակային վալիդությունը հաստատվում է այն փաստով, որ IPIP-ի (անգլ.՝ International Personality Item Pool) էլեկտրոնային կայքում տեղակայված պնդումների բազայից²¹ փորձագիտական հարցման արդյունքում ընտրվել են նրանք, որոնք ընկալելի կլինեն հայալեզու ընտրանքի համար: IPIP-ն անձնային գծերին վերաբերող պնդումների անվճար բազա է, որից կարող են

²¹ Տե՛ս <http://ipip.ori.org/newNEOFacetsKey.htm>:

օգտվել բոլոր հետաքրքրված հետազոտողները: Կայքում յուրաքանչյուր անձնային գիծը չափվում է մի քանի պնդումներով: Վերջիններս էլ կազմվել են անձնային գծերը չափող հուսալի ու վալիդ հարցարանների կետերի հիման վրա: Հետազոտողները կայքի բազան կարող են օգտագործել՝ նոր հարցարաններ կազմելու համար:

Հարցարանի վալիդությունը ստուգվել է՝ օգտագործելով գործոնային վերլուծության մեթոդը²²: Գործոնային վերլուծության համար որպես տարանջատման մեթոդ (անգլ.՝ Extraction method) ընտրվել է հնարավոր նմանության մեթոդը (անգլ.՝ Maximum likelihood), իսկ որպես պտույտի մեթոդ՝ վարիմաքսը (անգլ.՝ Rotation method Varimax): Կոնֆիրմատոր գործոնային վերլուծության շնորհիվ «Մեծ հնգյակ» հայալեզու անձնային հարցարանի կարճ տարբերակի 40 պնդումից միայն 30-ը կազմեց գործոնային կառուցվածք, մնացած 10-ը դուրս մնաց ստացված կառուցվածքից, այսինքն՝ կրճատվեց: Ստացված գործոնային կառուցվածքը բացատրում է տվյալների դիսպերսիայի 44.7 %-ը: Ստացված գործոնային կշիռները ներկայացված են Աղյուսակ 2.2-ում:

Աղյուսակ 2.2

«Մեծ հնգյակը» չափող հարցարանի սանդղակների գործոնային կառուցվածքը

	Նեյրոսիզմ	Էքստրավերտություն	Լայնակողություն	Բարյացականություն	Բարեխոհություն
Հանգիստ եմ նույնիսկ լարված իրավիճակներում:	-.744				
Շուտ եմ հուզվում և նյարդայնանում:	.732				
Հեշտությամբ եմ խուճապի մատնվում:	.715				
Հաճախ կորցնում եմ համբերությունս:	.703				
Հազվադեպ եմ բարկանում:	-.634				
Անսովոր իրավիճակներում շփոթվում եմ:	.613				
Սիրում եմ հանգիստ կենսակերպ:		-.606			
Սիրում եմ սուր զգացողություններ:		.599			
Հիմնականում մախաձեռնությունը վերցնում եմ իմ ձեռքը:		.596			
Արագ եմ ստեղծում մտերիմ հարաբերություններ:		.566			

²² Տե՛ս **Митина О. В.**, նշվ. աշխ.:

Ինձ հեռու եմ պահում մարդկանցից:		-527			
Հաճախ եմ մյուսներին ուղղություն ցույց տալիս:		.463			
Երևակայության ազատություն չեմ տալիս:			-684		
Միտում եմ ուսումնասիրել ինձ և իմ կյանքը:			.627		
Տրվում եմ իմ երևակայությանը:			.559		
Խուսափում եմ բարդ բաներ կարդալուց:			-516		
Չեմ սիրում փոփոխություններ:			-495		
Միտում եմ այցելել արտասովոր վայրեր:			.402		
Հիմնականում վստահում եմ մարդկանց:				.765	
Հավատում եմ մարդկանց խոսքերին:				.630	
Չեմ սիրում խոսել իմ մասին:				-594	
Կարծում եմ, որ մարդիկ իրենց բնույթով չար են:				-522	
Դժվարությամբ եմ ներում:				-405	
Կարող եմ ձայնս բարձրացնել ուրիշների վրա:				-106	
Միշտ փորձում եմ ավարտին հասցնել սկսած գործը:					.693
Խոսքից անմիջապես անցնում եմ գործի:					.690
Ամբողջությամբ տարվում եմ նպատակներիս իրականացմամբ:					.665
Միտում եմ կարգուկանոն:					.606
Հաճախ չեմ պահում խոստումներս:					-529
Կարողանում եմ լավ լուծումներ գտնել:					.396

Այսպիսով՝ գործոնային վերլուծության արդյունքում նախնական 40 պնդումը կրճատվեց՝ դառնալով 30, ինչի հետևանքով յուրաքանչյուր մեծ գործոն 8 հարցի փոխարեն այժմ չափվում է 6 հարցով: Բայց միևնույն ժամանակ գործոնային վերլուծության արդյունքում հաստատվեց «Մեծ հնգյակ» հայալեզու անձնային հարցարանի կարճ տարբերակի կոնստրուկտային վավիդությունը:

ՀԱՐՑԱՐԱՆԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Մեծ հնգյակ» հայալեզու անձնային հարցարանի կարճ տարբերակը բաղկացած է 30 պնդումից, յուրաքանչյուր գործոնի համար՝ 6 պնդում: Պնդումներից յուրաքանչյուրի համար մասնակիցը պետք է նշի, թե ինչ չափով է համաձայն դրան: Համաձայնության աստիճանը չափվում է հինգմիավորանոց սանդղակով, որտեղ 1 թիվը նշանակում է, որ «ընդհանրապես համաձայն

չէ», 2-ը՝ «համաձայն չեմ», 3-ը՝ «ո՛չ համաձայն եմ, ո՛չ համաձայն չեմ», 4-ը՝ «համաձայն եմ», իսկ 5-ը՝ «միանշանակ համաձայն եմ»: Հարցարանի հիմնական սանդղակներն են՝ նեյրոտիզմ, էքստրավերտություն, լայնախոհություն, բարյացակամություն, բարեխղճություն:

Արդյունքների հաշվարկը և մեկնաբանությունը

Ըստ մեթոդիկայի բանալու՝ հաշվարկվում է յուրաքանչյուր գծի ու ենթագծի ընդհանուր միավորը: Ուղիղ պնդումներին տրվում են պատասխանի տարբերակի թվին համարժեք միավորներ, հակադարձ պնդումներին (բանալիում հարցի համարի կողքին նշված է R տառը)՝ պատասխանի տարբերակի թվին հակառակ միավորներ: Տվյալ գործոնի համար արդյունքը հաշվարկվում՝ ըստ բանալու բոլոր պնդումների միավորների միջին թվաբանականի: Պատասխանների տարբերակներին տրվող միավորները ուղիղ ու հակառակ հարցերի դեպքում ներկայացված են Աղյուսակ 2.3-ում:

Աղյուսակ 2.3. Ուղիղ և հակադարձ պնդումներին համապատասխանող միավորները

Պատասխանի տարբերակներ	Ուղիղ հարցերի միավորներ	Հակառակ հարցերի միավորներ
ընդհանրապես համաձայն չեմ	1	5
համաձայն չեմ	2	4
չեզոք եմ (ո՛չ համաձայն եմ, ո՛չ համաձայն չեմ)	3	3
համաձայն եմ	4	2
միանշանակ համաձայն եմ	5	1

Աղյուսակ 2.4-ում ներկայացված է մեթոդիկայի բանալին:

Աղյուսակ 2.4. «Մեծ հնգյակ» հարցարանի կարճ փորձերակի հաշվարկի բանալի

Սանդղակի անվանումը²³	Հարցի համարը
Նեյրոտիզմ	1, 6, 11, 16R, 21R, 26
Էքստրավերտություն	2, 7R, 12, 17R, 22, 27R
Լայնախոհություն	3, 8R, 13R, 18, 23R, 28R
Բարյացակամություն	4, 9, 14R, 19, 24R, 29
Բարեխղճություն	5, 10, 15, 20R, 25, 30R

²³ Գործոնների նկարագրությունը ներկայացված է սույն գրքի «Մեծ հնգյակ» գլխում:

ՀԱՐՑԱՐԱՆԻ ԲԼԱՆԿ

Հարգելի՛ մասնակից,

ստորև ներկայացված են մարդուն բնութագրող պնդումներ: Խնդրում ենք գնահատել յուրաքանչյուր պնդումն ըստ առաջարկված սանդղակի՝ շրջանակի մեջ վերցնելով այն թիվը, որն առավել ճիշտ կարող է բնութագրել Ձեզ:

- 1 = ընդհանրապես համաձայն չեմ,
 2 = համաձայն չեմ,
 3 = չեզոք եմ (ոչ համաձայն եմ, ոչ էլ համաձայն չեմ),
 4 = համաձայն եմ,
 5 = միանշանակ համաձայն եմ:

Ուշադրություն դարձրե՛ք ոչ թե նրան, թե ինչպիսին կցանկանաք Ձեզ տեսնել, այլ ինչպիսին եք ներկայում: Ավելի ճշգրիտ գնահատելու համար Ձեր որակները համեմատե՛ք Ձեզ նույն տարիքի ու սեռի մարդկանց հետ:

Խնդրում ենք պատասխանել բոլոր պնդումներին, եթե անգամ լիարժեք վստահ չեք Ձեր պատասխաններում:

	Ընդհանրապես համաձայն չեմ	Համաձայն չեմ	Չեզոք եմ (ոչ համաձայն եմ, ոչ էլ համաձայն չեմ)	Համաձայն եմ	Միանշանակ համաձայն եմ
1. Անսովոր իրավիճակներում շփոթվում եմ:	1	2	3	4	5
2. Արագ եմ ստեղծում մտերիմ հարաբերություններ:	1	2	3	4	5
3. Տրվում եմ իմ երևակայությանը:	1	2	3	4	5
4. Հավատում եմ մարդկանց խոսքերին:	1	2	3	4	5
5. Խոսքից անմիջապես անցնում եմ գործի:	1	2	3	4	5
6. Շուտ եմ հուզվում և նյարդայնանում:	1	2	3	4	5
7. Ինձ հեռու եմ պահում մարդկանցից:	1	2	3	4	5
8. Երևակայությանս ազատություն չեմ տալիս:	1	2	3	4	5
9. Հիմնականում վստահում եմ մարդկանց:	1	2	3	4	5
10. Ամբողջությամբ տարվում եմ նպատակներիս իրականացմամբ:	1	2	3	4	5

11. Հաճախ կորցնում եմ համբերությունս:	1	2	3	4	5
12. Հիմնականում նախաձեռնությունը վերցնում եմ իմ ձեռքը:	1	2	3	4	5
13. Խուսափում եմ բարդ բաներ կարդալուց:	1	2	3	4	5
14. Կարծում եմ, որ մարդիկ իրենց բնույթով չար են:	1	2	3	4	5
15. Սիրում եմ կարգուկանոն:	1	2	3	4	5
16. Հազվադեպ եմ բարկանում:	1	2	3	4	5
17. Երբեք չեի թռչի դելտապլանով կամ պարաշյուտով:	1	2	3	4	5
18. Սիրում եմ ուսումնասիրել ինձ և իմ կյանքը:	1	2	3	4	5
19. Չեմ սիրում խոսել իմ մասին:	1	2	3	4	5
20. Հաճախ մոռանում եմ իրերը դնել իրենց տեղը:	1	2	3	4	5
21. Հանգիստ եմ նույնիսկ լարված իրավիճակներում:	1	2	3	4	5
22. Սիրում եմ սուր գգացողություններ:	1	2	3	4	5
23. Չեմ սիրում կոնկրետ խնդիրներին չառնչվող, վերացական քննարկումները:	1	2	3	4	5
24. Դժվարությամբ եմ ներում:	1	2	3	4	5
25. Միշտ փորձում եմ ավարտին հասցնել սկսած գործը:	1	2	3	4	5
26. Հեշտությամբ եմ խուճապի մատնվում:	1	2	3	4	5
27. Սիրում եմ հանգիստ կենսակերպ:	1	2	3	4	5
28. Չեմ սիրում փոփոխություններ:	1	2	3	4	5
29. Չեմ սիրում ուշադրության կենտրոնում լինել:	1	2	3	4	5
30. Հաճախ չեմ պահում խոստումներս:	1	2	3	4	5

3. ԱՆՁԻ ՎԵՑԳՈՐԾՈՆԱՅԻՆ ՀԱՐՑԱՐԱՆ (HEXACO)

ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐ

Անճնային գծերի բազմաթիվ հետազոտությունները մեծ մասամբ ապացուցում են «Մեծ հնգյակի» ունիվերսալությունն ու ցույց տալիս, որ անկախ մշակույթից՝ անձը նկարագրող հիմնական գործոնները հինգն են: Սակայն վերջին տարիներին մեծ թափ է ստանում անճնային գծերը համակարգող մի այլ մոդել՝ անձի վեցգործոնային մոդելը (անգլ.՝ HEXACO)²⁴: Անճնային գծերի հինգգործոնային մոդելը քննադատվում է այն պատճառով, որ ածականները վերցված են միայն անգլերենից: Այդ պատճառով մի շարք գիտնականներ Մ. Աշտոնի և Կ. Լիի գլխավորությամբ նախաձեռնեցին լեզվաբանական հետազոտություն՝ կիրառելով տարբեր լեզուներ (օրինակ՝ խորվաթերեն, թուրքերեն, լեհերեն, կորեերեն, գերմաներեն և այլն), որպեսզի հաստատեն կամ հերքեն հինգգործոնային մոդելի ունիվերսալությունը²⁵: Գործոնային վերլուծության արդյունքում երկրների մեծ մասում անձը նկարագրող հատկությունները խմբավորվեցին ոչ թե հինգ, այլ վեց գործոնի շուրջ՝ այսպիսով հիմք դառնալով անձի վեցգործոնային մոդելի ստեղծմանը: Այդ վեց գործոններն են՝ ազնվություն/համեստություն, հուզականություն, էքստրավերտություն, բարյացակամություն, բարեխղճություն, լայնախոհություն: էքստրավերտություն, բարեխղճություն, լայնախոհություն գործոններն իրենց բովանդակությամբ շատ նման են «Մեծ հնգյակի» համապատասխան գործոններին, բարյացակամությունն ու հուզականությունն ունեն մի փոքր տարբերություններ, իսկ ազնվությունը/համեստությունը լրիվ նոր գործոն է²⁶:

Հետաքրքրականն այն է, որ բոլոր հետազոտություններում գործոնային վերլուծության արդյունքում չորս հիմնական գործոնները՝ էքստրավերտությունը, բարյացակամությունը, բարեխղճությունը, հուզականությունը, նույնկերպ էին հանդես գալիս կամ դուրս բերվում: Ինչ վերաբերում է լայնախոհություն և շատ հետազոտություններում դուրս բերվող ազնվություն/համեստություն գործոններին, ապա դրանք մնացած գործոնների համեմատ այնքան էլ կայուն չեն²⁷: Ազնվություն/համեստություն գործոնի խնդիրն այն է, որ հետազոտու-

²⁴ Տե՛ս Lee K., Ashton M. C. (2008) The HEXACO personality factors in the indigenous personality lexicons of English and 11 other languages. *Journal of Personality*, 76, pp. 1001-1053:

²⁵ Տե՛ս նույն տեղում:

²⁶ Տե՛ս Ashton M., Lee C. (2001) A theoretical basis for the major dimensions of personality. *European journal of personality*, 15, pp. 327-353:

²⁷ Տե՛ս Ashton M. C., Lee K. (2007) Empirical, theoretical and practical advantages of the HEXACO model of personality structure. *Personality and Social Psychology Review*, 11, pp. 150-166:

թյունների մի մասում այն գործոնային վերլուծության ժամանակ միավորվում է կա՛մ բարեխղճություն, կա՛մ բարյացակամություն գործոնների հետ և այն-քան էլ կայուն չէ կրկնությունների նկատմամբ: Սակայն ամեն դեպքում ուսումնասիրությունների մեծ մասը ապացուցել է վեց գործոնի առկայությունը: Թվարկված վեց գործոններից յուրաքանչյուրն իր հերթին կազմված է չորս ենթագործոնից:

ՏԵՂԱՅՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

Վեցգործոնային մոդելը չափող հիմնական գործիքը HEXACO PI-R հարցարանն է, որն ունի երկու տարբերակ՝ 100 և 60 հարցից բաղկացած:

Հոդվածում ներկայացված հետազոտության նպատակն է ներկայացնել HEXACO PI-R (100 հարց) հարցարանի՝ հայերենով տեղայնացման գործընթացը²⁸:

Տեղայնացման գործընթացի սկզբում կատարվել է HEXACO PI-R անգլալեզու հարցարանի զուգահեռ անգլերենից հայերեն անկախ թարգմանություն երկու փորձագետների կողմից, այնուհետև համեմատվել են թարգմանված երկու տարբերակները, ինչի հիման վրա կազմվել է հայերեն հարցաթերթը: Թարգմանության փուլից հետո կատարվել է հետազոտություն՝ ստուգելու համար հարցարանի հուսալիությունն ու վալիդությունը:

Հետազոտությանը մասնակցել է 17-28 տարեկան 259 երիտասարդ: Մասնակիցների 34,7 %-ը տղամարդ է, իսկ 65,3 %-ը՝ կին (M տարիք=20.1, $StDev$ -տարիք=2,286): Հետազոտության բոլոր մասնակիցները լրացրել են հարցաթերթ, որում ընդգրկված է եղել «HEXACO PI-R» հայերեն թարգմանված անձնային հարցարանը:

Արդյունքները հետագայում ենթարկվել են վերլուծության՝ օգտագործելով մաթեմատիկական վիճակագրության մեթոդները: Վերլուծության նախնական փուլում ստուգվել է բոլոր 6 սանդղակների և 24 ենթագործոնների հուսալիությունը Կրոնբախի α գործակցով: Վեց մեծ գործոնների համար ալֆան ստացվել է 0,7-ից բարձր, ինչը բավարար է՝ սանդղակը հուսալի համարելու համար²⁹, սակայն կային ենթագործոններ, որոնց հուսալիության գործակիցը բավականին ցածր էր ստացվել: Այդպիսի ենթագործոններից էին ոչ ավանդա-

²⁸ Հարցարանի տեղայնացումը իրականացվել է ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի «Անձ և սոցիալական միջավայր» գ/հ լաբորատորիայի աշխատանքների արդյունքում:

²⁹ Տե՛ս **Howitt D. & Cramer D.** (2011) *An introduction to statistics in psychology*. Harlow, England: Prentice Hall., էջ 444-454:

կանությունը ($\alpha=0,282$), ճկունությունը ($\alpha=0,481$), տագնապայնությունը ($\alpha=0,269$), վախկոտությունը ($\alpha=0,491$), ինքնավստահությունը ($\alpha=0,502$), ներողամտությունը ($\alpha=0,509$), նրբանկատությունը ($\alpha=0,468$), ստեղծարարությունը ($\alpha=0,415$): Նշված սանդղակներից առանձնացվեցին այն հարցերը, որոնք քույլ չէին տալիս, որ սանդղակն ունենա բարձր Կրոնբախի α , ինչի հետևանքով մոտավորապես 16 հարց վերանայվեց ու վերաձևակերպվեց: Դրանից հետո հարցարանը անցկացվեց երկրորդ անգամ:

Երկրորդ հետազոտությանը մասնակցել է ընդհանուր 323 երիտասարդ: Մասնակիցների 15.8 %-ը տղամարդ է, իսկ 84.2 %-ը՝ կին (Մտարիք=22.6, StDevտարիք=5.726): Ընտրանքի մի մասը, այն է՝ 68 հոգի, մասնակցել է մասնատ-նեթեստային հետազոտությանը:

Վերլուծության մախնական փուլում ստուգվել է՝ ստացված վեց մեծ գործոններից յուրաքանչյուրի և 24 ենթագործոնների բաշխվածությունը համապատասխանում է նորմալ բաշխմանը, թե ոչ:

Աղյուսակ 3.1

HEXACO PI-R հարցարանի վեց հիմնական գործոնների նորմալ բաշխվածության չափանիշները, Կրոնբախի α -ն և քեստ-ռեթեստային գործակիցը

	Միջին արժեք (M)	Ստ. շեղում (StDev)	Կոմոգորով Սմիթ-նով Z	Նշ. Կ-Ս	Կրոնբախի α
Ազնվություն/Համեստություն	3,3	0,609	0,99	0,636	0,83
Հուզականություն	3,3	0,512	0,99	0,578	0,68
Էքստրավերտություն	3,4	0,589	0,99	0,428	0,82
Բարյացակամություն	2,9	0,489	0,99	0,831	0,74
Բարեխղճություն	3,5	0,530	0,96	0,500	0,79
Լայնախոհություն	3,5	0,550	0,99	0,422	0,73

Աղյուսակ 3.2

HEXACO PI-R հարցարանի գործոնների և ենթագործոնների Կրոնբախի α -ն, միջին արժեքները և արանդարյուր շեղումները

	Կրոնբախի α	Միջին արժեքներ	Ստանդարտ շեղումներ
ԱԶՆՎՈՒԹՅՈՒՆ/ՀԱՄԵՍՏՈՒԹՅՈՒՆ	0.858	3.3	.609
Անկեղծություն	0.742	3.6	.750
Արդարամտություն	0.70	3.4	.924
Ոչ ազահոություն	0.837	2.8	.918
Չափավորություն	0.623	3.5	.673

ՀՈՒՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	0.729	3.3	.512
Վախկոտություն	0.650	2.9	.779
Տագնապայնություն	0.602	3.6	.687
Հուզական կախվածություն	0.670	3.2	.764
Սենսիվենտալություն	0.614	3.4	.766
ԷՔՍՏՐԱՎԵՐՏՈՒԹՅՈՒՆ	0.851	3.4	.589
Ինքնավստահություն	0.619	3.5	.649
Համարձակություն	0.646	2.9	.799
Շփվողականություն	0.813	3.7	.854
Աշխուժություն	0.843	3.4	.934
ԲԱՐՅԱՑԱԿԱՍՈՒԹՅՈՒՆ	0.766	2.9	.489
Ներողամտություն	0.620	2.9	.757
Նրբանկատություն	0.594	3.3	.638
Ճկունություն	0.384	2.5	.602
Համբերատարություն	0.817	2.8	.875
ԲԱՐԵՆՂՃՈՒԹՅՈՒՆ	0.823	3.5	.530
Ճշտապահություն	0.669	3.6	.788
Զանախություն	0.530	3.7	.569
Պերֆեկցիոնիզմ	0.660	3.5	.739
Խոհեմություն	0.694	3.3	.731
ԼԱՅՆԱԽՈՒԹՅՈՒՆ	0.807	3.5	.550
Արվեստասիրություն	0.631	3.6	.757
Հետաքրքրասիրություն	0.691	3.3	.803
Ստեղծարարություն	0.725	3.6	.798
Ոչ ավանդականություն	0.605	3.5	.672

Աղյուսակ 3.1-ում ներկայացված են միայն վեց մեծ գործոնների միջին արժեքներն ու ստանդարտ շեղումները, ինչպես նաև Շապիրո-Ուիլկի չափանիշն ու դրա նշանակալիության աստիճանը: Բաշխվածությունը համարվում է նորմալ, երբ Շապիրո-Ուիլկի չափանիշի նշանակալիության աստիճանը մեծ է 0,05-ից³⁰: Այսինքն՝ ելնելով աղյուսակի տվյալներից՝ կարելի է ասել, որ բոլոր վեց գործոնները բաշխվել են նորմալ: Ինչ վերաբերում է ենթագործոններին, ապա դրանցից մի քանիսի մոտ նկատվել է շեղում նորմալ բաշխվածություն-

³⁰ Տե՛ս **Howitt D. & Cramer D.** (2011) *An introduction to statistics in psychology*. Harlow, England: Prentice Hall., էջ 444-454:

նից: Սակայն տվյալ ենթագործոնների բաշխվածության կորերը վերլուծելիս պարզ է դարձել, որ խնդիրը մի քանի տվյալներն են, որոնք մնացած տվյալների բաշխվածությունից էականորեն շեղվում են (անգլ.՝ outlier): Այդ շեղվող մի քանի տվյալները հետագա վերլուծություններից հանվել են, ինչի հետևանքով հնարավոր է եղել, որ հետազոտության արդյունքները ենթարկվեն հետագա վիճակագրական վերլուծության:

Հարցարանի ներքին համաձայնվածությունը կամ, որ նույնն է, ներքին հուսալիությունը ստուգելու համար օգտվել ենք Կրոնբախի α -ի ցուցանիշից: Այն ցույց է տալիս, թե յուրաքանչյուր պնդում որքանով է համապատասխանում այն սանդղակին, որը չափում է: Իսկ հարցարանի կայունությունը կամ արտաքին հուսալիությունը ստուգվել է թեստ-ռեթեստային մեթոդով: Մեթոդի էությունն այն է, որ հետազոտվողների մի մասը նույն հարցարանը լրացրել է երկու անգամ երկու ամիս ընդմիջմամբ, այսինքն՝ կատարվել է կրկնակի թեստավորում: Հետազոտությանը մասնակցել է 68 ուսանող ($M_{տարիք}=19.1$, $SD_{տարիք}=0.790$, կանայք՝ 98%):

Կրոնբախի α -ի գործակցի արդյունքները HEXACO-ի յուրաքանչյուր մեծ գործոնի համար ներկայացված են Աղյուսակ 3.1-ում և Աղյուսակ 3.2-ում: Ինչպես երևում է աղյուսակներում ներկայացված տվյալներից, Կրոնբախի α -ն վեց գործոնների համար ստացվել է 0,7-ից բարձր: Նույն պատկերն է դիտվում 24 ենթագործոնների ալֆաների գործակիցները դիտարկելիս: Այսինքն՝ ստացվում է, որ պնդումների վերանայվելուց և վերաձևակերպվելուց հետո սանդղակները դարձել ավելի հուսալի:

Ինչ վերաբերում է թեստ-ռեթեստային կորելյացիոն գործակցին, ապա այս դեպքում արդյունքները համարվում են հուսալի, եթե գործակիցը 0,75-0,8 է և ավելի³¹: HEXACO-ի վեց գործոնները համապատասխանում են այդ չափանիշին: Ինչ վերաբերում է 24 ենթագործոնների հուսալիությանը, ապա այստեղ ալֆան ստացվել է 0,6-0,8 սահմաններում: Այս ցուցանիշները կարելի է համարել հուսալի, քանի որ հարցերի քանակը յուրաքանչյուր ենթագործոնում քիչ են՝ 4-ը, ինչը կարող է նպաստել, որ ալֆան ստացվի մի փոքր ցածր: Այսպիսով՝ հարցարանը կարող ենք համարել կայուն:

HEXACO PI-R հարցարանի հայերեն տարբերակի սանդղակների վալիդությունը ստուգելու համար յուրաքանչյուր սանդղակի համար իրականացվել է հիմնական բաղադրիչների վերլուծություն (անգլ.՝ PCA կամ Principal component analysis), որտեղ դուրս բերվող գործոնների քանակը նշվել է 1: Ընդհանուր առմամբ իրականացվել է 30 մոդելների վերլուծություն: Ստացված մո-

³¹ Տե՛ս **Howitt D. & Cramer D.** (2011) *An introduction to statistics in psychology*. Harlow, England: Prentice Hall., էջ 444-454:

դելները բացատրում են ամբողջի ցրվածության 23-68 %-ը, Կայգեր-Մայեր-Օլկինի գործակիցը մոդելից մոդել տատանվում է 0,493-0,806, որը համարվում է ընդունելի³², Բարտլետի գործակցի նշանակալիության աստիճանը բոլոր մոդելների համար փոքր է 0,0001-ից³³: Ինչ վերաբերում է ամեն սանդղակը կազմող պնդումներին, ապա դրանց գործոնային գործակիցները յուրաքանչյուր սանդղակում տատանվում են 0,4-0,8: Բոլոր 6 մեծ գործոնների ու 24 ենթագործոնների համար վերը նկարագրված գործակիցները ներկայացված են Աղյուսակ 3.3-ում:

Աղյուսակ 3.3

HEXACO PI-R հարցարանի սանդղակների Հիմնական բաղադրիչների վերլուծության հիմնական վիճակագրական գործակիցները

Ենթագործոնի անվանումը	Ցրվածություն %	Կայգեր-Մայեր-Օլկինի գործակից	Բարտլետի թեստ
ԱՁՆՎՈՒԹՅՈՒՆ/ ՀԱՄԵՍՏՈՒԹՅՈՒՆ	37,5	0,806	409,22***
Անկեղծություն	57,1	0,738	74,99***
Արդարամտություն	53,4	0,681	66,16***
Ոչ ազակություն	67,9	0,791	138,31***
Չափավորություն	47,1	0,611	44,48***
ՀՈՒՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	22,5	0,681	283,6***
Վախկոտություն	49,1	0,677	45,43***
Տազնապայմանություն	47,3	0,581	42,88***
Հուզական կախվածություն	52,4	0,700	63,29***
Սենտիմենտալություն	46,4	0,640	37,81***
ԷՔՍՏՐԱՎԵՐՏՈՒԹՅՈՒՆ	33,1	0,806	484,23***
Ինքնավստահություն	48,1	0,683	39,43***
Համարձակություն	49,7	0,683	50,16***
Շփվողականություն	64,2	0,752	111,06***
Աշխուժություն	68,3	0,788	134,29***
ԲԱՐՅԱՑԱԿԱՄՈՒԹՅՈՒՆ	24,2	0,642	382,36***
Ներողամտություն	48,2	0,633	48,78***
Նրբանկատություն	46,1	0,613	39,39***
Ճկունություն	35,8	0,493	17,73***
Համբերատարություն	64,6	0,747	118,58***

³² Տե՛ս Osborne Jason (2014) Best Practices in Exploratory Factor Analysis, pp. 104-119:

³³ Տե՛ս Peter S. (2017) Advice on Exploratory Factor Analysis

http://www.openaccess.bcu.ac.uk/6076/1/_staff_shares_storage%20500mb_Library_ID112668_Stat%20Advisory_New%20Statistics%20Workshops_18ExploratoryFactorAnalysis_ExploratoryFactorAnalysis4.pdf 24.02.2021, Williams B., Brown T., & Onsman A. (2010) Exploratory factor analysis: A five-step guide for novices. *Australasian Journal of Paramedicine*, 8(3), pp 4-6:

ԲԱՐԵԽՂՈՒԹՅՈՒՆ	29,4	0,769	376,36^{***}
Ճշտապահություն	50,1	0,546	62,62 ^{***}
Ջանասիրություն	43,6	0,618	31,14 ^{***}
ՊերՖեկցիոնիզմ	50,9	0,716	47,82 ^{***}
Խոհեմություն	53,9	0,673	74,22 ^{***}
ԼԱՅՆԱԽՈՂՈՒԹՅՈՒՆ	26,9	0,703	383,64^{***}
Արվեստասիրություն	47,8	0,685	39,65 ^{***}
Հետաքրքասիրություն	52,4	0,634	62,4 ^{***}
Ստեղծարարություն	55,8	0,680	81,09 ^{***}
Ոչ ավանդականություն	49,9	0,610	35,09 ^{***}

$p^{***} < 0.0001$

ՀԱՐՑԱՐԱՆԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հարցարանը բաղկացած է 100 պնդումից, յուրաքանչյուր վեց մեծ գործոնի համար՝ 16 պնդում: Յուրաքանչյուր մեծ գործոնը իր հերթին բաղկացած է չորս փոքր ենթագործոնից, որոնցից յուրաքանչյուրը չափվում է 4 պնդումով: Պնդումներից յուրաքանչյուրի համար մասնակիցը պետք է նշի, թե ինչ չափով է համաձայն դրան: Համաձայնության աստիճանը չափվում է հիմնգմիավորանոց սանդղակով, որտեղ մեկ թիվը նշանակում է, որ «ընդհանրապես համաձայն չեմ», իսկ հինգը՝ «միանշանակ համաձայն եմ»: Հարցարանի հիմնական սանդղակներն են ազնվություն/համեստություն, հուզականություն, էքստրավերտություն, բարյացակամություն, բարեխղճություն, լայնախոհություն, որոնք իրենց հերթին բաժանվում են 4 ենթագործոնի: Հարցարանն ունի 4 պնդումով չափվող լրացուցիչ սանդղակ, որը հեղինակները կոչել են ավտորուիզմ/անտագոնիզմ սանդղակ: Այն ներառված չէ որևէ գործոնի մեջ և դիտարկվում է լրիվ առանձին, քանի որ ոչ միշտ է դուրս բերվում հետազոտությունների արդյունքում, և այդ պնդումները դեռ գտնվում են հետազոտման ու ուսումնասիրման փուլում: Այդ պատճառով մեր հետազոտության մեջ այդ 4 պնդումները ընդգրկված չեն:

Արդյունքների հաշվարկը և մեկնաբանությունը

Ըստ մեթոդիկայի բանալու (տե՛ս Աղյուսակ 3.5)՝ հաշվարկվում է յուրաքանչյուր գծի և ենթագծի ընդհանուր միավորը: Ուղիղ պնդումներին տրվում են պատասխանի տարբերակի թվին համարժեք միավորներ, հակադարձ պնդումներին (բանալիում հարցի կողքին նշված է R տառը)՝ պատասխանի տարբերակի թվին հակառակ միավորներ (տե՛ս Աղյուսակ 3.4):

Աղյուսակ 3.4

Ուղիղ և հակադարձ պնդումներին համապատասխանող միավորները

Ուղիղ պնդումներ	Պատասխանի տար- բերակ	1	2	3	4	5
	Սխալոր	1	2	3	4	5
Հակադարձ պնդումներ	Պատասխանի տար- բերակ	1	2	3	4	5
	Սխալոր	5	4	3	2	1

Աղյուսակ 3.5

HEXACO PI-R հարցարանի հաշվարկի բանալի

ԱՋՆՎՈՒԹՅՈՒՆ/ՀԱՄԵՍՏՈՒԹՅՈՒՆ	
Անկեղծություն	6R, 30, 54R, 78
Արդարամտություն	12R, 36R, 60, 84R
Ոչ ազահություն	18, 42R, 66R, 90R
Չափավորություն	24, 48, 72R, 96R
ՀՈՒՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	
Վախկոտություն	5, 29R, 53, 77R
Տագնապայնություն	11, 35R, 59R, 83
Հուզական կախվածություն	17, 41R, 65, 89R
Սենսիմենտալություն	23, 47, 71, 95R
ԷՔՍՏՐԱՎԵՐՏՈՒԹՅՈՒՆ	
Ինքնավստահություն	4, 28, 52R, 76R
Համարձակություն	10R, 34, 58, 82R
Շփվողականություն	16R, 40, 64, 88
Աշխուժություն	22, 46, 70R, 94R
ԲԱՐՅԱՅԱԿԱՄՈՒԹՅՈՒՆ	
Ներողամտություն	3, 27, 51R, 75R
Նրբանկատություն	9R, 33, 57, 81
Դկունություն	15R, 39, 63R, 87R
Համբերատարություն	21R, 45, 69, 93R
ԲԱՐԵՆՂԸՈՒԹՅՈՒՆ	
Դշտապահություն	2, 26, 50R, 74R
Ջանասիրություն	8, 32, 56R, 80R
Պերֆեկցիոնիզմ	14, 38R, 62, 86
Խոհեմություն	20R, 44R, 68, 92R
ԼԱՅՆԱԽՈՂՈՒԹՅՈՒՆ	
Արվեստասիրություն	1R, 25R, 49, 73
Հետաքրքասիրություն	7, 31, 55R, 79R
Ստեղծարարություն	13R, 37, 61, 85R
Ոչ ավանդականություն	19R, 43, 67, 91R
ԱԼՏՐՈՒԹՅՄ	
	97, 98, 99R, 100R

Յուրաքանչյուր սանդղակի ընդհանուր միավորը հաշվարկելու համար այդ սանդղակի բոլոր պնդումների ստացված միավորներից հաշվարկվում է միջին թվաբանական: Յուրաքանչյուր սանդղակի արտահայտվածության ցուցանիշը պետք է լինի 1-5-ն ընկած թիվ (հնարավոր է նաև ոչ ամբողջ թիվ): Յուրաքանչյուր աստիճանի մեկնաբանությունը տրված է ստորև: Մեծ գծերի/գործոնների ընդհանուր միավորը հաշվարկվում է՝ այդ սանդղակի բոլոր պնդումներից ստացված միավորների միջին թվաբանականը կամ (որ նույն է) տվյալ գծի բոլոր ենթագծերի ընդհանուր միավորների միջին թվաբանականը հաշվարկելով:

Գործոնների նկարագրությունը³⁴

Ազնվություն/համեսություն (Honesty-Humility) գործոնից բարձր արդյունքներ ունեցողները իրենց նպատակներին հասնելու համար չեն օգտագործում այլ մարդկանց. կարելի է ասել՝ հակված չեն օրենքները խախտելու: Նրանք չեն սիրում ճոխ ու շքեղ կյանքը և հետաքրքրված չեն սոցիալական կարգավիճակը բարձրացնելով: Արտահայտվածության ցածր աստիճան ունեցող մարդիկ, ընդհակառակը, կարող են քծնել՝ իրենց ուզածին հասնելու համար, դեմ չեն խախտելու օրենքները սեփական շահերի համար, հիմնականում առաջնորդվում են նյութական արժեքներով և անընդհատ փորձում են ցույց տալ իրենց անձի կարևորությունը:

Հուզականություն (Emotionality) գործոնի բարձր արտահայտվածությամբ անձինք վախենում են ֆիզիկական վտանգներից, դժվար իրավիճակներում տագնապում են, կարիք ունեն հուզական աջակցության, ինչպես նաև հուզական կապվածություն ունեն այլ մարդկանց հետ: Գործոնի արտահայտվածության ցածր աստիճանն ուղեկցվում է սթրեսային իրավիճակներում վախի ու տագնապի բացակայությամբ: Այս տիպի մարդիկ կարիք չունեն բարձրաձայնելու իրենց խնդիրներն այլ մարդկանց մոտ:

Էքստրավերտություն (Extraversion) գործոնի բարձր արտահայտվածություն ունեցող մարդիկ դրական են տրամադրված իրենք իրենց, սիրում են առաջնորդել մարդկանց, հաճույք են ստանում սոցիալական հավաքներից ու շփումներից, կյանքով ու էներգիայով լի են: Ընդհակառակը, գործոնի ցածր արտահայտվածության դեպքում անձը կարծում է, որ ինքն այնքան էլ հայտնի չի այլ մարդկանց մեջ, անհարմար են զգում, երբ հայտնվում են ուշադրության կենտրոնում, ակտիվ ու նախաձեռնող չեն, ինչպես նաև ավելի քիչ կենսախիճն են ու լավատես, քան մյուսները:

³⁴ **Steu Lee K., Ashton M. C.** (2004) Psychometric properties of the HEXACO personality inventory. *Multivariate Behavioral Research*, 39, pp. 329-358:

Բարյացակամություն (Agreeableness) գործոնի բարձր արտահայտվածություն ունեցող մարդիկ շուտ են ներում և մոռանում իրենց հասցված վիրավորանքը, մեղմ են ուրիշներին դատելիս, հակված են համագործակցության ու փոխօգնության, հեշտությամբ կարգավորում են իրենց հույզերը: Ցածր արտահայտվածությամբ անձինք քիմախնդիր են, սիրում են քննադատել, իրենց տեսակետը պաշտպանելիս կոպիտ են ու անգիշտ, հեշտությամբ են ջղայնանում:

Բարեխղճություն (Conscientiousness) գործոնի բարձր արտահայտվածություն ունեցող անձինք կազմակերպում են իրենց ժամանակն ու միջավայրն այնպես, որ ամեն ինչ իր տեղում լինի, նպատակին հասնում են՝ աշխատելով նախօրոք գծած պլանով: Նրանք գործն անելիս աշխատում են ոչ մի սխալ ու վրիպակ թույլ չտալ և հետագայում մի քանի անգամ ստուգում են կատարած աշխատանքը: Նման մարդիկ որոշումն ընդունելուց առաջ ամեն ինչ երկար ծանրութեթ են անում: Ցածր արտահայտվածությամբ անձինք թափփված են, դժվարությամբ են հետևում սահմանված գրաֆիկին, կարող են բավարարվել սխալներով աշխատանքից, խուսափում են բարդ խնդիրներ լուծելուց, ինչպես նաև որոշումները կայացնում են պահի ազդեցության տակ:

Լայնախոհություն/փորձին բաց լինել (Openness to Experience) գործոնի արտահայտվածությամբ մարդիկ իրենց բնույթով էսթետ են, գեղեցիկը գնահատող: Նրանք կարող են հաճույք ստանալ արվեստի գործ դիտելուց կամ ուղղակի հիմնան բնության գեղեցկությամբ: Հետաքրքրված են գիտության տարբեր ճյուղերով, հակված են յուրօրինակ ու ոչ ստանդարտ որոշումներ կայացնելուն, առօրյա կյանքում ազատորեն օգտագործում են իրենց երևակայությունը: Քիչ արտահայտվածությամբ անձինք այդքան էլ չեն տպավորվում արվեստի գործերից, իրենց հայացքներում չեն սիրում ինտելեկտուալ զրույցներ ու որոշումներ, խուսափում են նորարարություններից ու ավելի հակված են գործել ավանդական ձևերով:

Ենթագործոնների նկարագրություն

Աղյուսակ 3.6

Վեցգործոնային մոդելի խոշոր գործոններից յուրաքանչյուրի ենթագործոններն ու դրանց կարճ նկարագրությունները:

Ենթագործոնի անվանումը	Ենթագործոնի նկարագրությունը
ԱԶՆՎՈՒԹՅՈՒՆ/ ՀԱՄԵՍՏՈՒԹՅՈՒՆ	
Անկեղծություն (Sincerity)	Հակված է ազնիվ ու անկեղծ լինել միջանձնային հարաբերություններում: Ցածր արդյունքներ ունեցող մարդիկ կարող են շողոքորթել և քծնել՝ դիմացինի բարեհաճությանն ու համակրանքին արժանանալու համար: Բարձր արդյունքներով անձինք չեն կարող և չեն ցանկանում մանիպուլացել ու խաբել դիմացինին:
Արդարամտություն (Fairness)	Ունակ չէ խաբեությամբ հասնելու իր նպատակներին: Ցածր արդյունքներով անձինք կարող են խարդախությամբ, գաղտնաբար հասնել իրենց ուզածին: Բարձր արդյունքների դեպքում անձինք չեն ցանկանում առավելություն ունենալ այլ մարդկանց կամ ընդհանուր առմամբ հասարակության նկատմամբ:
Ոչ ագահություն (Greed-Avoidance)	Նրա համար անկարևոր են շքեղ, հարուստ կյանքն ու սոցիալական բարձր կարգավիճակը: Ցածր արդյունքներով անձինք ցանկանում են վայելել ու ցույց տալ հարստությունը և արտոնյալ լինելը: Բարձր արդյունքներ ունեցող անձանց համար դրամական առավելությունը կամ բարձր սոցիալական կարգավիճակը շարժիչ ուժ չէ, և դրանք հաշվի չեն առնվում:
Չափավորություն (Modesty)	Հակված է ինքն իրեն ընդունել որպես սովորական մարդ, որը մյուսներից ոչնչով չի տարբերվում: Ցածր արդյունքներ ունեցողները իրենք իրենց համարում են մյուսներից բարձր և ունեն արտոնություններ, որոնք մյուսները չունեն: Բարձր արդյունքներ ունեցողները, ընդհակառակը, իրենց համարում են սովորական մարդ:
ՀՈՒՉԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	
Վախկոտություն (Fearfulness)	Բարձր արտահայտվածությամբ անձինք շատ են վախենում ֆիզիկական ցավից, վնասվածքից և ամեն կերպ փորձում են խուսափել դրանցից: Ցածր արտահայտվածությամբ անձինք քիչ են վախենում վնասվելուց և համեմատաբար դիմացկուն են, ուժեղ և անզգա՝ ֆիզիկական ցավի նկատմամբ:
Տագնապայնություն (Anxiety)	Բարձր արտահայտվածությամբ անձինք խուճապի են մատնվում մույնիսկ չնչին դժվարությունների հանդիպելիս: Նրանք շատ մտահոգվում են մույնիսկ չնչին խնդիրների դեպքում: Ցածր արտահայտվածությամբ անձինք քիչ են հակված սթրեսի դժվարությունների հանդիպել:

Հուզական կախվածություն (Dependence)	Բարձր արտահայտվածությամբ անձինք հուզական կախվածություն ունեն այլ մարդկանցից: Նրանք կարիք և ցանկություն ունեն խոսելու իրենց դժվարությունների մասին բոլոր նրանց հետ, ովքեր կբաջալերեն ու կհանգստացնեն իրենց: Ցածր արտահայտվածությամբ անձինք ինքնավստահ են և կարողանում են խնդիրները լուծել առանց որևէ օգնության ու խորհրդի:
Սեմտիմենտալություն (Sentimentality)	Սանդղակը նկարագրում է խորը հուզական ապրումներ ունենալն ուրիշների նկատմամբ: Բարձր արտահայտվածությամբ անձինք զգում են հուզական խորը կապվածություն այլ մարդկանց նկատմամբ, ինչպես նաև զգայուն են ուրիշների ապրումների նկատմամբ: Ցածր արտահայտվածությամբ անձինք քիչ հույզեր են զգում, երբ պետք է, օրինակ, մեկին հրաժեշտ տան, կամ երբ դիմացինը մտահոգված է:
ԷՔՍՏՐԱՎԵՐՏՈՒԹՅՈՒՆ	
Ինքնավստահություն (Social Self-Esteem)	Բարձր արտահայտվածությամբ անձինք հիմնականում գոհ են իրենցից ու կարծում են, որ շրջապատում բարձր վարկանիշ ունեն, հարգված են ուրիշների կողմից: Ցածր արտահայտվածությամբ անձինք հաճախ են ունենում անպիտանելիության զգացում՝ կարծելով, որ շրջապատում այնքան էլ հայտնի չեն:
Համարձակություն (Social Boldness)	Բարձր արտահայտվածությամբ անձինք սոցիալական միջավայրում իրենց բավականին հարմարավետ են զգում, կարողանում են առանց ամաչելու ելույթ ունենալ մարդկանց առջև կամ շփվել անծանոթների հետ: Ցածր արտահայտվածությամբ անձինք ամաչում, անհարմար ու շփոթված են զգում, երբ պետք է միջավայրում նախաձեռնողականություն ցուցաբերեն կամ հանրության առաջ ելույթ ունենան:
Շփվողականություն (Sociability)	Բարձր արտահայտվածությամբ անձինք հաճույք են ստանում խնջույքներից, միջանձնային շփումներից, սիրում են մարդկանց հետ խոսել, հյուր գնալ կամ առիթներ նշել: Ցածր արտահայտվածությամբ անձինք առավելապես նախընտրում են միայնությունը. քիչ շփվող են, չեն սիրում մեծ խնջույքներ:
Աշխուժություն (Liveliness)	Բարձր արտահայտվածությամբ անձինք լի են էներգիայով և ակտիվ կյանք են վարում, հիմնականում լավատես են և համարյա միշտ պահպանում են բարձր տրամադրությունը: Ցածր արտահայտվածությամբ անձինք ոչ միշտ են ոգևորված ու էներգիայով լի:
ԲԱՐՅԱՑԱԿԱՄՈՒԹՅՈՒՆ	
Ներողամտություն (Forgiveness)	Բարձր արտահայտվածությամբ անձինք կարողանում են ներել և նորից վստահել ու ընկերություն անել մարդկանց հետ, որոնք իրենց վատություն են արել կամ ստել: Ցածր արտահայտվածությամբ անձինք քինախնդիր են և դժվարությամբ են ներում:

Նրբանկատություն (Gentleness)	Բարձր արտահայտվածությամբ անձինք մարդկանց հետ գործ ունենալիս փափուկ և ներողամիտ են, հիմնականում մարդկանց մասին կոշտ դատողություններ չեն անում: Ցածր արտահայտվածությամբ անձինք ավելի քննադատաբար են վերաբերվում ուրիշներին, քիչ նրբանկատ են:
Ճկունություն (Flexibility)	Բարձր արտահայտվածությամբ անձինք պատրաստ են գնալ փոխզիջումների և համագործակցել մարդկանց հետ, խուսափում են բանավեճերից և պատրաստ են ընդունել դիմացինի առաջարկները, եթե նույնիսկ դրանք անհիմն են: Ցածր արտահայտվածությամբ անձինք համառ են և սիրում են վիճաբանել:
Համբերատարություն (Patience)	Բարձր արտահայտվածությամբ անձինք դժվարությամբ են ափերից դուրս գալիս ու բարկանում, քանի որ բարկություն զգալու և արտահայտելու շեղք նրանց մոտ բավականին բարձր է: Ցածր արտահայտվածությամբ անձինք, ընդհակառակը, շատ արագորեն են կորցնում համբերությունն ու բարկանում:
ԲԱՐԵՆՍԻՃՈՒԹՅՈՒՆ	
Շտապակալություն (Organization)	Բարձր արտահայտվածությամբ անձինք ամեն ինչ անում են՝ սահմանված կարգերին հետևելով, սիրում են, որ ամեն ինչ իր տեղում է, պահպանում են կարգուկանոն, նախընտրում են խնդիրները լուծել հստակորեն նշված ճանապարհներով ու եղանակներով:
Ջանասիրություն (Diligence)	Բարձր արտահայտվածությամբ անձինք քրտնաջան աշխատում են՝ իրենց ուզածին հասնելու համար, ունեն աշխատանքային կայուն գործելակերպ, աշխատասեր են, ջանք չեն խնայում՝ իրենք իրենց կատարելագործելու համար: Ցածր արտահայտվածությամբ անձանց ինքնակազմակերպվածությունը մեծ չէ, և նրանք շատ ջանք չեն ներդնում՝ իրենց առջև դրված նպատակներին հասնելու համար:
Պերֆեկցիոնիզմ (Perfectionism)	Բարձր արտահայտվածությամբ անձինք փորձում են իրենց կատարած աշխատանքը հասցնել կատարելության՝ բացառելով ցանկացած սխալ: Ուշադիր ստուգում են սխալները կամ հնարավոր վրիպումները: Հակված են կատարելության և ուշադրություն են դարձնում մանրուքներին: Ցածր արտահայտվածությամբ անձինք ավելի հանդուրժող են իրենց աշխատանքներում կատարված սխալների նկատմամբ և կարևորություն չեն տալիս մանրուքներին:
Խոհեմություն (Prudence)	Բարձր արտահայտվածությամբ անձինք գործելուց առաջ երկար մտածում են և չեն գործում հույզերի ազդեցության տակ: Երկար ծանրութեթ են անում որոշում կայացնելուց առաջ, զգուշավոր են և ունեն ինքնավերահսկման բարձր մակարդակ: Ցածր արտահայտվածությամբ անձինք հիմնականում գործում են առանց երկար մտածելու և հանգամանքներն ուսումնասիրելու:

ԼԱՅՆԱԽՈՀՈՒԹՅՈՒՆ	
Արվեստասիրություն (Aesthetic Appreciation)	Բարձր արտահայտվածությամբ անձինք բավականություն են ստանում բնության և արվեստի գեղեցկությունից, հիանում են բնության հրաշալիքներով և արվեստի նմուշներով: Ցածր արտահայտվածությամբ անձանց համար արվեստի գործերը կամ բնության հրաշալիքները մեծ հիացմունքի առարկա չեն:
Հետաքրքասիրություն (Inquisitiveness)	Բարձր արտահայտվածությամբ անձինք ուսումնասիրում են գիտական հարցեր, շատ են կարդում, պրպտող են, հետազոտում են իրենց շրջապատող աշխարհը: Ցածր արտահայտվածությամբ անձինք ավելի քիչ են հետաքրքրված բնական ու սոցիալական գիտություններով, շրջապատի հետազոտմամբ:
Ստեղծարարություն (Creativity)	Բարձր արտահայտվածությամբ անձինք նախապատվությունը տալիս են նորամուծություններին, հակված են խնդիրներին տալ նոր, ինքնատիպ լուծումներ: Ցածր արտահայտվածությամբ անձինք առանձնապես քիչ են հակված ունենալ յուրօրինակ ու ինքնատիպ մտքեր:
Ոչ ավանդականություն (Unconventionality)	Բարձր արտահայտվածությամբ անձինք ընդունում են ամեն տեսակ ծայրահեղական դրսևորումներ, ունակ են ընկալելու նույնիսկ տարօրինակ մտքերը: Ցածր արտահայտվածությամբ անձինք խուսափում են էքսցենտրիկ և այլ հայացքներ ունեցող անձանցից:

ՀԱՐՑԱՐԱՆԻ ԲԼԱՆԿ

Հարգելի՛ մասնակից,

ստորև ներկայացված են մարդուն բնութագրող պնդումներ: Խնդրում ենք գնահատել յուրաքանչյուր պնդումն ըստ առաջարկված սանդղակի՝ շրջանակի մեջ վերցնելով այն թիվը, որն առավել ճիշտ կարող է բնութագրել Ձեզ:

- 1 = ընդհանրապես համաձայն չեմ,**
2 = համաձայն չեմ,
3 = չեզոք եմ (ո՛չ համաձայն եմ, ո՛չ էլ համաձայն չեմ),
4 = համաձայն եմ,
5 = միանշանակ համաձայն եմ:

Ուշադրություն դարձրե՛ք ոչ թե նրան, թե ինչպիսին կցանկանաք Ձեզ տեսնել, այլ ինչպիսին եք ներկայանում: Ավելի ճշգրիտ գնահատելու համար Ձեր որակները համեմատե՛ք Ձեզ նույն տարիքի ու սեռի մարդկանց հետ:

Խնդրում ենք պատասխանել բոլոր պնդումներին, եթե անգամ լիարժեք վստահ չեք Ձեր պատասխաններում:

	Ընդհանրապես համաձայն չեմ	Համաձայն չեմ	Չեզոք եմ (ո՛չ համաձայն եմ, ո՛չ էլ համաձայն չեմ)	Համաձայն եմ	Միանշանակ համաձայն եմ
1. Պատկերասրահ այցելելն ինձ համար բավականին ծանձրալի կլիներ:	1	2	3	4	5
2. Ես բավականին հաճախ եմ մաքրում իմ աշխատասենյակը կամ բնակարանը:	1	2	3	4	5
3. Ես հազվադեպ եմ քեն պահում նույնիսկ այն մարդկանց հանդեպ, որոնք ինձ հետ շատ վատ են վարվել:	1	2	3	4	5
4. Ընդհանուր առմամբ ինքս ինձնից գոհ եմ, ինչը հիմնավորված է:	1	2	3	4	5
5. Ես կվախենայի, եթե ստիպված լինեի ճամփորդել եղանակային վատ պայմաններում:	1	2	3	4	5
6. Եթե որևէ բան ստանալու անհրաժեշտություն ունենամ մի մարդուց, որին ես չեմ սիրում, ուզածս ստանալու համար ես շատ բարեհամբույր կլինեմ նրա հետ:	1	2	3	4	5

7.	Հետաքրքիր է իմանալ այլ երկրների պատմության ու քաղաքականության մասին:	1	2	3	4	5
8.	Աշխատելիս իմ առջև հաճախ դնում եմ հավակնոտ նպատակներ:	1	2	3	4	5
9.	Մարդիկ ինձ երբեմն ասում են, որ ես չափազանց քննադատ եմ այլ մարդկանց հանդեպ:	1	2	3	4	5
10.	Խմբային հանդիպումներում ես հազվադեպ եմ արտահայտում իմ կարծիքը:	1	2	3	4	5
11.	Երբեմն անհանգստանում եմ նույնիսկ հասարակ բաներից և ոչինչ չեմ կարող անել, որ չանհանգստանամ:	1	2	3	4	5
12.	Եթե իմանայի, որ երբեք չեմ բռնվի, ապա պատրաստ կլինեի միլիոն դոլար գողանալ:	1	2	3	4	5
13.	Ես ավելի շուտ կնախընտրեմ նույնատիպ և հստակ, քան թե ստեղծագործական մոտեցում պահանջող աշխատանք:	1	2	3	4	5
14.	Ես հաճախ արածս գործը մի քանի անգամ ստուգում եմ, որպեսզի վստահ լինեմ, որ սխալներ չունեմ:	1	2	3	4	5
15.	Երբեմն մարդիկ ինձ ասում են, որ ես չափազանց համառ եմ:	1	2	3	4	5
16.	Ես խուսափում եմ մարդկանց հետ պարզապես զրույցի բռնվելուց:	1	2	3	4	5
17.	Երբ ես չափազանց վշտացած եմ. ինձ պետք է մեկը, ով կսփռվի ինձ:	1	2	3	4	5
18.	Շատ փող ունենալն ինձ համար առանձնապես կարևոր չէ:	1	2	3	4	5
19.	Ինձ համար ծայրահեղական գաղափարներին հետևելը ժամանակի վատնում է:	1	2	3	4	5
20.	Որոշումներս հիմնականում կայացնում եմ պահի ազդեցությամբ, այլ ոչ թե երկար ծանրութեթև անելուց հետո:	1	2	3	4	5
21.	Մարդիկ համարում են, որ ես շուտ եմ ավերից դուրս գալիս:	1	2	3	4	5
22.	Ես գրեթե միշտ էներգիայով լի եմ:	1	2	3	4	5
23.	Երբ լացող մարդ եմ տեսնում, քիչ է մնում՝ ես էլ լաց լինեմ:	1	2	3	4	5
24.	Ես սովորական մարդ եմ, որն ավելի լավը չէ, քան մյուսները:	1	2	3	4	5
25.	Ես իմ ժամանակը չէի ծախսի՝ կարողալով պոեզիա:	1	2	3	4	5
26.	Ես նախօրոք ծրագրում և կազմակերպում եմ անելիքներս, որպեսզի խուսափեմ վերջին պահին առաջացող խառնաշփոթից:	1	2	3	4	5
27.	Կարծում եմ, որ պետք է ներել ու մոռանալ նրանց, ովքեր վատ են վերաբերվել ինձ:	1	2	3	4	5

28.	Կարծում եմ, որ մարդկանց մեծ մասը հավանում է իմ բնավորության որոշ կողմեր:	1	2	3	4	5
29.	Ես դեմ չեմ վտանգավոր աշխատանք կատարելուն:	1	2	3	4	5
30.	Աշխատանքում առաջ գնալու համար ես կեղծավորություն չէի անի, եթե անգամ մտածեի, որ դա կօգներ:	1	2	3	4	5
31.	Ինձ դուր է գալիս ուսումնասիրել տարբեր տեղանքների քարտեզներ:	1	2	3	4	5
32.	Ես հաճախ ինձ վրա ուժ եմ գործադրում՝ նպատակներիս հասնելու համար:	1	2	3	4	5
33.	Մարդկանց սխալները հիմնականում ընդունում եմ՝ առանց նրանցից դժգոհելու:	1	2	3	4	5
34.	Տարբեր իրավիճակներում սովորաբար ես եմ առաջին քայլն անում:	1	2	3	4	5
35.	Ես շատ ավելի քիչ եմ անհանգստանում, քան մարդկանց մեծամասնությունը:	1	2	3	4	5
36.	Եթե ֆինանսական խնդիրներ ունենայի, ես դեմ չէի լինի գողացված ապրանք գնելուն:	1	2	3	4	5
37.	Ես հաճույք կստանայի արվեստի որևէ գործ, օրինակ՝ նովել, երգ կամ նկար ստեղծելով:	1	2	3	4	5
38.	Ինչ-որ բանի վրա աշխատելիս մանրութների վրա ուշադրություն չեմ դարձնում:	1	2	3	4	5
39.	Ես սովորաբար պատրաստ եմ փոխել կարծիքս, երբ մարդիկ ինձ հետ համաձայն չեն:	1	2	3	4	5
40.	Ինձ դուր է գալիս, երբ շուրջս կան շատ մարդիկ, որոնց հետ կարող եմ զրուցել:	1	2	3	4	5
41.	Ես կարող եմ հաղթահարել դժվար իրավիճակները՝ առանց ինչ-որ մեկից հուզական աջակցություն ստանալու:	1	2	3	4	5
42.	Ես կուզեի ապրել մեծահարուստ, բարձր խավի մարդկանց թաղամասում:	1	2	3	4	5
43.	Ինձ դուր են գալիս մարդիկ, որոնց հայացքները տարբերվում են մեծամասնության կողմից ընդունված կարծիքներից:	1	2	3	4	5
44.	Ես շատ սխալներ եմ անում, որովհետև գործելուց առաջ չեմ մտածում:	1	2	3	4	5
45.	Ես հազվադեպ եմ բարկանում, անգամ երբ մարդիկ ինձ վատ են վերաբերվում:	1	2	3	4	5
46.	Հիմնականում ես ուրախ եմ ու լավատես:	1	2	3	4	5
47.	Երբ ինչ-որ մեկը, ում լավ եմ ճանաչում դժբախտ է, ես իմ «մաշկի վրա» եմ զգում իր ցավը:	1	2	3	4	5
48.	Ես չեի ցանկանա, որ մարդիկ ինձ վերաբերվեն այնպես, կարծես նրանցից առավել եմ:	1	2	3	4	5

49.	Եթե ես հնարավորություն ունենայի, կուզեի դասական երաժշտության համերգի գնալ:	1	2	3	4	5
50.	Մարդիկ հաճախ կատակներ են անում իմ թափփված սեղանի կամ սենյակի վերաբերյալ:	1	2	3	4	5
51.	Եթե ինչ-որ մեկն ինձ մի անգամ խաբել է, ապա ես միշտ նրան կասկածանքով կվերաբերվեմ:	1	2	3	4	5
52.	Ջգում եմ, որ ես համակրանք վայելող մարդ չեմ:	1	2	3	4	5
53.	Ես շատ վախկոտ եմ, երբ հարցը վերաբերում է ֆիզիկական վտանգին:	1	2	3	4	5
54.	Եթե ինչ-որ մեկից ինձ որևէ բան է հարկավոր, ես կծիծաղեմ նույնիսկ նրա անհաջող կատակների վրա:	1	2	3	4	5
55.	Ինձ համար շատ ձանձրալի կլինեն գիտության և տեխնիկայի պատմության մասին գրքերի ընթերցումը:	1	2	3	4	5
56.	Երբ նպատակ եմ դնում, հաճախ ճանապարհի կեսից հետ եմ կանգնում՝ առանց դրան հասնելու:	1	2	3	4	5
57.	Ես մեղմ եմ ուրիշներին դատելիս:	1	2	3	4	5
58.	Երբ մարդկանց խմբում եմ, հաճախ ես եմ հանդես գալիս խմբի անունից:	1	2	3	4	5
59.	Անգամ անհամաձայն վիճակում կարողանում եմ հեշտությամբ քնել:	1	2	3	4	5
60.	Ես երբեք կաշառք չեի վերցնի, եթե նույնիսկ այն շատ մեծ լիներ:	1	2	3	4	5
61.	Հաճախ ասում եմ, որ վառ երևակայության տեր մարդ եմ:	1	2	3	4	5
62.	Ես միշտ փորձում եմ անսխալ, ճշգրիտ լինել իմ աշխատանքում, եթե նույնիսկ դրա պատճառով շատ ժամանակ եմ կորցնում:	1	2	3	4	5
63.	Երբ մարդիկ ասում են, որ ես սխալ եմ, ես միանգամից հակաճառում եմ նրանց:	1	2	3	4	5
64.	Ես ավելի շատ նախընտրում եմ մարդկանց հետ ակտիվ շփում պահանջող աշխատանք, քան այնպիսի աշխատանք, որը միայնակ եմ անում:	1	2	3	4	5
65.	Երբ մտահոգված եմ լինում, ուզում եմ խոսել այդ մասին այլ մարդու հետ:	1	2	3	4	5
66.	Կուզենայի, որ ինձ տեսնեին շատ թանկարժեք մեքենա վարելիս:	1	2	3	4	5
67.	Ես որոշ չափով ինձ համարում եմ արտասովոր հայացքներ ունեցող մարդ:	1	2	3	4	5
68.	Թույլ չեմ տալիս, որ իմ հույզերը ղեկավարեն վարքս:	1	2	3	4	5

69.	Մարդկանց մեծ մասն ավելի հեշտությամբ է գայրանում, քան ես:	1	2	3	4	5
70.	Մարդիկ ինձ հաճախ ասում են, որ ես պետք է փորձեմ ավելի կենսուրախ լինել:	1	2	3	4	5
71.	Ես ծանր զգացողություն եմ ունենում, երբ իմ մտերիմներից մեկը երկար ժամանակով մեկնում է:	1	2	3	4	5
72.	Կարծում եմ, որ արժանի եմ ավելի շատ հարգանքի, քան ցանկացած սովորական մարդ:	1	2	3	4	5
73.	Երբեմն ես սիրում եմ ուղղակի նայել, թե ինչպես է քամին շարժում ծառերի տերևները:	1	2	3	4	5
74.	Աշխատելիս երբեմն դժվարություններ եմ ունենում անկազմակերպվածությանս պատճառով:	1	2	3	4	5
75.	Ինձ համար դժվար է լիովին ներել մեկին, ով ինձ վատություն է արել:	1	2	3	4	5
76.	Ես երբեմն զգում եմ, որ անպետք մարդ եմ:	1	2	3	4	5
77.	Նույնիսկ արտակարգ իրավիճակներում հայտնվելիս ես չեի վախենա:	1	2	3	4	5
78.	Ես չեի ձևացնի, թե տվյալ մարդն ինձ դուր է գալիս միայն նրա համար, որ նա ինձ լավություն աներ:	1	2	3	4	5
79.	Ինձ երբեք դուր չի եկել հանրագիտարան թերթերը:	1	2	3	4	5
80.	Ես անում եմ միայն այնքան աշխատանք, որքան բավարար է՝ գլուխս պահելու համար:	1	2	3	4	5
81.	Անգամ, եթե մարդիկ շատ սխալներ են գործում, ես հազվադեպ եմ բացասաբար արտահայտվում:	1	2	3	4	5
82.	Ես բավականին ամաչում եմ, երբ մարդկանց խմբի առջև եմ խոսում:	1	2	3	4	5
83.	Ես շատ եմ անհանգստանում, երբ կարևոր որոշման եմ սպասում:	1	2	3	4	5
84.	Ես կեղծ փող կօգտագործեի, եթե համոզված լինեի, որ չեմ բռնվի:	1	2	3	4	5
85.	Չեմ կարծում, որ ես գեղարվեստական ընդունակություններ ունեցող կամ ստեղծագործ մարդ եմ:	1	2	3	4	5
86.	Մարդիկ հաճախ ասում են, որ ես ամեն ինչում ձգտում եմ կատարելության:	1	2	3	4	5
87.	Ես ուրբամբ եմ համաձայնում մարդկանց հետ, երբ համոզված եմ լինում, որ ես իսկապես ճիշտ եմ:	1	2	3	4	5

88.	Առաջին բանը, որ միշտ անում եմ նոր վայրում, բնկերներ գտնելն է:	1	2	3	4	5
89.	Ես հազվադեպ եմ քննարկում իմ խնդիրներն այլ մարդկանց հետ:	1	2	3	4	5
90.	Ես մեծ հաճույք կստանայի թանկարժեք ու շքեղ իրեր ունենալուց:	1	2	3	4	5
91.	Գաղափարական քննարկումները ձանձրալի են ինձ համար:	1	2	3	4	5
92.	Ես նախընտրում եմ անել այն, ինչն այդ պահին մտքիս է գալիս, քան այն, ինչը նախօրոք ծրագրում եմ:	1	2	3	4	5
93.	Ինձ դժվար է զայրույթս զսպել, երբ ինձ վիրավորում են:	1	2	3	4	5
94.	Մարդկանց մեծամասնությունն ինձանից ավելի ակտիվ ու լավատես է:	1	2	3	4	5
95.	Ես չեմ հուզվում նույնիսկ այնպիսի իրավիճակներում, երբ մարդկանց մեծ մասը շատ զգացմունքային է:	1	2	3	4	5
96.	Ուզում եմ, որ մարդիկ իմանան, որ ես բարձր կարգավիճակ ունեցող կարևոր մարդ եմ:	1	2	3	4	5
97.	Կարեկցում եմ այն մարդկանց, որոնք ավելի քիչ հաջողակ են, քան ես:	1	2	3	4	5
98.	Ես փորձում եմ առատաձեռն լինել կարիքավորների հանդեպ:	1	2	3	4	5
99.	Ինձ չի անհանգստացնում այն, որ կվիրավորեմ մեկին, ում չեմ հավանում:	1	2	3	4	5
100.	Մարդիկ կարծում են, որ ես սառնասիրտ մարդ եմ:	1	2	3	4	5

4. «ՄՈՒԹ ԵՌՅԱԿ» ՀԱՐՑԱՐԱՆ (DARK TRIAD DIRTY DOZEN)

ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐ

Անձի նկարագրման «Մութ եռյակ» մոդելը համեմատաբար նոր մոտեցում է: Մոդելի հիմնական առանձնահատկությունն այն է, որ դիտարկվում են անձի բացասական, հակասոցիալական, մռայլ կողմերը՝ փսիխոպաթիան, նարցիսիզմը և մաքիավելիզմը: Մութ եռյակը կազմող երեք գծերը երկար տարիներ ուսումնասիրվել են առանձին-առանձին և վերաբերել են կլինիկական հոգեբանության կամ հոգեբուժության ոլորտին: 1998 թ. Ջ. Մաքիոսկին, Ու. Ուորզելն ու Ք. Սզյարտոն հայտարարեցին, որ այս երեք գծերը նորմալ, ոչ կլինիկական ընտրանքների դեպքում միմյանց փոխարինում են, ինչն էլ բերեց գիտական համայնության քննադատությանը³⁵: Սակայն հետագայում Դ. Պոլիուսը և Կ. Ուիլյամսը իրենց հետազոտություններում գտան բավականաչափ ապացույցներ, ըստ որոնց՝ փսիխոպաթիան, նարցիսիզմը և մաքիավելիզմը իրարից անկախ կառույցներ են, բայց հարկավոր են հետագա ուսումնասիրություններ՝ հասկանալու համար, թե որ դեպքերում են դրանք միմյանց փոխարինում, քանի որ հայտնաբերվել են դրական կորելյացիոն կապեր նշված երեք գծերի միջև: Պոլիուսի և Ուիլյամսի շնորհիվ է 2002 թ. «Մութ եռյակը» մտել հոգեբանական եզրույթների ցանկի մեջ³⁶:

Փսիխոպաթիան ու նարցիսիզմն ի սկզբանե հանդիպել են կլինիկական հոգեբանության տեսության և պրակտիկայի ոլորտներում, ու երկուսն էլ անձնային խանգարումներ են DSM-IV-TR-ում³⁷:

ՏԵՂԱՅՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Հետազոտությանը մասնակցել է տարբեր բուհերի ընդհանուր թվով 266 ուսանող, որոնցից 44,7%-ը՝ տղամարդ, իսկ 55,3 %-ը՝ կին ($M_{տարիք}=19.26$, $StDev_{տարիք}=1.346$): Հարցարանի ներքին համաձայնվածությունը կամ, որ նույնն է, ներքին հուսալիությունը ստուգելու համար օգտվել ենք Կրոնբախի α -ի ցուցանիշից: Այն ցույց է տալիս, թե յուրաքանչյուր պնդում որքանով է հա-

³⁵ Տե՛ս **McHoskey J.W., Worzel W., Szyarto C.** (1998) Machiavellianism and psychopathy // *Journal of Personality and Social Psychology*, Vol. 74, Is. 1, pp. 192-210:

³⁶ Տե՛ս **Paulhus D. L. & Williams K. M.** (2002) The dark triad of personality: narcissism, Machiavellianism and psychopathy. *Journal of Research in personality*, 36, pp. 556–563:

³⁷ Տե՛ս **Furnham A., Richards S. C. & Paulhus, D. L.** (2013) The dark triad of personality: A 10 year review. *Social and Personality Psychology Compass*, 7(3), pp. 199-216:

մապատասխանում այն սանդղակին, որը չափում է: Հետազոտության արդյունքների վիճակագրական վերլուծության արդյունքում հաշվվել են մաս սանդղակներից յուրաքանչյուրի միջին արդյունքները, ստանդարտ շեղումները (Աղյուսակ 4.1):

Աղյուսակ 4.1
«Մութ եռյակի» հիմնական սանդղակների նկարագրողական վիճակագրության արդյունքները

	Միջին (M)	Ստանդարտ շեղում (StDev)	Կրոնբախի α (Kronbach's α)
Նարցիսիզմ	4,3	1,602	0,813
Փսիխոպաթիա	2,8	1,598	0,526
Մաքիավելիզմ	3,3	1,621	0,800

Փսիխոպաթիայի համար Կրոնբախի α -ների ցուցանիշը ցածր է ստացվել, ինչը մեր կարծիքով պայմանավորված է նրանով, որ յուրաքանչյուր սանդղակի համար հարցերի քանակը քիչ է, ընդամենը՝ չորս հարց³⁸: Հասկանալու համար դուրս են բերվում երեք հիմնական սանդղակները, ինչպես մաս հարցաքանի վալիդությունը ստուգելու համար կատարվել է գործոնային վերլուծություն, որպես մեթոդ ընտրվել է հիմնական բաղադրիչների վերլուծությունը, պտտման տեսակը՝ վարիմաքս: Ստացված մոդելը բացատրում է ամբողջի ցրվածության 59 %-ը, Կայգեր-Մայեր-Օլկինի գործակիցը հավասար է 0.848, որը համարվում է ընդունելի, Բարտլետի գործակցի նշանակալիության աստիճանը փոքր է 0,001-ից³⁹: Գործոնային վերլուծության արդյունքում դուրս են բերվել անձնային հիմնական գծերը, որտեղ յուրաքանչյուր հարցն ունի 0,6-ից բարձր գործակից: Գործոնային վերլուծության արդյունքները հիմք են դառնում, որպեսզի, չնայած Կրոնբախի α -ի ցածր ցուցանիշին, թարգմանված հարցարանը համարվի վալիդ և կիրառվի՝ հետազոտություններ կատարելու համար⁴⁰: Գործոնային վերլուծության արդյունքները ներկայացված են Աղյուսակ 4.2-ում:

Աղյուսակ 4.2
«Մութ եռյակ» հարցարանի հարցերի գործոնային վերլուծության արդյունքները

	Մաքիավելիզմ	Փսիխոպաթիա	Նարցիսիզմ
Ես հակված եմ մարդկանց վրա տարբեր ձևերով ազդել՝ ուզածիս հասնելու համար:	.713		
Ուզածիս հասնելու համար ես ստեղ եմ:	.809		

³⁸ Տե՛ս **Osborne Jason** (2014) Best Practices in Exploratory Factor Analysis, pp. 104-119:

³⁹ Տե՛ս **Williams B., Brown T. & Onsman A.** (2010) Exploratory factor analysis: A five-step guide for novices. *Australasian Journal of Paramedicine*, 8(3), էջ 4-6:

⁴⁰ Տե՛ս մույն տեղը, էջ 7-13:

Ես շողոքորթել եմ՝ ուզածիս հասնելու համար:	.822		
Ես հակված եմ մարդկանց օգտագործել իմ նպատակների համար:	.824		
Ես ոչնչի համար չեմ զղջում:		.595	
Ես չեմ անհանգստանում՝ իմ արարքների բարոյական լինելու համար:		.690	
Ես սառնասիրտ եմ և զգայուն չեմ:		.637	
Ես ցինիկ եմ:		.688	
Ես ուզում եմ, որ մարդիկ հիանան ինձնով:			.753
Ես ուզում եմ, որ մարդիկ ինձ վրա ուշադրություն դարձնեն:			.870
Ես ձգտում եմ հեղինակություն ու դիրք ունենալ:			.820
Ես ուրիշներից հատուկ վերաբերմունք եմ սպասում:			.763

ՀԱՐՅԱՐԱՆԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Մութ եռյակ կեղտոտ դյուժին» (անգլ.՝ Dark Triad Dirty Dozen) հարցաթերթը⁴¹ բաղկացած է 12 պնդումից, որոնց հետագոտվողը պետք է տա իր համաձայնության աստիճանը՝ գնահատելով 1 (ընդհանրապես համաձայն չեմ) - 7-միավորանոց (միանշանակ համաձայն եմ) սանդղակով: Մեթոդիկայի հիմնական սանդղակներն են մաքիավելիզմը, փսիխոպաթիան և նարցիսիզմը:

Արդյունքների հաշվարկը և մեկնաբանությունը

Ըստ մեթոդիկայի բանալու՝ հաշվարկվում է յուրաքանչյուր գծի ընդհանուր միավորը: Տվյալ գործոնի համար արդյունքը հաշվարկվում է՝ ըստ բանալու բոլոր պնդումների միավորների միջին թվաբանականի: Աղյուսակ 4.3-ում ներկայացված է մեթոդիկայի բանալին:

Աղյուսակ 4.3

«Մութ եռյակ» հարցարանի հաշվարկի բանալի

Սանդղակի անվանումը	Հարցի համարը
Մաքիավելիզմ	1, 2, 3, 4
Փսիխոպաթիա	5, 6, 7, 8
Նարցիսիզմ	9, 10, 11, 12

⁴¹ Տե՛ս Jonason P. K. & Webster G. D. (2010) The dirty dozen: A concise measure of the dark triad. *Psychological Assessment*, 22(2), pp. 420-432:

Գործոնների նկարագրությունը

Փսիխոպաթիայի շատ ուսումնասիրություններ կատարվել են դատապարտյալների կամ հոգեկան շեղումներ ունեցող օրինազանցների հետ: Սակայն առաջնային կամ երկրորդային փսիխոպաթիա ունեցողներից ոչ բոլորն են օրինազանցներ, հետևաբար անհրաժեշտություն առաջացավ այն ուսումնասիրելու նաև սովորական մարդկանց ընդհանուր համախմբության շրջանում՝ փսիխոպաթիան դիտարկելով որպես անձնային գիծ⁴², ինչի շնորհիվ էլ այն կարող է ձեռք բերել սոցիալական որոշակի առավելություն⁴³: Հետագայում առանձնացրել են փսիխոպաթիայի ախտանիշային ու միջնախտանիշային տեսակներ: Վերջինս ինչ-որ տեղ դիտարկվում էր նաև որպես անձնային նորմալ գծերի շեղատալլում և չափվում էր, օրինակ, «Մեծ հնգյակի» հարցարանի միջոցով⁴⁴: Փսիխոպաթիային բնորոշ են անպատասխանատվությունը, ապրումակցման պակասը, միջանձնային մանիպուլյացիաները, հակասոցիալական վարքը, ցուփ ու շվայտ կյանք վարելը⁴⁵: Չնայած այս հատկություններին ու իրենք իրենց և մյուսների նկատմամբ ապակառուցողական վարքի ցուցաբերմանը՝ նրանք կարող են լավ կատարել կարճաժամկետ աշխատանքներ:

Նարցիսիզմի գաղափարը գալիս է հոգեվերլուծական ուղղությունից և դիտարկվում է որպես պաթոլոգիական ինքնասիրահարվածություն, որը փոքր տարիքում արտահայտվում է՝ ինքն իրենով հմայված լինելու, իսկ ավելի մեծ տարիքում՝ հայտնի լինելու տարվածության հանգամանքներով⁴⁶: Նարցիսիզմի ուսումնասիրությունների տեղափոխումը կլինիկական դաշտից դեպի միջնախտանիշային տեղի ունեցավ, երբ լույս տեսավ Ռ. Ռասկինի և Ք. Հալլի «Նարցիստիկ անձի ուսումնասիրում» (անգլ.՝ Narcissistic Personality Inventory կամ NPI) հոդվածը, որտեղ նարցիստիկ անձին տրվում էին գերազանցության, մյուսներից վեր լինելու բնութագրիչներ⁴⁷: Նարցիստները չափից ավելի գնահատում են և գերազնահատում են իրենց եսը՝ ցածրացնելով մյուսներին: Նրանց բնորոշ են սնափառությունը, ինքն իրենով ու իր գործողություններով

⁴² Տե՛ս **Jakobwitz S. & Egan V.** (2006) The dark triad and normal personality traits. *Personality and Individual Differences*, 40(2), pp. 331-339:

⁴³ Տե՛ս **Levenson M. R.** (1992) Rethinking psychopathy. *Theory & Psychology*, 2(1), pp. 51-71:

⁴⁴ Տե՛ս **Jakobwitz S., & Egan V.** նշվ. աշխ.:

⁴⁵ Տե՛ս **Rauthmann J. F. & Kolar G. P.** (2012) How “dark” are the Dark Triad traits? Examining the perceived darkness of narcissism, Machiavellianism, and psychopathy. *Personality and Individual Differences*, 53(7), pp. 884-889:

⁴⁶ Տե՛ս edited by **Sandler J., Person E., Fonagy P.** (1991) For the International Psychoanalytical Association. *Freud's "On Narcissism-an Introduction"*. New Haven Yale University Press, 3-32:

⁴⁷ Տե՛ս **Raskin R. N. & Hall C. S.** (1979) Narcissistic Personality Inventory. *Psychological Reports*, 45 (2), 590:

կլանված լինելը, մեծամտությունը: Երբեմն նրանց վարքում դրսևորվում են դրական հատկություններ, ինչպիսիք են լիդերական հատկությունները, բարձր կարգավիճակին ձգտելը, կարճաժամկետ հայտնիությունն ու համագործակցությունը: Ամեն դեպքում վերոնշյալ դրական կողմերը զուգակցվում են բացասականով, օրինակ՝ խոցելիությամբ, քիչ սկզբունքայնությամբ, երկարատև հարաբերություններ հաստատել չկարողանալով⁴⁸:

Մաքիավելիզմի գաղափարն այլ ծագում ունի: Ի տարբերություն փսիխոպաթիայի ու նարցիսիզմի՝ այն երբևիցե չի դիտարկվել որպես հոգեկան կամ անձնային շեղում, պաթոլոգիա: Մաքիավելիզմն իր անունը ստացել է փիլիսոփա Նիկոլո Մաքիավելիի պատվին և նկարագրում է մարդկանց, որոնք միջանձնային հարաբերություններում հակված են մանիպուլյացիաների, իրենց նպատակներին հասնելու համար պատրաստ են ամեն ինչի, նորմալ են համարում դիմացինին խաբելն ու սեփական նպատակին ծառայեցնելը⁴⁹: Ռ. Կրիստին և Ֆ. Գրեյսը ստեղծել են «MACH-IV» հարցաթանը, որը մաքիավելիզմի արտահայտվածության բացահայտման հիմնական գործիքներից մեկն է⁵⁰: Մաքիավելիստներին բնորոշ են սառը, ցինիկ և պրագմատիկ մտածողությունը, բարոյական նորմերին չհետևելը, խարդախությունը, նենգությունը և դիմացինին շահագործելը: Նրանք կարողանում են երկարատև ու ստրատեգիկ պլանավորել իրենց գործողությունները: Իշխանությունը և փողը այն հիմնական դրդապատճառներն են, որոնք նման մարդկանց մղում են գործունեության:

Մաքիավելիստների բնութագրերից են նաև ճարպկությունը, ճարտարությունը, իշխանության ձգտումը, աշխատանքում ներքին դրդապատճառների պակասը, ինչը միջանձնային հարաբերություններում անտանելի է դարձնում նրանց, սակայն հնարավորություն է տալիս լինելու լիդեր ու ղեկավար⁵¹:

⁴⁸ Տե՛ս Rauthmann J. F. & Kolar G. P. (2012) նշվ. աշխ.:

⁴⁹ Տե՛ս McHoskey J. W., Worzel W. & Szyarto C. (1998) Machiavellianism and psychopathy. *Journal of Personality and Social Psychology*, 74(1), pp. 192-210:

⁵⁰ Տե՛ս Christie R. & Geis F. (1970) *Studies in Machiavellianism*. New York: Academic Press, pp. 10-34:

⁵¹ Տե՛ս Rauthmann J. F. & Kolar G. P. (2012) նշվ. աշխ.:

ՀԱՐՑԱՐԱՆԻ ԲԼԱՆԿ

Համաձայն եք հետևյալ պնդումներին.

- 1 – բացարձակ համաձայն չեմ,
- 2 – համաձայն չեմ,
- 3 – որոշ չափով համաձայն չեմ,
- 4 – ո՛չ համաձայն չեմ, ո՛չ համաձայն եմ,
- 5 – որոշ չափով համաձայն եմ,
- 6 – համաձայն եմ,
- 7 – լիովին համաձայն եմ:

	Բացարձակ համաձայն չեմ					Լիովին համաձայ եմ	
1. Ես հակված եմ մարդկանց վրա տարբեր ձևերով ազդել՝ ուզածիս հասնելու համար:	1	2	3	4	5	6	7
2. Ուզածիս հասնելու համար ես ստել եմ:	1	2	3	4	5	6	7
3. Ես շողորորթ եմ՝ ուզածիս հասնելու համար:	1	2	3	4	5	6	7
4. Ես հակված եմ մարդկանց օգտագործել՝ իմ նպատակներին հասնելու համար:	1	2	3	4	5	6	7
5. Ես ոչնչի համար չեմ զղջում:	1	2	3	4	5	6	7
6. Ես չեմ անհանգստանում իմ արարքների բարոյական լինելու համար:	1	2	3	4	5	6	7
7. Ես սառնասիրտ եմ և զգայուն չեմ:	1	2	3	4	5	6	7
8. Ես ցինիկ եմ:	1	2	3	4	5	6	7
9. Ես ուզում եմ, որ մարդիկ հիանան ինձնով:	1	2	3	4	5	6	7
10. Ես ուզում եմ, որ մարդիկ ինձ վրա ուշադրություն դարձնեն:	1	2	3	4	5	6	7
11. Ես ձգտում եմ հեղինակություն և դիրք ունենալ:	1	2	3	4	5	6	7
12. Ես ուրիշներից հատուկ վերաբերմունք եմ սպասում:	1	2	3	4	5	6	7

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ

**ԱՆՁԻ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՀԱՐՑԱՐԱՆՆԵՐ**

5. ԲԱԶԱՅԻՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐ

ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐ

Արժեքները, լինելով սոցիալական գիտությունների կենտրոնական հասկացություններից մեկը, կարևոր նշանակություն և դեր ունեն ոչ միայն սոցիոլոգիական, այլ նաև հոգեբանական, մարդաբանական ու հարակից այլ գիտությունների ուսումնասիրություններում: Դրանք գործածվում են՝ նկարագրելու համար հասարակություններն ու տվյալ հասարակարգում ապրող մարդկանց: Արժեքների միջոցով հետազոտողները փորձում են բացատրել սովորությունների և վարքի հիմքում ընկած դրոպապատճառները⁵²:

Շ. Շվարցի բազային արժեքների տեսությունն արժեքների ամենահայտնի և կիրառվող տեսությունն է: Շվարցն իր տեսության սկզբնական տարբերակը մշակել է 1987 թ., և այն հիմնված է Ռոկիչի արժեքների տեսության վրա: Ժամանակի ընթացքում Շվարցի կողմից արժեքների կոնցեպտուալ ընկալումը փոփոխվել է՝ ավելի արատրակտից անցում կատարելով կոնկրետ չափողական մոտեցման (Անհատական արժեքների հարցարան)⁵³:

Շվարցի տեսությունը տարբերվում է արժեքների վերաբերյալ այլ տեսություններից նրանով, որ առաջարկում է արժեքների վեց հիմնական հատկություններ, որոնք բացակայում են մյուս տեսաբանների մոտ⁵⁴: Այդ հատկությունները հետևյալն են .

1) Արժեքները համոզմունքներ են, որոնք անխզելիորեն կապված են հույզերի հետ: Անձի համար կարևոր արժեքների ակտիվացումը ուղեկցվում է հուզական տարբեր արտահայտումներով: Մարդիկ, որոնց համար կարևոր է անկախության արժեքը, նյարդայնանում և բարկանում են, երբ իրենց անկախությունը վտանգի տակ է, հուսահատվում են, երբ չեն կարողանում այն պաշտպանել և երջանիկ են, երբ կարող են այն վայելել:

2) Արժեքները վերաբերում են ցանկալի նպատակներին, որոնք մղում են գործողության: Մարդիկ, որոնց համար սոցիալական կարգուկանոնը, արդա-

⁵² Տե՛ս **Schwartz S. H.** (2005) Basic human values: Their content and structure across countries. In A. Tamayo & J. B. Porto (Eds.), *Valores e comportamento nas organizações [Values and behavior in organizations]* pp. 21-55, Petrópolis, Brazil: Vozes:

⁵³ Տե՛ս **Beramendi M., Zubieta E.** (2017) Validation of the 40 and 21 items versions of the portrait values questionnaire in Argentina. *Psychologia*, 60, pp. 68-84:

⁵⁴ Տե՛ս **Schwartz S. H.** (1992) Universals in the content and structure of values: Theory and empirical tests in 20 countries. In M. Zanna (Ed.), *Advances in experimental social psychology*, Vol. 25, pp. 1-65, New York: Academic Press, **Schwartz S. H.** (2005) նշվ. աշխ.:

րությունը և օգնելու պատրաստակամությունը կարևոր արժեքներ են, շահագրգռված են հասնել այդ նպատակներին:

3) Արժեքները որոշակի գործողություններից կամ իրավիճակներից գերակա են: Որպես օրինակ՝ դիտարկենք հնազանդությունն ու ազնվությունը: Դրանք արժեքներ են, որոնք կարող են տեղին լինել աշխատավայրում կամ դպրոցում, սպորտում, բիզնեսում, քաղաքականության մեջ, ընտանիքի անդամների, ընկերների կամ անձանքների հետ շփումներում: Այս հատկանիշն արժեքները տարբերակում է ավելի մեղ հասկացություններից, ինչպիսիք են նորմերը և վերաբերմունքը, որոնք սովորաբար վերաբերում են կոնկրետ գործողություններին, օբյեկտներին կամ իրավիճակներին:

4) Արժեքները չափանիշների դեր են կատարում: Մարդիկ որոշում են, թե ինչն է լավ կամ վատ, արդարացի կամ անօրինական, կարելի է անել կամ պետք է խուսափել դրանից՝ հիմնվելով իրենց արժեքների վրա: Սակայն ամենօրյա որոշումների վրա արժեքների ազդեցությունը հազվադեպ է գիտակցվում: Արժեքները գիտակցված են դառնում այն դեպքում, երբ գործողությունների ու որոշումների համար տարբեր արժեքեր կոնֆլիկտի մեջ են մտնում:

5) Արժեքները դասակարգվում են ըստ տվյալ անձի համար ունեցած կարևորության և առաջնահերթության, ինչն էլ հնարավորություն է տալիս ինչ-որ չափով նկարագրելու մարդուն: Մարդուն բնորոշում են, ելնելով նրանից, թե նա ավելի մեծ կարևորություն է տալիս ձեռքբերումներին, թե արդարությանը, նորարարությանը, թե ավանդույթներին: Արժեքները տարբերվում են նորմերից և վերաբերմունքից նաև նրանով, որ հիերարխիկ են:

6) Սովորաբար ցանկացած վերաբերմունք կամ վարք ուղղորդվում է միաժամանակ մեկից ավելի արժեքներով, օրինակ՝ եկեղեցի գնալու վարքում արտահայտված են ավանդույթների, հարմարվողականության և անվտանգության արժեքները, իսկ հեղոնիզմի և սոխիմուլյացիայի արժեքները ճնշված են: Արժեքները վարքն ուղղորդում են այնքանով, որքանով դրանք համահունչ են համատեքստին և կարևոր են անձի համար:

Արժեքների տեսությունն առանձնացնում է 10 հիմնական արժեքներ՝ համապատասխան այն դրդապատճառներին, որոնք ընկած են յուրաքանչյուր արժեքի հիմքում⁵⁵: Ըստ տեսության, այս արժեքները համամարդկային են, քանի որ դրանք հիմնված են գոյատևման համար անհրաժեշտ համամարդ-

⁵⁵ Տե՛ս **Schwartz S., Bilsky W. Toward** (1987) A Universal Psychological Structure of Human Values. *Journal of Personality and Social Psychology*, Vol. 53, No. 3, pp. 550-562, **Schwartz S.** (1994) Are There Universal Aspects in the Structure and Contents of Human Values? *Journal of Social Issues*, Vol. 50, No. 4, pp. 19-45:

կային սկզբունքների վրա: Այս սկզբունքներն են անհատների՝ որպես կենսաբանական էակների պահանջմունքները, սոցիալական փոխհարաբերությունների համար անհրաժեշտ պահանջները⁵⁶:

Ինքնուրույնություն. Բնորոշող նպատակներն են ինքնուրույն մտածելակերպը, սեփական գործողությունների ընտրությունը, ստեղծարարությունը, աշխարհն ուսումնասիրելը, ազատությունը, անկախությունը: Ինքնուրույնությունը ծագում է կառավարման ու իշխանության պահանջմունքներից (Bandura, 1977; Deci, 1975) և ինքնուրույնության ու անկախության պահանջներից (Kluckhohn, 1951; Kohn & Schooler, 1983; Morris, 1956):

Ստիմուլյացիա. Բնորոշող նպատակներն են ոգևորությունը, նորությունը և կյանքում մարտահրավերների առկայությունը: Ստիմուլյացիայի արժեքը ծագում է բազմազանության և ստիմուլյացիայի պահանջմունքից՝ ակտիվացման օպտիմալ, դրական և ոչ վտանգավոր մակարդակ ապահովելու համար (Berlyne, 1960): Այս պահանջմունքը հավանաբար առնչվում է ինքնուրույնության արժեքի հիմքում ընկած պահանջմունքերին (Deci, 1975):

Հեղինակ. Բնորոշող նպատակը հաճույքն է կամ զգայական բավարարվածությունը: Հեղինակի արժեքը ծագում է օրգանական պահանջմունքներից և դրանց բավարարումից ստացված հաճույքից:

Ձեռքբերումներ. Բնորոշող նպատակը անձնական հաջողությունն է՝ սոցիալական չափորոշիչներին համապատասխան կոմպետենտություն ցուցաբերելով, ինչպիսին, օրինակ, հավակնոտությունն է, հաջողակ լինելու ձգտումը, սոցիալական ճանաչման հասնելը, ազդեցիկ լինելը: Ձեռքբերումների արժեքը կարևորում է կոնկրետ փոխհարաբերություններում հաջող գործելու ունակությունը:

Իշխանություն. Բնորոշող նպատակներն են սոցիալական կարգավիճակն ու փառքը, մարդկանց և ռեսուրսների հանդեպ իշխանությունն ու գերակայությունը (իշխանություն, հարստություն, սոցիալական իշխանություն): Իշխանության արժեքը կարևորում է ընդհանուր սոցիալական համակարգում գերակա դիրքի ձեռքբերումը կամ այդ դիրքի պահպանումը:

Անվտանգություն. Բնորոշող նպատակներն են ներդաշնակությունը, հասարակության, հարաբերությունների և անձի կայունությունը: Անվտանգության արժեքները բաժանվում են երկու մասի. մի մասն ուղղված են անհատական շահերին, մյուսները՝ խմբի շահերին: Սակայն երկրորդ խումբն էլ է որոշակի առումով վերաբերում սեփական անվտանգության պահանջմունքին (սոցիալական կարգուկանոն, ազգային անվտանգություն, մաքրություն):

⁵⁶ Տե՛ս **Schwartz S. H.** (2012) An Overview of the Schwartz Theory of Basic Values. *Online Readings in Psychology and Culture*, 2(1), pp. 1-20:

Կոնֆորմությանը բնորոշող նպատակն այն գործողությունների, հակումների և իմպուլսների զսպումն է, որոնք կարող են նեղացնել կամ վնասել մյուսներին կամ համապատասխան չլինել սոցիալական ակնկալիքներին ու նորմերին (հնազանդ, ինքնավերահսկում, քաղաքավարություն, հարգանք ծնողների ու մեծահասակների հանդեպ):

Ավանդականության բնորոշող նպատակներն են հարգանքը, նվիրումը և մշակութային կամ կրոնական սովորույթների ու գաղափարների ընդունումը (հարգանք ավանդույթների նկատմամբ, հնազանդություն, նվիրվածություն, ճակատագիրի ընդունում, համեստ, հոգևոր կյանք):

Ավանդականության ու կոնֆորմության արժեքները դրդապատճառային առումով իրար շատ մոտ են, դրանց երկուսի նպատակն էլ սեփական անձը սոցիալապես ընդունելի սպասելիքներին համապատասխանեցնելն է: Դրանք տարբերվում են անձի ուղղվածությամբ. կոնֆորմության դեպքում անձը ենթարկվում է այն մարդկանց, որոնց հետ հաճախ է շփվում՝ ծնողներ, ուսուցիչներ, ղեկավարներ: Ավանդականության դեպքում անձը ենթարկվում է ավելի արստրակտ գաղափարների՝ կրոնական և մշակութային ավանդույթներ ու գաղափարներ: Կոնֆորմության դեպքում մարդը հարմարվում է ներկայում փոփոխվող սպասելիքներին, իսկ ավանդականության դեպքում՝ նախկինից եկող սպասելիքներին:

Կամեցողության արժեքը բնութագրող նպատակն այն մարդկանց բարեկեցության պահպանումն ու բարելավումն է, որոնց հետ անձը հաճախակի շփում ունի, այսինքն՝ ավելի շատ ներխմբային նշանակություն ունի: Կամեցողության արժեքը ծագում է խմբի լավ գործունեությունն ապահովելու (Kluckhohn, 1951; Williams, 1968) և պատկանելիության պահանջմունքից (Korman, 1974; Maslow, 1965) (աջակցող, ազնիվ, ներողամիտ, պատասխանատու, հավատարիմ, իրական ընկեր, հասուն սեր):

Կամեցողության և կոնֆորմության արժեքները խրախուսում են անձի համար համագործակցային ու աջակցող սոցիալական հարաբերությունները՝ խուսափելով բացասական հետևանքներից: Սակայն կամեցողությունը այսպիսի վարքաձևի համար ներքնայնացված դրդապատճառային հիմք է ապահովում: Երկու արժեքներն էլ կարող են աջակցող վարքի հիմք հանդիսանալ կա՛ն առանձին-առանձին, կա՛ն երկուսը միաժամանակ:

Ունիվերսալիզմին բնորոշող նպատակներն են ըմբռնումը, արժևորումը, հանդուրժողականությունը, մարդկանց և բնության բարեկեցության պահպանումը: Սա, ի տարբերություն կամեցողության, ուղղված է ոչ թե խմբից ներս, այլ ավելի համընդհանուր է ու գլոբալ: Ունիվերսալիզմի արժեքը ծագում է մարդու ու խմբի գոյատևման պահանջմունքից: Ունիվերսալիզմն ընդգրկում է

երկու ենթախումբ. աշխարհի մարդկանց բարեկեցության համար մտահոգություն ու բնության համար մտահոգություն (լայնախոհություն, սոցիալական արդարություն, հավասարություն, խաղաղություն, բնության հետ միասնություն, իմաստություն, շրջապատի պահպանություն):

Արժեքները երկբևեռ դասավորվածություն ունեն: Առաջին զույգը «նոր փորձին բաց լինելու» և «պահպանողականության» արժեքներն են: Այստեղ կոնֆլիկտը մտքի գործողությունների ու զգացմունքների ազատությունը, փորձին բաց լինելը գնահատող արժեքների (ինքնուրույնություն, ստիմուլյացիա) ու կարգուկանոնը, ինքնավերահսկումը, անցյալի պահպանումն ու փոփոխությունները չընդունելը կարևորող արժեքների (անվտանգություն, կոնֆորմություն, ավանդույթներ) միջև է:

Երկրորդ զույգը ինքնահաստատման և ինքնահաղթահարման արժեքներն են: Այս զույգում պայքարը մյուսների բարեկեցության մասին մտահոգվելու արժեքների (ունիվերսալիզմ, կամեցողություն) և սեփական նպատակների հետևելու ու հաջողության, մյուսներին իշխելու արժեքների (իշխանություն, ձեռքբերումներ) միջև է: Հեղոնիզմի մեջ կան և՛ նոր փորձին բաց լինելու, և՛ ինքնահաղթահարման տարրեր:

Հիմնային մակարդակում արժեքները միմյանց հետ կապված դրդապատճառների շարք են ձևավորում: Այս շարքը կարելի է պատկերել շրջանաձև կառուցվածքով: Շարքի բնույթը բացատրելու համար պետք է նշել, որ հարակից արժեքները նմանատիպ դրդապատճառային հիմք ունեն.

1. իշխանություն ու ձեռքբերումներ՝ սոցիալական իշխանություն ու ինքնագնահատական,

2. ձեռքբերումներ ու հեղոնիզմ՝ ինքն իրեն ուղղված բավարարվածություն,

3. հեղոնիզմ ու ստիմուլացիա՝ հաճելի հույզեր ունենալու ցանկություն,

4. ստիմուլյացիա ու ինքնուրույնություն՝ նորության և վարպետության հանդեպ ներքին հետաքրքրություն,

5. ինքնուրույնություն ու ունիվերսալիզմ՝ վստահություն մարդկանց կարծիքի հանդեպ և բազմակարծության ընդունում,

6. ունիվերսալիզմ ու կամեցողություն՝ աջակցություն ուրիշներին և եասիրական հետաքրքրությունների տրանսցենդենցիա,

7. կամեցողություն ու ավանդականություն՝ նվիրում սեփական խմբին,

8. կամեցողություն ու կոնֆորմություն՝ նորմատիվ վարք, որը նպաստում է մտերիմ հարաբերություններին,

9. կոնֆորմություն ու ավանդականություն, ես-ի կառավարում՝ սոցիալապես ընդունելի չափանիշներին բավարարելու համար,

10. ավանդականություն ու անվտանգություն՝ առկա սոցիալական կարգերի պահպանում, ինչը կապահովի կյանքի հանդեպ վստահությունը,


11. կոնֆորմություն ու անվտանգություն՝ հարաբերություններում կարգուկանոնի և ներդաշնակության պահպանում,

12. անվտանգություն ու իշխանություն՝ վտանգներից խուսափում կամ հաղթահարում՝ հարաբերությունները և ռեսուրսները կառավարելու միջոցով⁵⁷:

Այսինքն՝ արժեքների շրջանաձև դասավորվածությունը դրդապատճառային շարք է ներկայացնում: Որքան արժեքներն իրար մոտ են, այնքան մեծ է դրանց հիմքում ընկած դրդապատճառները, որքան այդ արժեքները հեռու են, այդքան հակադիր են դրանց հիմքում ընկած դրդապատճառներ:

Նկար 5.1

Արժեքների տասը դրդապատճառային տիպերի կապերն արտացոլող տեսական մոդելը



Արժեքային չափումների մոդելն անհատական մակարդակում թույլ է տալիս դիտարկել արժեքների միջև կոնգրուենտության ու լարվածության դաշտեր, ինչպես նաև վերլուծել արժեքների միջև փոխկապվածությունները⁵⁸: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ մեր ուսումնասիրության շրջանակում տե-

⁵⁷ Տե՛ս **Schwartz S. H.** (2012) նշվ. աշխ.:

⁵⁸ Տե՛ս **Schwartz S. H.** (2011) Studying Values: Personal Adventure, Future Directions. *Journal of Cross-Cultural Psychology* 42(2), pp. 307-319:

դայնացրել ենք Շվարցի՝ անհատական արժեքների հարցարանը: Անձնային արժեքների հարցարանը համարվում է Շվարցի արժեքների հարցարանի այլընտրանք, որը վերացական հասկացությունների փոխարեն ներառում է մարդկանց բնութագրեր, ինչը հնարավորություն է տալիս չափելու տասը հիմնական արժեքները:

ՏԵՂԱՅՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

Տեղայնացման գործընթացը սկսվել է մեթոդիկայի թարգմանությունից՝ թարգմանության-հետթարգմանության եղանակով: Երկլեզու մասնագետներից մեկը (հայերեն-անգլերեն) հարցարանը անգլերենից թարգմանել է հայերեն, իսկ մյուսը՝ թարգմանված հայերեն տարբերակը՝ անգլերեն: Վերջինս ուղարկվել է հարցարանի հեղինակ Շ. Շվարցին, որն էլ հաստատել է բնօրինակին համապատասխան լինելը: Հարցարանի հետագա տեղայնացման փուլերը ներառել են տվյալների հավաքագրումն ու հուսալիության ստուգումը:

Հետազոտական ընտրանքը կազմել է 417 ուսանող (55.3%-ը՝ կին, $M_{\text{տարիք}}=18.825$, $SD_{\text{տարիք}}=1.2464$)⁵⁹: Մասնակիցներին առաջադրվել են 40 տարբեր մարդկանց բնութագրեր, և նրանք պետք է պատասխանեին, թե որքան է իր նման նկարագրված մարդը՝ ընտրելով նշված տարբերակներից մեկը: Պատասխանի տարբերակներն են՝ ա) շատ է ինձ նման, բ) նման է ինձ, գ) որոշ չափով է նման ինձ, դ) շատ քիչ է ինձ նման, ե) նման չէ ինձ, գ) բացարձակ նման չէ ինձ:

Տասը արժեքներից յուրաքանչյուրը չափող սանդղակի հուսալիությունը ստուգվել է Կրոնբախի α գործակցով⁶⁰: Ստորև աղյուսակում կարելի է տեսնել վերջինիս ցուցանիշները:

Աղյուսակ 5.1
Անհատական արժեքների հարցարանի հուսալիության ցուցանիշները՝
բայր առանձին արժեքների

Արժեք	Կրոնբախի α -ի ցուցանիշ
Կոնֆորմություն	0.769
Ավանդականություն	0.531
Կամեցողություն	0.888
Ունիվերսալիզմ	0.914
Ինքնուրույնություն	0.911

⁵⁹ Հետազոտության տվյալները հավաքագրվել են 2011-2015 թվականներին:

⁶⁰ Կրոնբախի α գործակցի արդյունքների ընդունելի մակարդակի մասին եզրակացությունները կատարվել են՝ ըստ **Taber K. S.** (2018) The Use of Cronbach's Alpha when Developing and Reporting Research Instruments in Science Education. *Research in Science Education*, 48 (6), pp. 1273-1296:

Ստիմուլյացիա	0.790
Հեղոնիզմ	0.736
Ձեռքբերումներ	0.851
Իշխանություն	0.683
Անվտանգություն	0.860

Ինչպես կարելի է տեսնել աղյուսակից, բոլոր արժեքների համար հուսալիության ցուցանիշը բարձր է⁶¹: Միայն ավանդականության արժեքի համար ունենք մի փոքր ցածր ցուցանիշ:

ՀԱՐՑԱՐԱՆԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արժեքները կազմված են 40 տարբեր մարդկանց բնութագրերից: Յուրաքանչյուր բնութագիրը ներկայացնում է անձի նպատակները, ձգտումները կամ ցանկությունները, որոնք անուղղակիորեն ցույց են տալիս տվյալ արժեքի կարևորությունը: Յուրաքանչյուր բնութագրի համար հետազոտվողը պատասխանում է, թե որքան է իր նման նկարագրված մարդը՝ ընտրելով նշված տարբերակներից մեկը: Պատասխանի տարբերակներն են ա) շատ է ինձ նման, բ) նման է ինձ, գ) որոշ չափով է ինձ նման, դ) շատ քիչ է ինձ նման, ե) նման չէ ինձ, զ) բացարձակ նման չէ ինձ: Արդյունքների վերլուծության ժամանակ վերոնշյալ տարբերակները վերափոխվում են միավորների՝ 1-6 (համապատասխանաբար «բացարձակ նման չէ ինձ»-ից մինչև «շատ է ինձ նման»): Հարցարանը լրացնողներին հրահանգ է տրվում համեմատելու բնութագրերը իրենց հետ, այլ ոչ թե հակառակը: Երբ մարդ իրեն ուրիշների հետ է համեմատում, ապա ուշադրությունը կենտրոնացնում է միայն այն հատկությունների վրա, որոնք կան բնութագրում: Յուրաքանչյուր արժեքի համար բնութագրերի քանակը տատանվում է երեքից (ստիմուլյացիա, հեղոնիզմ և ուժ) վեց (ունիվերսալիզմ), և արժեքի նշանակությունը որոշվում է նրան վերաբերող բոլոր կետերի միջին արժեքով⁶²:

Արդյունքների հաշվարկ. Տասը արժեքներից յուրաքանչյուրի նշանակությունը որոշվում է այդ արժեքին համապատասխանող բոլոր հարցերի միավորների թվաբանական միջինով (Mean)՝ բանալուն համապատասխան.

1. Կոնֆորմություն. Mean (7,16,28,36)
2. Ավանդականություն. Mean (9,20,25,38)

⁶¹ Որպես հուսալիության ցուցանիշի ընդունելի մակարդակ՝ ընդունել ենք $>,=0.7$ -ը:

⁶² Տե՛ս **Schwartz S. H.** (2008) Values: Cultural and Individual. In S. M. Breugelmans, A. Chasiotis, & F. J. R. van de Vijver (Eds.), *Fundamental questions in cross-cultural psychology*, pp. 463-493:

3. Կամեցողություն. Mean (12,18,27,33)
4. Ունիվերսալիզմ. Mean (3,8,19,23,29,40)
5. Ինքնուրույնություն. Mean (1,11,22,34)
6. Հեղոնիզմ. Mean (10,26,37)
7. Չեռքբերումներ. Mean (4,13,24,32)
8. Իշխանություն. Mean (2,17,39)
9. Անվտանգություն. Mean (5,14,21,31,35)

Մեր հետազոտական ընտրանքի համար յուրաքանչյուր արժեքի միջին և ստանդարտ շեղման ցուցանիշներն այսպիսին են եղել.

Աղյուսակ 5.2

Տասը արժեքների նկարագրական վիճակագրության ցուցանիշները մեր հետազոտական ընտրանքի համար

Արժեք	Միջին	Ստ. շեղում
Կոնֆորմություն	3.44	1.359
Ինքնուրույնություն	3.52	1.624
Չեռքբերումներ	3.46	1.436
Ավանդականություն	3.34	1.035
Ունիվերսալիզմ	3.46	1.459
Ստիմուլյացիա	3.48	1.488
Անվտանգություն	3.49	1.429
Կամեցողություն	3.47	1.592
Իշխանություն	3.53	1.209
Հեղոնիզմ	3.49	1.296

Բնականաբար, այս ցուցանիշները նորմատիվային չեն հայաստանյան նշված տարիքային խմբի համար: Այնուամենայնիվ, վերջինս կարող է կողմնորոշիչ նշանակություն ունենալ:

ՀԱՐՑԱՐԱՆԻ ԲԼԱՆԿ

Հրահանգ. Այստեղ համառոտ նկարագրված են որոշ մարդիկ: Խնդրում ենք կարդալ յուրաքանչյուր նկարագրություն և տեսնել, թե որքանով է այն համապատասխան կամ անհամապատասխան Ձեզ: Նշեք X նշանը աջ կողմի վանդակում՝ ըստ նրա, թե նկարագրված մարդը ինչքան է Ձեզ նման.

		ՈՐՔԱՆՈ՞Վ Է ԱՅՍ ՄԱՐԴԻ ՁԵՁ ՆՄԱՆ					
		Շատ է նման ինձ	Նման է ինձ	Որոշ չափով է նման ինձ	Շատ քիչ է ինձ նման	Նման չէ ինձ	Բացարձակ նման չէ ինձ
1	Նրա համար կարևոր են նոր գաղափարների շուրջ մտածելն ու ստեղծագործ լինելը: Նա սիրում է ամեն ինչ անել իրեն հատուկ ձևով:	☐	☐	☐	☐	☐	☐
2	Նրա համար կարևոր է լինել հարուստ: Նա ուզում է ունենալ շատ փող և թանկարժեք իրեր:	☐	☐	☐	☐	☐	☐
3	Նա կարևոր է համարում, որ մարդիկ հավասար վերաբերմունքի արժանանան: Նա հավատում է, որ կյանքում բոլորը պետք է հավասար հնարավորություններ ունենան:	☐	☐	☐	☐	☐	☐
4	Նրա համար շատ կարևոր է ցույց տալ իր ունակությունները: Նա ուզում է, որ մարդիկ հիանան իր արած գործերով:	☐	☐	☐	☐	☐	☐
5	Նրա համար կարևոր է ապրել անվտանգ միջավայրում: Նա խուսափում է այն ամենից, ինչը կարող է վտանգել իր ապահովությունը:	☐	☐	☐	☐	☐	☐
6	Նա կարծում է, որ կյանքում տարբեր բաներով զբաղվելը կարևոր է: Փորձելու համար նա միշտ նոր բաներ է փնտրում:	☐	☐	☐	☐	☐	☐
7	Նա կարծում է, որ մարդիկ պետք է անեն այն, ինչ ասված է իրենց: Մարդիկ միշտ պետք է հետևեն կանոններին, նույնիսկ եթե ոչ ոք չի տեսնում նրան:	☐	☐	☐	☐	☐	☐

		ՈՐՔԱՆՈ՞Վ Է ԱՅՍ ՄԱՐԴԸ ՁԵՁ ՆՄԱՆ					
		Շատ է մման ինձ	Նման է ինձ	Որոշ չափով է մման ինձ	Շատ քիչ է ինձ մման	Նման չէ ինձ	Բացարձակ մման չէ ինձ
8	Նրա համար կարևոր է լսել իրենից տարբերվող մարդկանց: Նույնիսկ, երբ համաձայն չէ նրանց հետ, մա, միևնույնն է, ուզում է հասկանալ նրանց:	☐	☐	☐	☐	☐	☐
9	Նա կարծում է, որ կարևոր է չպահանջել ավելին, քան ունես: Նա հավատում է, որ մարդիկ պետք է բավարարվեն իրենց ունեցածով:	☐	☐	☐	☐	☐	☐
10	Նա փնտրում է ամեն հնարավորություն՝ գվարճանալու համար: Նրա համար կարևոր է անել այն, ինչ իրեն հաճույք է պատճառում:	☐	☐	☐	☐	☐	☐
11	Նրա համար կարևոր է ինքնություն ունենալ կայացնել իր գործողությունների համար: Նրան դուր է գալիս ազատ լինել իր ծրագրերում և ինքնություն գտնել իր անելիքները:	☐	☐	☐	☐	☐	☐
12	Նրա համար շատ կարևոր է օգնել իր շրջապատում գտնվող մարդկանց: Նա ցանկանում է հոգ տանել նրանց բարեկեցիկ կյանքի համար:	☐	☐	☐	☐	☐	☐
13	Շատ հաջողակ լինելը կարևոր է նրա համար: Նրան դուր է գալիս մարդկանց վրա տպավորություն թողնել:	☐	☐	☐	☐	☐	☐
14	Նրա համար շատ կարևոր է, որ իր երկիրն անվտանգ լինի: Նա կարծում է, որ պետությունը պետք է զգոն լինի ներսից և դրսից եկող վտանգների հանդեպ:	☐	☐	☐	☐	☐	☐
15	Նա սիրում է ռիսկի դիմել: Նա միշտ արկածներ է որոնում:	☐	☐	☐	☐	☐	☐
16	Նրա համար կարևոր է միշտ պատշաճ վարք դրսևորել: Նա փորձում է խուսափել յուրաքանչյուր գործողությունից, որը մարդիկ սխալ կհամարեն:	☐	☐	☐	☐	☐	☐

		ՈՐՔԱՆՈ՞Վ Է ԱՅՍ ՄԱՐԴԸ ՁԵՁ ՆՄԱՆ					
		Շատ է մման ինձ	Նման է ինձ	Որոշ չափով է մման ինձ	Շատ քիչ է ինձ մման	Նման չէ ինձ	Բացարձակ մման չէ ինձ
17	Նրա համար կարևոր է վերահսկել և ուղղորդել մարդկանց: Նա ուզում է, որ մարդիկ անեն այն, ինչ ինքն է ասում:	☐	☐	☐	☐	☐	☐
18	Նրա համար կարևոր է հավատարիմ լինել ընկերներին: Նա ցանկանում է նվիրվել իր մտերիմ մարդկանց:	☐	☐	☐	☐	☐	☐
19	Նա խորապես հավատում է, որ մարդիկ պետք է հոգան բնության մասին: Շրջապատող միջավայրին հետևելը կարևոր է նրա համար:	☐	☐	☐	☐	☐	☐
20	Հավատը շատ կարևոր է նրա համար: Նա ջանում է անել այն, ինչ կրոնն է պահանջում:	☐	☐	☐	☐	☐	☐
21	Նրա համար կարևոր է, որ ամեն ինչ կազմակերպված և մաքուր լինի: Նա, իրոք, խառնաշփոթ չի սիրում:	☐	☐	☐	☐	☐	☐
22	Նա կարծում է, որ կարևոր է հետաքրքրվել տարբեր երևույթներով: Նա հետաքրքրասեր է և փորձում է ամեն ինչից գլուխ հանել:	☐	☐	☐	☐	☐	☐
23	Նա հավատում է, որ ամբողջ աշխարհի մարդիկ պետք է ներդաշնակ ապրեն: Նրա համար կարևոր է ամենուր խաղաղություն տարածելը:	☐	☐	☐	☐	☐	☐
24	Նա կարծում է, որ կարևոր է լինել հավակնոտ, մեծ ձգտումներ ունենալ: Նա ուզում է ցույց տալ, թե ինչի է ընդունակ:	☐	☐	☐	☐	☐	☐
25	Նա գտնում է, որ լավ է ամեն ինչ անել ավանդույթի համաձայն: Նրա համար կարևոր է պահպանել ավանդույթները:	☐	☐	☐	☐	☐	☐
26	Նրա համար շատ կարևոր է վայելել կյանքի հաճույքները: Նա սիրում է ինքն իրեն երես տալ:	☐	☐	☐	☐	☐	☐
27	Նրա համար կարևոր է մյուսների կարիքներին արձագանքել: Նա փորձում է աջակցել նրանց, ում ճանաչում է:	☐	☐	☐	☐	☐	☐

		ՈՐՔԱՆՈ՞Վ Է ԱՅՍ ՄԱՐԴԸ ՁԵՋ ՆՄԱՆ					
		Շատ է մման ինձ	Նման է ինձ	Որոշ չափով է մման ինձ	Շատ քիչ է ինձ մման	Նման չէ ինձ	Բացարձակ մման չէ ինձ
28	Նա համոզված է, որ միշտ պետք է հարգալից լինել իր ծնողների և տարիքով մեծերի նկատմամբ: Նրա համար կարևոր է հնազանդ լինելը:	☐	☐	☐	☐	☐	☐
29	Նա ուզում է, որ բոլորը, անգամ այն մարդիկ, որոնց չի ճանաչում, արդար վերաբերմունքի արժանանան: Նրա համար կարևոր է հասարակության թույլ անդամներին պաշտպանելը:	☐	☐	☐	☐	☐	☐
30	Նա սիրում է անակնկալներ: Նրա համար կարևոր է ոգևորիչ կյանք ունենալը:	☐	☐	☐	☐	☐	☐
31	Նա ջանում է խուսափել հիվանդանալուց: Առողջ մնալը շատ կարևոր է նրա համար:	☐	☐	☐	☐	☐	☐
32	Կյանքում առաջ գնալը կարևոր է նրա համար: Նա ձգտում է ավելի շատ հաջողությունների հասնել, քան մյուսները: Կյանքում առաջ գնալը կարևոր է նրա համար: Նա ձգտում է անել ավելի լավ, քան մյուսները:	☐	☐	☐	☐	☐	☐
33	Իրեն վիրավորած մարդկանց ներելը կարևոր է նրա համար: Նա ձգտում է նրանց մեջ տեսնել լավը և չլինել հիշաչար:	☐	☐	☐	☐	☐	☐
34	Նրա համար կարևոր է լինել անկախ: Նա սիրում է հույսն իր վրա դնել:	☐	☐	☐	☐	☐	☐
35	Կայուն կառավարություն ունենալը կարևոր է նրա համար: Նա մտահոգ է, որ սոցիալական կարգը պաշտպանված լինի:	☐	☐	☐	☐	☐	☐
36	Նրա համար կարևոր է ուրիշների հետ միշտ քաղաքավարի լինելը: Նա փորձում է երբեք չանհանգստացնել կամ չզղայնացնել ուրիշներին:	☐	☐	☐	☐	☐	☐
37	Նա իսկապես ուզում է վայելել կյանքը: Նրա համար շատ կարևոր է լավ ժամանակ անցկացնելը:	☐	☐	☐	☐	☐	☐

		ՈՐՔԱՆՈ՞Վ Է ԱՅՍ ՄԱՐԴԸ ՁԵՋ ՆՄԱՆ					
		Շատ է մնան ինձ	Նման է ինձ	Որոշ չափով է մնան ինձ	Շատ քիչ է ինձ մնան	Նման չէ ինձ	Բացարձակ մնան չէ ինձ
38	Նա կարևորում է խոնարհ ու համեստ լինելը: Նա փորձում է իր կողմը ուշադրություն չգրավել:	☐	☐	☐	☐	☐	☐
39	Նա միշտ ուզում է լինել միակը, որը որոշումներ է ընդունում: Նա սիրում է լինել միակ լիդերը:	☐	☐	☐	☐	☐	☐
40	Նրա համար կարևոր է հարմարվել և համահունչ լինել բնությանը: Նա հավատում է, որ մարդիկ չպետք է փոփոխեն բնությունը:	☐	☐	☐	☐	☐	☐

6. ՈՒՂՂԱՀԱՅԱՅ ԵՎ ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎԻԶՄ-ԻՆԴԻՎԻԴՈՒԱԼԻԶՄ

ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐ

Չկան ուրիշ այլ կոնստրուկտներ, որոնք ավելի մեծ ազդեցություն ունենային ժամանակակից միջմշակութային հոգեբանության վրա, ինչպես ինդիվիդուալիզմ-կոլեկտիվիզմի մշակութային չափումը: Մշակույթի հետազոտողներն օգտագործել են այս կոնստրուկտը, որպեսզի հասկանան, բացատրեն և կանխատեսեն մշակութային նմանությունների ու տարբերությունների բնութագրիչները մարդու վարքի բազմազան դրսևորումներում⁶³:

Ինդիվիդուալիզմ-կոլեկտիվիզմի մշակութային չափման ուսումնասիրության գործում մեծ նշանակություն են ունեցել Գ. Հոֆստեդեի աշխատությունները⁶⁴. 53 երկրներում հետազոտություն անկացնելով IBM-ի աշխատակիցների հետ՝ նա դուրս է բերել չորս, ապա՝ հինգ արժեքային չափումներ (ինդիվիդուալիզմ-կոլեկտիվիզմ, մասկուլինություն-ֆեմինինություն, իշխանության դիստանցիա, խուսափում անորոշությունից, երկարաժամկետ ու կարճաժամկետ կողմնորոշում)⁶⁵: Վերջիններից հատկապես մեծ տարածում է գտել առաջին մշակութային չափումը⁶⁶:

Կոլեկտիվիստական մշակույթներն ընդգծում են յուրաքանչյուր մարդու և որոշակի կոլեկտիվների փոխկապվածությունը (օրինակ՝ ընտանիք, ցեղ, ազգ): Ինդիվիդուալիստական մշակույթներն ընդգծում են, որ մարդիկ իրենց խմբերից կախված չեն⁶⁷:

Հ. Տրիանդիսն առաջարկել է չորս հիմնական հատկանիշ Ի-Կ սահմանման համար. 1) *ես-ի նշանակությունը*, որը կոլեկտիվիստական մշակույթներում սահմանվում է որպես կախյալություն խմբի անդամներից, իսկ ինդիվիդուալիստական մշակույթներում՝ անկախություն ու ինքնավարություն խմբի

⁶³ Տե՛ս **Dumont L.** (1986) *Essays on individualism*. Chicago: University of Chicago Press, **Hofstede G.** (1980) *Culture's consequences*. Beverly Hills, CA: Sage, **Lukes S.** (1973) *Individualism*. Oxford, England: Basil Blackwell, **Kim U. Triandis H. C., Kagitcibasi C., Choi S. & Yoon G.** (Eds.) (1994), *Individualism and collectivism: Theory, method, and applications*. Newbury Park, CA: Sage, **Triandis H. C.** (1995) *Individualism and collectivism*. Boulder, CO: Westview Press:

⁶⁴ Տե՛ս **Hofstede G.** (1980) *Culture's consequences*. Beverly Hills, CA: Sage, **Hofstede G.** (2001) *Culture's consequences: Comparing values, behaviors, institutions and organizations across nations*. 2-nd ed. Thousand Oaks, CA: Sage Publications:

⁶⁵ Տե՛ս **Խաչատրյան Ն. Գ., Մանուկյան Ս. Հ. և ուրիշներ** (2014) *Մշակույթ, արժեքներ, համոզմունքներ. վարքի կողմնորոշիչները փոփոխվող հայ հասարակությունում*, Երևան:

⁶⁶ Այդուհետ տեքստում ինդիվիդուալիզմ-կոլեկտիվիզմ չափումը կնշվի Ի-Կ կրճատմամբ:

⁶⁷ Տե՛ս **Triandis H. C.** (1995) *Individualism and collectivism*. Boulder, CO: Westview Press:

անդամներից, 2) *նպատակների կառուցվածքը*. կոլեկտիվիստական մշակույթներում առաջնությունը տրվում է ներխմբային նպատակներին, ընդ որում՝ անձնական նպատակները հնարավորինս համապատասխանեցվում են խմբայինի հետ, փոխարենը ինդիվիդուալիստական մշակույթներում առաջնային են անձնական նպատակները՝ անկախ խմբի հետ դրանց համապատասխանությունից, 3) *վարքը՝ որպես նորմերի ու վերաբերմունքի գործառույթ*. կոլեկտիվիստների համար որպես վարքի կարգավորիչներ հանդես են գալիս նորմերը, իսկ ինդիվիդուալիստները վարքի կարգավորման հարցում առաջնորդվում են իրենց վերաբերմունքով (attitudes), 4) *կենսորոնացում ներխմբային կարիքների կամ սոցիալական փոխանակության վրա*. կոլեկտիվիստները համայնքային հարաբերությունների մեջ առաջնահերթ կարևորում են խմբի անդամների կարիքները, իսկ ինդիվիդուալիստները ներառված են փոխանակային հարաբերությունների մեջ՝ կարևորելով հարաբերությունների առավելությունները⁶⁸:

Ինդիվիդուալիզմը հաճախ կապվում է մրցակցության, սեփական ուժերի հանդեպ վստահության, խմբի նկատմամբ հուզական դիստանցիայի, «հեղոցիզմի» հետ, իսկ կոլեկտիվիզմը հաճախ կապվում են ընտանիքի ամբողջականության, խմբի նկատմամբ ոչ մեծ հեռավորության, շփոթականության, փոխկապվածության բարձր մակարդակի հետ: Հետաքրքրական է, որ սեփական ուժերի նկատմամբ վստահությունը բարձր է նաև կոլեկտիվիստների մոտ, բայց այլ մշանակություն ունի. այն դեպքում, երբ ինդիվիդուալիստն ընկալում է սեփական ուժերի հանդեպ վստահությունը որպես «ընդունակություն՝ անելու այն, ինչ պետք է», կոլեկտիվիստը վստահությունը հասկանում է որպես «հնարավորություն՝ բեռ չլինելու խմբի համար»⁶⁹:

Ինդիվիդուալիզմ-կոլեկտիվիզմի մշակութային չափման տարբեր տեսակներն առանձնացնող կարևոր հատկանիշներից մեկը հասարակության կառուցվածքի վերաբերյալ հորիզոնական կամ ուղղահայաց պատկերացումն է. ուղղահայաց տիպի մշակույթները շեշտադրում են հիերարխիան, իսկ հորիզոնականը՝ հավասարությունը: Այս կերպ ասած՝ հորիզոնական ինդիվիդուալիզմն ընդգծում է, որ «բոլոր մարդիկ հավասար են, բայց յուրաքանչյուրը եզակի է»: Ուղղահայաց ինդիվիդուալիզմը ներառում է այլ մարդկանց նկատմամբ «առանձնացված», «լավի» վերաբերմունք, ինչպես նաև «ուրիշ» հաս-

⁶⁸ Տե՛ս **Triandis H.** (1996) The psychological measurement of Cultural syndromes. *American psychologist*, Vol. 51, No.4, pp. 407-415:

⁶⁹ Տե՛ս **Маяморо Д.** (2003) *Психология и культура*, СПб.: Питер, 1-е изд. (Серия: Мастера психологии), (մեջբերված հատվածը համապատասխանում է գրքի էլեկտրոնային՝ pdf տարբերակի էջ 41-ին):

կացություն այլ մարդկանց հանդեպ: Ուղղահայաց կոլեկտիվիզմն ընդունում է հիերարխիան. խմբի ներսում հեղինակություն ունեցող անհատն ավելի բարձր կարգավիճակ ունի, քան խմբի մյուս շարքային անդամները: Ուղղահայաց կոլեկտիվիզմի համար ընդունելի է մեկ անձին զոհ տալը՝ «խումբը պահպանելու համար»⁷⁰:

Հիմնվելով որոշ ուսումնասիրությունների վրա⁷¹, Տրիանդիսն ներկայացրել է Ի-Կ մշակութային չափման հորիզոնական ու ուղղահայաց պատեռնների հիմնական առանձնահատկությունները⁷².

Աղյուսակ 6.1

Ի-Կ մշակութային չափման չորս պատեռնները

ԶԱՓՈՒՄ	ԿՈԼԵԿՏԻՎԻԶՄ	ԻՆԴԻՎԻԴՈՒԱԼԻԶՄ
Ուղղահայաց ես	Ես-ի տարբերակում ուրիշներից Համայնքային հարաբերություններ Հեղինակությունների ռանգավորում Ազատության ցածր մակարդակ Հավասարության ցածր մակարդակ Համայնքային մտածողություն	Ես-ի տարբերակում ուրիշներից Շուկայական հարաբերություններ Հեղինակությունների ռանգավորում Ազատության բարձր մակարդակ Հավասարության ցածր մակարդակ Շուկայական ժողովրդավարություն
Հորիզոնական ես	Ես-ը մնան է ուրիշներին Համայնքային հարաբերություններ Հավասարության համապատասխանություն Ազատության ցածր մակարդակ Հավասարության բարձր մակարդակ Համայնքային բնակեցում	Ես-ը մնան է ուրիշներին Շուկայական հարաբերություններ Հավասարության համապատասխանություն Ազատության բարձր մակարդակ Հավասարության բարձր մակարդակ Ժողովրդավարական սոցիալիզմ

⁷⁰ Տե՛ս **Maumoto D.** (2003) նշվ. աշխ., էջ 39:

⁷¹ Տե՛ս **Fiske A.** (1992) Four elementary forms of sociality: Framework for a unified theory of social relations. *Psychological Review*, 99, pp. 689-723, **Rokeach M.** (1973) *The nature of human values*. New York: Free Press:

⁷² Տե՛ս **Triandis H., Gelfand M.** (1973) Converging Measurement of Horizontal and Vertical Individualism and Collectivism. *Journal of Personality and Social Psychology*, Vol. 74, No. 1, 1998, pp. 118-128 (տե՛ս էջ 119-ի աղյուսակի):

ՏԵՂԱՅՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

Մեր ուսումնասիրության շրջանակում իրականացրել ենք Ի-Կ մշակութային չափման չորս պատեռնները դուրս բերող հարցարանի տեղայնացումը՝ համաձայն Տրիանդիսի ու Գելֆանդի առաջադրած չափողական մոդելի⁷³: Տեղայնացման գործընթացն իրականացվել է երկու փուլով՝ 1) հարցարանի քարգմանություն՝ անգլերենից հայերեն և հայերեն տարբերակի հետքարգմանություն՝ անգլերենի լեզվական ու իմաստային առանձնահատկությունների պահպանմամբ, 2) հարցարանի հոգեչափողական հատկությունների՝ հուսալիության ու կոնստրուկտային վալիդության ստուգում:

Հետազոտության ընտրանքը կազմել է երևանյան տարբեր բուհերի 205 ուսանող (65.9%-ը՝ կին, $M_{\text{տարիք}}=19.59$, $SD_{\text{տարիք}}=5$)⁷⁴, առաջադրվել է 16 հարց, ընդ որում՝ մշակութային յուրաքանչյուր պատեռնի⁷⁵ համար 4 հարց, որոնք մասնակիցները գնահատել են 1-7 («բացարձակապես համաձայն չեմ»-ից «լիովին համաձայն» եմ) ինտերվալային սանդղակով:

Յուրաքանչյուր մշակութային պատեռնը չափող հարցերի սանդղակի գործոնային կառուցվածքը՝ կոնստրուկտային վալիդությունը, ստուգվել է գործոնային վերլուծությամբ (Exploratory factor analysis), որպես վերլուծության մեթոդ՝ ընտրվել է գլխավոր բաղադրիչների մեթոդը (PCA-principal components analysis)^{76,77}, համապատասխանաբար սանդղակների հուսալիությունն էլ ստուգվել է Կրոնբախի α գործակցով⁷⁸:

⁷³ Տե՛ս **Triandis H., Gelfand M.** (1998) նշվ. աշխ.:

⁷⁴ Հետազոտական տվյալները հավաքագրվել են 2020 թ. գարնանը:

⁷⁵ Մշակութային չորս պատեռններն են՝ ուղղահայաց ինդիվիդուալիզմ և հորիզոնական ինդիվիդուալիզմ, ուղղահայաց կոլեկտիվիզմ և հորիզոնական կոլեկտիվիզմ:

⁷⁶ Հետազոտական տվյալների համար գործոնային վերլուծության մեթոդ կիրառելու համապատասխանությունը ստուգվել է Կայզեր-Մեյեր-Օլկինի ադեկվատության և Բարտլետի՝ ոլորտայնության չափորոշիչների միջոցով (KMO- Kaiser-Meyer-Oikin Measure of sampling Adequacy and Bartlett test of sphericity). արդյունքները վիճակագրորեն նշանակալից են եղել բոլոր երեք սանդղակների համար:

⁷⁷ Գործոնային վերլուծության ընթացակարգի, ինչպես նաև արդյունքների՝ վիճակագրորեն նշանակալից արժեքների մասին եզրակացությունները կատարվել են ըստ՝ **Peter S.** (2017) http://www.openaccess.bcu.ac.uk/6076/1/_staff_shares_storage%20500mb_Library_ID112668_Stat%20Advisory_New%20Statistics%20Workshops_18ExploratoryFactorAnalysis_ExploratoryFactorAnalysis4.pdf (24.02.2021):

⁷⁸ Կրոնբախի α գործակցի արդյունքների ընդունելի մակարդակի մասին եզրակացությունները կատարվել են ըստ՝ **Taber K. S.** (2018) The Use of Cronbach's Alpha when Developing and Reporting Research Instruments in Science Education. *Research in Science Education*, 48 (6), pp. 1273-1296:

1. Ուղղահայաց կոլեկտիվիզմի մշակութային պատեռն

Այս սանդղակի համար՝ $KMO=0.812$, Bartlett-ի թեստի արդյունքներն են՝ $\chi^2 = 383.946$, $df=6$, $p<0.0001$, ինչը ցույց է տալիս, որ հետազոտական տվյալները հարմար են գործոնային վերլուծության համար: Աղյուսակ 6.2-ում կարելի է տեսնել այս սանդղակի հարցերի գործոնային կշիռները.

Աղյուսակ 6.2

«Ուղղահայաց կոլեկտիվիզմ» սանդղակի հարցերի գործոնային կառուցվածքը

ՊՆԳՈՒՄ	Գործոնային կշիռ
1. Իմ պարտքն է հոգ տանել ընտանիքիս մասին անգամ, երբ պետք է դեմ գնամ իմ ցանկություններին:	0.892
2. Ընտանիքի անդամները, ինչ էլ որ լինի կյանքում, պետք է միասնական լինեն:	0.868
3. Ծնողներն ու երեխաները հնարավորինս պետք է միասին ապրեն:	0.806
4. Ինձ համար կարևոր է հարգել այն որոշումները, որոնք ընդունվել են իմ խմբի կողմից:	0.798

Ինչպես կարելի է տեսնել, հարցերի գործոնային կշիռները բավական բարձր են⁷⁹, բարձր է նաև գործոնային մոդելի բացատրական նշանակությունը՝ 70.882 %, ինչը վկայում է սանդղակի կոնստրուկտային վալիդության բարձր ցուցանիշի մասին: Իսկ սանդղակի Կրոնբախի α -ի-ի արժեքը՝ որպես հուսալիության ցուցիչ, 0.861 է, ինչը նույնպես բարձր ցուցանիշ է:

2. Հորիզոնական կոլեկտիվիզմի մշակութային պատեռն

Այս սանդղակի համար՝ $KMO=0.764$, Bartlett-ի թեստի արդյունքներն են՝ $\chi^2 = 376.170$, $df=6$, $p<0.0001$, ինչը վկայում է գործոնային մոդելի վիճակագրական նշանակալիության մասին: Աղյուսակ 6.3-ում ներկայացված են այս սանդղակը կազմող հարցերի գործոնային կշիռները.

Աղյուսակ 6.3

«Հորիզոնական կոլեկտիվիզմ» սանդղակի գործոնային կառուցվածքը

ՊՆԳՈՒՄ	Գործոնային կշիռ
1. Ինձ համար հաճույք է ուրիշների հետ ժամանակ անցկացնելը:	0.860
2. Գործընկերներիս կամ համակուրսեցիներիս բարեկեցությունն ինձ համար կարևոր է:	0.857
3. Ես ինձ լավ եմ զգում, երբ համագործակցում եմ ուրիշների հետ:	0.817
4. Ես կհպարտանայի՝ իմանալով, որ իմ գործընկերը կամ համակուրսեցին պարգևատրվել է:	0.798

⁷⁹ Մեր հետազոտական ընտրանքի համար վիճակագրորեն ընդունելի արժեքի ստորին շեմը 0.512 է:

Ինչպես կարելի է նկատել, այս սանդղակի հարցերի գործոնային կշիռները նույնպես բարձր են, ընդ որում՝ բարձր է նաև գործոնային մոդելի բացատրական նշանակությունը՝ 69.455 %, ինչը հիմնավորում է սանդղակի կոնստրուկտային վալիդությունը: Հուսալիության ցուցանիշն այս սանդղակի համար 0.852 է:

3. Ուղղահայաց ինդիվիդուալիզմի մշակութային պատեռն.

Այս սանդղակի համար՝ $KMO=0.758$, Bartlett-ի թեստի արդյունքներն են՝ $\chi^2=194.170$, $df=6$, $p<0.0001$ ՝ վկայելով գործոնային մոդելի վիճակագրական նշանակալիության մասին: Աղյուսակ 6.4-ում կարելի է տեսնել այս սանդղակի գործոնային կառուցվածքը.

Աղյուսակ 6.4

«Ուղղահայաց ինդիվիդուալիզմ» սանդղակի գործոնային կառուցվածքը

ՊՆՊՌՄ	Գործոնային կշիռ
1. Հաղթանակն ամեն ինչ է:	0.826
2. Ինձ համար կարևոր է, որ ես իմ գործն ավելի լավ անեմ, քան ուրիշներն իրենցը:	0.794
3. Մրցակցությունը բնության օրենքն է:	0.769
4. Ես լարվում եմ բարկանում եմ, երբ ուրիշն ինչ-որ բան ավելի լավ է անում, քան ես:	0.641

Սանդղակի գործոնային մոդելի բացատրական նշանակությունը 57.892 % է, ինչը հարցերի գործոնային կշիռների հետ միասին վկայում է սանդղակի վալիդության մասին, իսկ հուսալիության արժեքը 0.751 է:

4. Հորիզոնական ինդիվիդուալիզմի մշակութային պատեռն

Սանդղակի համար՝ $KMO=0.822$, Bartlett-ի թեստի արդյունքներն են՝ $\chi^2=428.929$, $df=6$, $p<0.0001$, ինչը վկայում է գործոնային մոդելի վիճակագրական նշանակալիության մասին: Աղյուսակ 6.5-ում կարելի է տեսնել սանդղակի հարցերի գործոնային կշիռները.

Աղյուսակ 6.5

«Հորիզոնական ինդիվիդուալիզմ» սանդղակի գործոնային կառուցվածքը

ՊՆՊՌՄ	Գործոնային կշիռ
1. Ինձ համար շատ կարևոր է իմ «Ես»-ը (անձը), որն անկախ է ուրիշներից:	0.876
2. Հիմնականում ես հույսս ինձ վրա եմ դնում, հազվադեպ՝ ուրիշների:	0.875

3. Ես ավելի լավ ե ինքս իմ գլխի տերը լինեմ, քան կախում ունենամ ուրիշներից:	0.868
4. Ես հաճախ եմ գործում իմ հայեցողությամբ:	0.810

Սանդղակի գործոնային մոդելի բացատրական նշանակությունը 73.565 % է, ինչը հարցերի գործանային կշիռների հետ միասին հիմնավորում է սանդղակի կոնստրուկտային վալիդությունը, իսկ սանդղակի հուսալիության ցուցանիշը 0.879 է, ինչը նույնպես բարձր է:

Այսպիսով՝ յուրաքանչյուր սանդղակի հոգեմետրիկական հատկությունների ստուգման արդյունքները թույլ են տալիս առաջարկել այս հարցարանը՝ որպես Ի-Կ մշակութային չափման 4 պատեռններն ուսումնասիրող հարցարան:

ՀԱՐՑԱՐԱՆԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հարցարանը բաղկացած է 16 հարցից. յուրաքանչյուր սանդղակի համար՝ չորսական հարց: Հարցերը ներկայացնում են ես-խումբ փոխազդեցության տարբեր կողմերին վերաբերող պնդումներ, որոնք պետք է գնահատել 1-7 ինտերվալային սանդղակով («բացարձակապես համաձայն չեմ»-ից «լիովին համաձայն եմ»):

Արդյունքների հաշվարկ. հարցարանի յուրաքանչյուր սանդղակի վերջնաարդյունքը հաշվարկվում է այս սանդղակը կազմող հարցերին տրված միավորների ընդհանուր գումարի միջոցով՝ ստորև ներկայացված բանալուն համապատասխան.

1. Ուղղահայաց կոլեկտիվիզմ = SUM (1, 2, 3, 4)
2. Հորիզոնական կոլեկտիվիզմ = SUM (5, 6, 7, 8)
3. Ուղղահայաց ինդիվիդուալիզմ = SUM (9, 10, 11, 12)
4. Հորիզոնական ինդիվիդուալիզմ = SUM (13, 14, 15, 16)

Մեր հետազոտական ընտրանքի համար յուրաքանչյուր սանդղակի միջինի և ստանդարտ շեղման ցուցանիշներն այսպիսին են եղել .

1. Ուղղահայաց կոլեկտիվիզմ. $M=22.1610$; $SD=5.41045$
2. Հորիզոնական կոլեկտիվիզմ. $M=21.7805$; $SD=4.99172$
3. Ուղղահայաց ինդիվիդուալիզմ. $M=20.0927$; $SD=1,19391$
4. Հորիզոնական ինդիվիդուալիզմ. $M=23.8146$; $SD=4,76967$

Բնականաբար, այս ցուցանիշները նորմատիվային չեն հայաստանյան նշված տարիքային խմբի համար: Այնուամենայնիվ, վերջինս կարող է կողմնորոշիչ նշանակություն ունենալ:

ՀԱՐՑԱՐԱՆԻ ԲԼԱՆԿ

Հրահանգ. Խնդրում ենք նշել՝ համաձայն եք հետևյալ պնդումներին՝ համապատասխան թիվը վերցնելով շրջանակի մեջ.

1=Բացարձակապես համաձայն չեմ,

2=համաձայն չեմ,

3=որոշ չափով համաձայն չեմ,

4=չեզոք եմ,

5=որոշ չափով համաձայն եմ,

6=համաձայն եմ,

7=լիովին համաձայն եմ:

		Բացարձակապես համաձայն չեմ	Համաձայն չեմ	Որոշ չափով համաձայն չեմ	Չեզոք եմ	Որոշ չափով համաձայն եմ	Համաձայն եմ	Լիովին համաձայն եմ
1	Ծնողներն ու երեխաները հնարավորինս պետք է միասին ապրեն:	1	2	3	4	5	6	7
2	Իմ պարտքն է հոգ տանել ընտանիքիս մասին անգամ, երբ պետք է դեմ գնամ իմ ցանկություններին:	1	2	3	4	5	6	7
3	Ընտանիքի անդամները, ինչ էլ որ լինի կյանքում, պետք է միասնական լինեն:	1	2	3	4	5	6	7
4	Ինձ համար կարևոր է հարգել այն որոշումները, որոնք ընդունվել են իմ խմբի կողմից:	1	2	3	4	5	6	7
5	Ես կհպարտանայի՝ իմանալով, որ իմ գործընկերը կամ համակուրսեցին պարզևատրվել է:	1	2	3	4	5	6	7
6	Գործընկերներիս կամ համակուրսեցիներիս բարեկեցությունն ինձ համար կարևոր է:	1	2	3	4	5	6	7
7	Ինձ համար հաճույք է ուրիշների հետ ժամանակ անցկացնելը:	1	2	3	4	5	6	7

8	Ես ինձ լավ եմ գգում, երբ համագործակցում եմ ուրիշների հետ:	1	2	3	4	5	6	7
9	Ինձ համար կարևոր է, որ ես իմ գործն ավելի լավ անեմ, քան ուրիշներն իրենցը:	1	2	3	4	5	6	7
10	Հաղթանակն ամեն ինչ է:	1	2	3	4	5	6	7
11	Մրցակցությունը բնության օրենքն է:	1	2	3	4	5	6	7
12	Ես լարվում և բարկանում եմ, երբ ուրիշն ինչ-որ բան ավելի լավ է անում, քան ես:	1	2	3	4	5	6	7
13	Ես ավելի լավ է ինքս իմ գլխի տերը լինեմ, քան կախված լինեմ ուրիշներից:	1	2	3	4	5	6	7
14	Հիմնականում ես հույսս ինքս ինձ վրա եմ դնում, հազվադեպ՝ ուրիշների:	1	2	3	4	5	6	7
15	Ես հաճախ եմ գործում իմ հայեցողությամբ:	1	2	3	4	5	6	7
16	Ինձ համար շատ կարևոր է իմ «ես»-ը (անձը), որն անկախ է ուրիշներից:	1	2	3	4	5	6	7

7. «ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ», «ՊԱՏՎԱՍԻՐՈՒԹՅԱՆ», «ԴԵՄՔԸ ԶԿՈՐՑՆԵԼՈՒ» ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐ

ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐ

Վերջին տասնամյակում մշակութային հոգեբանության մեջ լայն տարածում է ստանում «Պատվի», «Արժանապատվության», «Դեմքը չկորցնելու» մշակութային չափումների տեսությունը՝ ընդլայնելով մշակույթի տեսականացման փորձերն Արմուտք-Արևելք դիստոմիկ տարաբաժանման ավանդույթի սահմաններից դուրս, որը գերակշռել է մշակութային հոգեբանության մեջ՝ Գ. Հոֆստեդեի հիմնարար աշխատանքից սկսած⁸⁰:

Չափողական այս նոր մոդելի մշակման համար կարելի է մի շարք նախադրյալներ առանձնացնել: Առաջին հերթին, «Պատվի», «Արժանապատվության», «Դեմքը չկորցնելու» մշակութային չափումների մոտեցումը հիմնված է ինքնագնահատականի մոտիվացիոն՝ միջսուբյեկտային տեսության վրա, որը նպատակահարմար է մարդ-սոցիալական համատեքստ փոխազդեցության բացատրության համար: Սոցիալական փոխազդեցության գործընթացում մարդիկ նորմերն օգտագործում են՝ մեկնաբանելու համար սոցիալական համատեքստը և կարգավորելու իրենց վարքը: Չափողական այս մոդելը կոնցեպտուալացվել է մարդկանց կողմից ընկալված նորմերի ուսումնասիրության համար: Ընկալված նորմ ասելով՝ հասկացվում է մարդկանց՝ իրենց մշակույթում տարածված վարքաձևերի ու վերաբերմունքի ընկալումները⁸¹:

Երկրորդ, այս մոտեցումը հնարավորություն է ընձեռում բացատրելու վարքային դրսևորումների լայն սպեկտր՝ Արևմուտք-Արևելք դասական համեմատությունների շրջանակից դուրս⁸², դիտարկելու ինչպես տարբեր մշակույթների ներկայացուցիչների վարքային տարբերությունները, այնպես էլ միև-

⁸⁰ Տե՛ս **Hofstede G.** (1980) *Culture's consequences: International differences in work-related values*. Beverly Hills, CA: Sage:

⁸¹ Տե՛ս **Morris M. W., Hong, Y., Chiu, C. & Liu Z.** (2015) Normology: Integrating insights about social norms to understand cultural dynamics. *Organizational Behavior and Human Decision processes*, 129: 1-13:

⁸² **Yao J., Ramirez-Marin J. et al.** (2017) A Measurement Model for Dignity, Face, and Honor Cultural Norms. *Management and Organization Review*, pp. 1-26:

նույն մշակույթի ներսում մարդկանց վարքի փոփոխայնության առանձնահատկությունները⁸³:

Պարզասիրության մշակույթ. Ի տարբերություն արժանապատվության մշակույթի, որը շեշտադրում է անձի ներքին, անօտարելի արժեքը, պատիվը պահանջում է արտաքին ու ներքին որակների գերակայություն: Վերջինս մարդու արժեքն է ինչպես սեփական, այնպես էլ հասարակության աչքերում: Պատիվը սեփական արժեքի գնահատումն է, հպարտության պահանջը, բայց նաև հպարտության իրավունքի հաստատումը: Պատիվը պետք է պահանջվի, և պետք է վճարվի ուրիշների կողմից: Մարդը, որը պահանջում է պատիվ, բայց չի ստանում պատիվ, փաստացի չունի պատիվ:

Պատվի մշակույթները միտում ունեն առաջանալու «անօրինական» միջավայրերում, որտեղ հատուցումը դառնում է կազմակերպչական պրակտիկա: Պատվաբեր մարդը վստահելի է և կարող է հետ վճարել իր պարտքերը: Մյուս կողմից, պատվաբեր մարդը պահանջում է հարգանք, անհանդուժող է խաբեության նկատմամբ և կփոխադարձի իր հանդեպ կատարած սխալ վերաբերմունքը: Փոխադարձությունը՝ որպես հատուցելու պատրաստակամություն, և՛ լավ է, և՛ վատ. սա այն ասպեկտն է, որը պատվի առաքինությունը միավորում է պատվի գերակայությանը:

«Դեմքը չկորցնելու մշակույթ». «Դեմքն» այն է, ինչը, ըստ էության, տեսնում են այլ մարդիկ: Դեմքը չկորցնելու մշակույթը ուրիշների կարևորության տեսանկյունից նման է պատվի մշակույթին: Պատվի նման այն նույնպես կարող է պահանջել առաքինություն կամ հեղինակություն: Այնուամենայնիվ, այս երկու մշակույթները տարբերվում են. պատիվը հանդես է գալիս մրցակից միջավայրերում, որի հիմքերը հավասար են, իսկ դեմքը չկորցնելու մշակույթը՝ հիերարխիաներում, որոնք իրենց բնույթով համագործակցող են: «Դեմքն» այն հարգանքն է, որն անհատը կարող է պահանջել՝ հիերարխիայում իր դիրքից ելնելով: Հիերարխիայում ամեն մեկը կարող է ունենալ որոշակի «դեմք», որոշ մարդիկ կարող են ունենալ «մեկից ավելի դեմքեր» իրենց դիրքի շնորհիվ: Մարդիկ կարող են ունենալ «դեմք» և կորցնել այն: Մարդը կարող է ստանալ «ձեռք բերել դեմք», մեկը մյուսին կարող է «տալ դեմք», բայց հիմնական ուշադրությունը դարձվում է դեմքը չկորցնելու վրա⁸⁴:

Անոթն է վատ վարքի համար պատիժը «դեմքը չկորցնելու» մշակույթում: Մարդիկ, որոնք բավարար ուշադրություն չեն դարձնում իրենց դեմքին և ու-

⁸³ Տե՛ս **Leung A. K., Cohen D.** (2011) Within-and between-culture variation: Individual differences and the cultural logics of honor, face, and dignity cultures. *Journal of Personality and Social Psychology*, 100(3), pp. 507-526:

⁸⁴ Տե՛ս **Ho D. Y.-F.** (1976) On the concept of face. *American Journal of Sociology*, 81, pp. 867-884:

րիշների դրական կարծիքը ոչ ընդունելի ձևով են ընդունում, նրանք կարող են նաև խայտառակվել և բավականաչափ զգայուն չլինել իրենց վերադասների, ենթակաների, հասակակիցների և ուրիշների հանդեպ պարտավորությունների կատարման հանդեպ: Նա, ով ուշադրություն չի դարձնում իր «դեմքին», զգայուն չի լինի այն կորցնելու հանդեպ: Այս մարդիկ ամամոթ են կամ չեն կարող ամաչել:

«Արժանապատվության» մշակույթի համաձայն՝ յուրաքանչյուր անհատ ունի արժեքը, որը կախված չէ այլ մարդկանց գնահատականից: Այդ արժեքը չի շնորհվում ուրիշների կողմից և չի կարող վերցվել, քանի որ վերջինս անօտարելի է: Արժանապատվությունը կարող է պատկերացվել որպես ներքին առանցք բարդ կառույց ես-ի կենտրոնում, այլ կերպ ասած՝ անհատի ներքին բարոյական կենտրոնը: Արժանապատվության զգացմամբ մարդն ավելի շատ գործում է իր ներքին չափորոշիչների հիման վրա, քան իրավիճակային ազդակների ազդեցությամբ: Ներքին հաստատունությունն ու ամբողջականությունը հեռու է պահում արժանապատիվ մարդուն ուրիշների ազդեցությունից, ինչպես նաև երաշխավորում է մարդու՝ ինքն իր համար ճիշտ պահելաձևը՝ անկախ նրանից, թե ուրիշները ինչպես կգնահատեն իր վարքը: Որպես ինքնավերահսկողության դրսևորում՝ մեղքի զգացումն ավելի շատ է կարևորվում, քան ամոթն արժանապատվության մշակույթի դեպքում:

ՏԵՂԱՅՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

Այս երեք մշակութային չափումներն ուսումնասիրող հարցաթերքի տեղայնացման ու մշակման աշխատանքները մեկնարկել են 2019 թ. ամռանը և իրականացվել երկու փուլով: Առաջին փուլի ընթացքում՝ 2018 թ., հետազոտական տվյալները հավաքագրվել են «Dignity, Honour and Face Cultures» (հիմնական հետազոտողներ՝ Peter B. Smith, Yasin Koc, Matthew J. Easterbrook & Vivian M. C. Lun) միջմշակութային ուսումնասիրության շրջանակներում հիմնական հետազոտողների կողմից մշակված հարցարանի հիման վրա: Առաջին փուլի տվյալների հավաքագրման և վերլուծության ամբողջ գործընթացն ավարտվել է 2019 թ. աշնանը, իսկ արդյունքները ներկայացվել են նույն թվականի հոկտեմբերին Հայ-ռուսական սլավոնական համալսարանի կողմից կազմակերպված «Проблемы развития личности в условиях глобализации: психолого-педагогические аспекты» միջազգային գիտաժողովի ընթացքում⁸⁵:

⁸⁵ Տե՛ս **Խաչատրյան Ն. Գ., Գրիգորյան Ա. Կ.**, Մշակութային չափումների տեղայնացման փորձը «Պատվասիրության», «Արժանապատվության» և «Դեմքը չկորցնելու» մշակույթների օրինակով// <https://elibrary.ru/item.asp?id=43007810> (24.11.2020):

Հետազոտության առաջին փուլում մախ իրականացվել է հարցարանի անգլերեն-հայերեն թարգմանություն, ապա հայերենից անգլերեն հետթարգմանություն՝ հնարավորինս պահպանելով բնօրինակի հետ իմաստային համապատասխանությունը և միաժամանակ մոտեցնելով հայերենի լեզվական առանձնահատկություններին: Հարցարանը բաղկացած է եղել 25 հարցից. 7 հարց նախատեսված է «պատվասիրության», 8 հարց՝ «դեմքը չկորցնելու» և 10 հարց՝ «արժանապատվության» չափումների համար: Հարցերը ներկայացնում են տարբեր իրավիճակներ, որոնք պետք է գնահատվեն հետևյալ կերպ. «ինչքա՞նի իրեն վատ կզգա մարդը, եթե հայտնվի նման իրավիճակում» (գնահատումը կատարվում է «ոչ այնքան վատ»-ից «չափազանց վատ» ինտերվալային սանդղակի միջոցով):

Երևանի տարբեր բուհերի 140 ուսանողից (73.6%ը՝ կին, $M_{տարիք}=20.14$, $SD_{տարիք}=1.682$) հավաքագրված տվյալների վերլուծության հիման վրա կատարել ենք հարցարանի հոգեչափողական հատկությունների՝ հուսալիության ու կոնստրուկտային վալիդության ստուգում:

Մշակութային յուրաքանչյուր չափումը կազմող հարցերի սանդղակի հուսալիությունը ստուգվել է Կրոնբախի α գործակցով, որի արդյունքները «պատվասիրության» չափման համար 0.812 է, «դեմքը չկորցնելու» չափման համար՝ 0.805, իսկ «արժանապատվության» համար՝ 0.713՝ վկայելով հարցարանի բարձր հուսալիության մասին⁸⁶:

Մշակութային չափումներին համապատասխանող սանդղակների գործոնային կառուցվածքը՝ կոնստրուկտային վալիդությունը, ստուգվել է գործոնային վերլուծությամբ (Exploratory factor analysis), որպես վերլուծության մեթոդ՝ ընտրվել է գլխավոր բաղադրիչների մեթոդը (PCA-principal components analysis)⁸⁷:

Համադրելով յուրաքանչյուր սանդղակի հարցերի գործոնային կշիռները վիճակագրորեն ընդունելի արժեքների հետ⁸⁸, համապատասխան շտկումների

⁸⁶ Կրոնբախի α գործակցի արդյունքների ընդունելի մակարդակի մասին եզրակացությունները կատարվել են ըստ՝ **Taber K. S.** (2018) The Use of Cronbach's Alpha When Developing and Reporting Research Instruments in Science Education // *Research in Science Education*, 48 (6), pp. 1273-1296:

⁸⁷ Հետազոտական տվյալների համար գործոնային վերլուծության մեթոդ կիրառելու համապատասխանությունը ստուգվել է Կայզեր-Մեյեր-Օլկինի ադեկվատության և Բարտլետի՝ ոլորտայնության չափորոշիչների միջոցով (KMO-Kaiser-Meyer-Oikin Measure of sampling Adequacy and Bartlett test of sphericity). արդյունքները վիճակագրորեն նշանակալից են եղել բոլոր երեք սանդղակների համար:

⁸⁸ Գործոնային վերլուծության ընթացակարգի, ինչպես նաև արդյունքների՝ վիճակագրորեն նշանակալից արժեքների մասին եզրակացությունները կատարվել են՝ ըստ **Peter S.** (2017) http://www.open-access.bcu.ac.uk/6076/1/_staff_shares_storage%20500mb_Library_ID112668_-

հիման վրա հետազոտության առաջին փուլի ավարտին մենք կազմել ենք հարցարանի ստորև բերված տարբերակը. ներառված են յուրաքանչյուր մշակութային չափման համար այն հարցերը, որոնք, ըստ գործոնային վերլուծության արդյունքների, աշխատել են մեր հետազոտական ընտրանքի համար⁸⁹: Կարելի է նկատել, որ հարցարանի սկզբնական տարբերակի 25 հարցից ընտրվել է 19-ը:

Աղյուսակ 7.1

«Պատրվի», «Արժանապարտության» և «Դեմքը չկորցնելու»

հարցարանի գործոնային կառուցվածքը

ՀԱՐՑԵՐ	Գործոնային կշիռ
«Պատվասիրության» մշակութային չափում	
1. Եթե ես բույլ տայի ուրիշներին վիրավորել իմ ընտանիքի անդամներին...:	0.675
2. Եթե ես չպահեի ազգիս պատիվը...:	0.577
3. Եթե իմ մայրը կամ բույրը «ազատ վարքի» համբավ ունենային...:	0.825
4. Եթե իմ ընտանիքը վատ հեղինակություն ունենար...:	0.718
5. Եթե ես վնաս հասցնեի ընտանիքիս հեղինակությանը...:	0.796
6. Եթե ես ի վիճակի չլինեի՝ պաշտպանելու ընտանիքիս հեղինակությունը...:	0.835
7. Եթե ես վիրավորանք ստանայի, և իմ մտերիմներին չհաջողվեր պաշտպանել ու աջակցել ինձ...:	0.518
«Դեմքը չկորցնելու» մշակութային չափում	
8. Եթե ուրիշներն իրենց քննադատված զգային իմ կողմից...:	0.603
9. Եթե ես ինձ համեստ չպահեի...:	0.646
10. Եթե ես ուրիշների ներկայությամբ ինձ զուսպ չպահեի...:	0.662
11. Եթե ինձ չհաջողվեր կանխել տարաձայնությունները մտերիմներիս հետ...:	0.646
12. Եթե ուրիշները զգային, որ ես չեմ հարգում նրանց՝ որպես հավասարի...:	0.751
13. Եթե ինձ չհաջողվեր հարգալից լինել իմ վերադասների հանդեպ...:	0.672
14. Եթե մտերիմներս զգային, որ ես ցույց չեմ տվել այն աջակցությունը, որի կարիքը նրանք ունենին...:	0.574

Stats%20Advisory_New%20Statistics%20Workshops_18ExploratoryFactorAnalysis_Exploratory-FactorAnalysis4.pdf (24.02.2021):

⁸⁹ Հիմք ընդունելով հետազոտական ընտրանքի չափը (N=140)՝ գործոնային կշիռների նշանակալիության սահման ենք ընդունել 0.512-ից բարձրը:

15. Եթե ես անհարմար վիճակի մեջ դնեի ուրիշներին...:	0.658
«Արժանապատվության» մշակութային չափում	
16. Եթե ես խաբեի ուրիշներին...:	0.739
17. Եթե ես ընկերոջս հասցեին բացասաբար արտահայտվեի...:	0.656
18. Եթե ես խաբեի՝ խուսափելու համար ինչ-որ մեկին օգնելություն ցուցաբերելուց...:	0.776
19. Եթե ես խաբեի ծնողներին՝ ինչ-որ բան անելով կամ չանելով...:	0.718

Հետազոտության երկրորդ փուլում, որը մեկնարկել է 2020 թ. փետրվարից, հարցարանի մշակման գործընթացը շարունակել ենք հետևյալ տրամաբանությամբ. հիմք ընդունելով այս երեք մշակութային չափումների ուսումնասիրությանն ուղղված մոդելի կառուցման որոշ աշխատանքներ⁹⁰, առանձնացրել ենք նոր հարցեր՝ միավորելով հետազոտական արդյունքներով մշակած մեր հարցարանի հետ: Ընդհանուր առմամբ, վերջնական տարբերակում հարցերի քանակը 30 է («Պատվասիրության» մշակութային չափման համար՝ 9, «Դեմքը չկորցնելու» չափման համար՝ 8, իսկ «Արժանապատվության» համար՝ 13): «Պատվասիրության» մշակութային չափման համար նախատեսված հարցերը խմբավորել ենք երկու ենթասանդղակում՝ «կողմնորոշում դեպի ընտանիքը» և «կողմնորոշում դեպի ես-ը», իսկ «Արժանապատվության» չափման հարցերը՝ «կողմնորոշում դեպի հարաբերությունները» և «կողմնորոշում դեպի ես-ը» ենթասանդղակներում: Հարցարանի հրահանգն ու պատասխանի տարբերակները նույնն են, ինչպես հետազոտության առաջին փուլում:

Հետազոտության երկրորդ փուլի ընտրանքը կազմվել է երևանյան տարբեր բուհերի նոր ուսանողներից, թվով՝ 205 հոգի (65.9%-ը կին, $M_{տարիք}=19.59$, $\sigma_{տարիք}=5$): Հետազոտական տվյալների վերլուծություն ընթացել է նույն տրամաբանությամբ, ինչ հետազոտության առաջին փուլում, մասնավորապես կոնստրուկտային վալիդության ու հուսալիության ստուգում՝ վիճակագրական նույն մեթոդներով և համապատասխան չափորոշիչների հաշվառմամբ:

1. «Պատվասիրության» մշակութային չափում

«Կողմնորոշում դեպի ընտանիքը» ենթասանդղակի համար՝ $KMO=0.892$, Bartlett-ի թեստի արդյունքներն են՝ $\chi^2 = 1089.720$, $df = 15$, $p < 0.0001$, ինչը ցույց է տալիս, որ հետազոտական տվյալները հարմար են գործոնային վերլուծության համար: Աղյուսակ 7.2-ում կարելի է տեսնել պատվասիրության սանդ-

⁹⁰ Տե՛ս Patricia M. Rodriguez Mosquera, Antony S. R., Manstead & Agneta H. Fischer (2002) The role of honour concerns in emotional reactions to offences. *Cognition and Emotion*, 16:1, pp. 143-163, Yao J., Ramirez-Marin J. et al. (2017) նշվ. աշխ.:

դակին համապատասխանող հարցերի գործոնային կշիռները մեկ գործոնում միավորվելու արդյունքում: Հիմք ընդունելով հետազոտական ընտրանքի չափը ($N=205$)՝ գործոնային կշիռների նշանակալիության սահման ենք ընդունում 0.364-ից բարձրը⁹¹:

Աղյուսակ 7.2

Գործոնային վերլուծության արդյունքները պատվաստիչության չափման «կողմնորոշում դեպի ընտանիքը» ենթասանդղակի համար

ՀԱՐՑԵՐ	Գործոնային կշիռ
1. Եթե ես վնաս հասցնեի ընտանիքիս հեղինակությանը...:	0.936
2. Եթե իմ ընտանիքը վատ հեղինակություն ունենար...:	0.899
3. Եթե իմ մայրը կամ քույրը «ազատ վարքի» համբավ ունենային...:	0.889
4. Եթե ես ի վիճակի չլինեի պաշտպանել ընտանիքիս հեղինակությունը...:	0.883
5. Եթե ես վիրավորանք ստանայի, և մտերիմներիս չհաջողվեր պաշտպանել ու աջակցել ինձ...:	0.820
6. Եթե ես ի վիճակի չլինեի պաշտպանել ընտանիքիս հեղինակությունը...:	0.814

Այս ենթասանդղակի համար հուսալիության՝ Կրոնբախի α գործակցով հաշվարկված արժեքը 0.937 է, ինչը բավականին բարձր ցուցանիշ է՝ վկայելով, որ ընտրված հարցերը լավ են չափում այն կոնստրուկտը, որի համար նախատեսված են:

«Կողմնորոշում դեպի ես-ը» ենթասանդղակի համար՝ $KMO=0.668$, Bartlett-ի թեստի արդյունքներն են՝ $\chi^2 = 217,518$; $df = 3$, $p < 0.0001$, ինչը ցույց է տալիս գործոնային մոդելի վիճակագրական նշանակալիությունը: Աղյուսակ 7.3-ում կարելի է տեսնել այս ենթասանդղակի հարցերի գործոնային կշիռները:

Աղյուսակ 7.3

Գործոնային վերլուծության արդյունքները «կողմնորոշում դեպի ես-ը» ենթասանդղակի

ՀԱՐՑԵՐ	Գործոնային կշիռ
1. Չպատժեի այն մարդկանց, որոնք վիրավորել են ինձ:	0.894
2. Եթե վիրավորանք ստանայի և չկարողանայի պատասխանել ու թույլ երևայի...:	0.874
3. Եթե մրցակիցներիս ցույց չտայի, որ ուժեղ եմ...:	0.770

⁹¹ Տե՛ս **Peter S.** (2017) նշվ. աշխ.:

Այս ենթասանդղակի համար հուսալիության ցուցանիշը 0.803 է:

«Պատվասիրության» ամբողջական սանդղակի համար՝ $KMO=0.921$, Bartlett-ի թեստի արդյունքներն են՝ $\chi^2 = 1571.538$; $df = 36$, $p<0.0001$ ՝ մոդելի վիճակագրական բարձր նշանակալիությամբ: Ընդ որում՝ այս մշակութային չափման գործոնային մոդելի բացատրական նշանակությունը կոնստրուկտի համար 68.468 % է, ինչը հիմնավորում է ընտրված հարցերի կոնստրուկտային վալիդությունը պատվասիրության մշակույթի չափման համար: Ստորև բերված աղյուսակում կարելի է տեսնել սանդղակը կազմող բոլոր հարցերի՝ մեկ գործոնում միավորվելիս ստացված գործոնային կշիռները:

Աղյուսակ 7.4

«Պատվասիրության» սանդղակի գործոնային կառուցվածքը

ՀԱՐՑԵՐ	Գործոնային կշիռ
1. Եթե ես վնաս հասցնեի ընտանիքիս հեղինակությանը....:	0.923
2. Եթե իմ ընտանիքը վատ հեղինակություն ունենար....:	0.882
3. Եթե վիրավորանք ստանայի և չկարողանայի պատասխանել ու թույլ երևայի....:	0.873
4. Եթե ես ի վիճակի չլինեի՝ պաշտպանելու ընտանիքիս հեղինակությունը....:	0.869
5. Եթե իմ մայրը կամ թույրը «ազատ վարքի» համբավ ունենային....:	0.865
6. Եթե ես վիրավորանք ստանայի, և մտերիմներիս չհաջողվեր պաշտպանել ու աջակցել ինձ....:	0.831
7. Եթե ես թույլ տայի ուրիշներին վիրավորել իմ ընտանիքի անդամներին....:	0.778
8. Չպատժեի այն մարդկանց, որոնք վիրավորել են ինձ:	0.762
9. Եթե մրցակիցներիս ցույց չտայի, որ ուժեղ եմ:	0.623

«Պատվասիրության» ամբողջական սանդղակի համար Կրոնբախի α -ի ցուցանիշը 0.941 է, ինչը վկայում է ամբողջ սանդղակի բարձր հուսալիության մասին:

2. «Գեները չկորցնելու» մշակութային չափում

Այս մշակութային չափման համար նախատեսված հարցերը ներկայացված են մեկ սանդղակով: Գործոնային մոդելի վիճակագրական նշանակալիության ցուցիչները ընդունելի սահմանում են՝ $KMO=0.928$, Bartlett-ի թեստի արդյունքներն են՝ $\chi^2 = 1246.780$; $df = 28$, $p<0.0001$: Աղյուսակ 7.5-ում կարելի է

տեսնել այս սանդղակի հարցերի գործոնային կառուցվածքը՝ համապատասխան գործոնային կշիռներով.

Աղյուսակ 7.5

«Դեմքը չկորցնելու» մշակութային չափման սանդղակի գործոնային կառուցվածքը

ՀԱՐՑԵՐ	Գործոնային կշիռ
1. Եթե ես անհարմար վիճակի մեջ դնեի ուրիշներին...:	0.899
2. Եթե ինձ չհաջողվեր հարգալից լինել իմ վերադասների հանդեպ...:	0.860
3. Եթե ես ուրիշների ներկայությամբ ինձ գուսպ չպահեի...:	0.857
4. Եթե մտերիմներս զգային, որ ես ցույց չեմ տվել այն աջակցությունը, որի կարիքը նրանք ունեին...:	0.853
5. Եթե ինձ չհաջողվեր կանխել տարածայնությունները մտերիմներիս հետ:	0.843
6. Եթե ուրիշները զգային, որ ես չեմ հարգում նրանց՝ որպես հավասարի...:	0.841
7. Եթե ես ուրիշների ներկայությամբ քննադատեի ինչ-որ մեկին...:	0.766
8. Եթե ես ինձ համեստ չպահեի հարաբերությունների պահպանման համար:	0.729

Գործոնային մոդելի բացատրական նշանակությունը 69.307% է: Հիմնվելով այս ցուցանիշի, ինչպես նաև սանդղակը կազմող առանձին հարցերի գործոնային կշիռների բարձր արժեքների վրա՝ կարող ենք հիմնավորել «Դեմքը չկորցնելու» մշակութային չափման սանդղակի բարձր կոնստրուկտային վալիդության մասին: Այս սանդղակի հուսալիության Կրոնբախի α -ի ցուցանիշը 0.936 է, ինչը նույնպես բավական բարձր է:

3. «Արժանապատվության» մշակութային չափում

«Ուղղվածություն ես»-ին ենթասանդղակի համար՝ $KMO=0.879$, Bartlett-ի թեստի արդյունքներն են՝ $\chi^2 = 789.518$; $df=10$, $p<0.0001$, ինչը ցույց է տալիս գործոնային վերլուծության նպատակահարմարությունը հետազոտական տվյալների համար: Աղյուսակ 7.6-ում կարելի է տեսնել ենթասանդղակը կազմող հարցերի գործոնային կշիռները.

Աղյուսակ 7.6

«Արժանապատվություն» մշակութային չափման «կողմնորոշում դեպի ես-ը» ենթասանդղակի հարցերի գործոնային կշիռները

ՀԱՐՑԵՐ	Գործոնային կշիռ
1. Եթե ինձ չհաջողվեր պաշտպանել իմ համոզմունքները՝ անկախ մյուսների կարծիքից...:	0.922

2. Եթե ես անկեղծ չլինեի ինքս ինձ հետ՝ անկախ նրանից, թե ուրիշներն ինչ են մտածում...:	0.911
3. Եթե ես չկարողանայի ինքնուրույն որոշում կայացնել՝ անկախ մյուսների կարծիքից...:	0.908
4. Եթե ինձ չհաջողվեր հայտնել իմ կարծիքը...:	0.832
5. Եթե ինձ չհաջողվեր ապրել այն սկզբունքներով, որոնք ես սահմանել եմ ինքս ինձ համար...:	0.761

Այս ենթասանդղակի համար Կրոնբախի α -ի արժեքը 0.918 է, ինչը վկայում է վերջինիս բարձր հուսալիության մասին:

«Ուղղվածություն հարաբերություններին» ենթասանդղակի համար՝ $KMO=0.924$, Bartlett-ի թեստի արդյունքներն են՝ $\chi^2 = 1733.970$; $df = 28$, $p<0.0001$ ՝ վկայելով մոդելի վիճակագրական նշանակալիության մասին: Աղյուսակ 7.7-ում կարելի է տեսնել ենթասանդղակի հարցերի գործոնային կշիռները.

Աղյուսակ 7.7

«Կողմնորոշում դեպի հարաբերությունները» ենթասանդղակի գործոնային կշիռները

ՀԱՐՑԵՐ	Գործոնային կշիռ
1. Եթե ես չկարողանայի գաղտնիքներ պահել...:	0.923
2. Եթե ես դավաճանեի այն մարդուն, որի համդեպ ունեմ անձնային պատասխանատվություն...:	0.917
3. Եթե ես չպահեի ուրիշին տված խոստումս...:	0.906
4. Եթե ես ընկերոջս հասցեին բացասաբար արտահայտվեի:	0.904
5. Եթե ես վերցնեի ուրիշին պատկանող իրերն առանց թույլտվության:	0.891
6. Եթե ես խաբեի ուրիշներին:	0.857
7. Եթե ես խաբեի ծնողներին՝ ինչ-որ բան անելով կամ չանելով:	0.811
8. Եթե ես խաբեի՝ խուսափելու համար ինչ-որ մեկին օգնելություն ցուցաբերելուց:	0.802

Այս ենթասանդղակի համար հուսալիության ցուցանիշը 0.957 է:

«Արժանապատվության» ամբողջական սանդղակի համար՝ $KMO=0.956$, Bartlett-ի թեստի արդյունքներն են՝ $\chi^2 = 2996.700$; $df = 78$, $p<0.0001$, ինչը վկայում է մոդելի վիճակագրական նշանակալիության մասին: Գործոնային մոդելի բացատրական նշանակությունը կոնստրուկտի համար 73.29 % է, ինչը հարցերի գործոնային ցուցանիշների հետ վկայում է՝ այս սանդղակի կոնստրուկտային վավիդության ցուցանիշը բարձր է: Աղյուսակ 7.8-ում կարելի է

տեսնել այս սանդղակի գործոնային կառուցվածքը՝ բոլոր հարցերի գործոնային կշիռներով:

Աղյուսակ 7.8

«Արժանապատվության» մշակութային չափման սանդղակի գործոնային կառուցվածքը

ՀԱՐՑԵՐ	Գործոնային կշիռ
1. Եթե ես դավաճանեի այն մարդուն, որի հանդեպ ունեմ անձնային պատասխանատվություն...:	0.916
2. Եթե ես չկարողանայի գաղտնիքներ պահել...:	0.915
3. Եթե ես չպահեի ուրիշին տված խոստումս...:	0.907
4. Եթե ես չկարողանայի ինքնուրույն որոշում կայացնել՝ անկախ մյուսների կարծիքից...:	0.902
5. Եթե ինձ չհաջողվեր պաշտպանել իմ համոզմունքները՝ անկախ մյուսների կարծիքից...:	0.893
6. Եթե ես անկեղծ չլինեի ինքս ինձ հետ՝ անկախ նրանից, թե ուրիշներն ինչ են մտածում...:	0.886
7. Եթե ես վերցնեի ուրիշին պատկանող իրերն առանց թույլտվության...:	0.883
8. Եթե ես ընկերոջս հասցեին բացասաբար արտահայտվեի...:	0.879
9. Եթե ես խաբեի ուրիշներին...:	0.821
10. Եթե ես խաբեի ծնողներիս՝ ինչ-որ բան անելով կամ չանելով...:	0.806
11. Եթե ես խաբեի՝ խուսափելու համար ինչ-որ մեկին օգնելություն ցուցաբերելուց:	0.797
12. Եթե ինձ չհաջողվեր հայտնել իմ կարծիքը...:	0.760
13. Եթե ինձ չհաջողվեր ապրել այն սկզբունքներով, որոնք ես սահմանել եմ ինքս ինձ համար...:	0.738

«Արժանապատվության» մշակութային չափման սանդղակի հուսալիությունը 0.969 է, ինչը նույնպես բարձր ցուցանիշ է:

Այսպիսով՝ հարցարանի տեղայնացման երկրորդ փուլի հետազոտական տվյալների վիճակագրական վերլուծության արդյունքները թույլ են տալիս հիմնավորել մշակված հարցարանի հոգեմետրիկ հատկությունները՝ կոնստրուկտ-վալիդությունն ու հուսալիությունը, և առաջարկել այն՝ որպես «Պատվասիրության», «Դեմքը չկորցնելու» և «Արժանապատվության» մշակութային չափումներն ուսումնասիրող հարցարան:

ՀԱՐՑԱՐԱՆԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հարցարանը բաղկացած է 30 հարցից («Պատվասիրության» մշակութային չափման համար՝ 9, «Դեմքը չկորցնելու» չափման համար՝ 8, իսկ «Արժանապատվության» համար՝ 13): Հարցերը ներկայացնում են տարբեր իրավիճակներ, որոնք պետք է գնահատվեն հետևյալ կերպ. «Ինչքա՞ն իրեն վատ կզգա մարդը, եթե հայտնվի մման իրավիճակում» (գնահատումը կատարվում է «ոչ այնքան վատ»-ից «չափազանց վատ» իմտերվալային սանդղակի միջոցով):

Արդյունքների հաշվարկ. հարցարանի յուրաքանչյուր սանդղակի վերջնարդյունքը հաշվարկվում է այդ սանդղակը կազմող հարցերի թվաքանական միջինի (Mean) միջոցով՝ բանալուն համապատասխան.

1. «Պատվասիրության» սանդղակ. Mean (1, 4, 7, 10, 13, 17, 23, 25, 29)
«Ուղղվածություն ընտանիքին» ենթասանդղակ. Mean (1, 7, 10, 23, 25, 29)
«Ուղղվածություն ես-ին» ենթասանդղակ. Mean (4, 13, 17)
2. «Դեմքը չկորցնելու» սանդղակ. Mean (2, 5, 8, 11, 15, 18, 22, 28)
3. «Արժանապատվության» սանդղակ. Mean (3, 6, 9, 12, 14, 16, 19, 20, 21, 24, 26, 27, 30)
«Ուղղվածությունը հարաբերություններին» ենթասանդղակ. Mean (3, 9, 12, 16, 19, 21, 24, 26)
«Ուղղվածությունը ես-ին» ենթասանդղակ. Mean (6, 14, 20, 27, 30)

Մեր հետազոտական ընտրանքի համար յուրաքանչյուր սանդղակի միջինի և ստանդարտ շեղման ցուցանիշներն այսպիսին են եղել.

1. «Պատվասիրության» սանդղակ. $M=4, 269$; $SD=1,6838$
2. «Դեմքը չկորցնելու» սանդղակ. $M=3,952$, $SD=1,5788$
3. «Արժանապատվության» սանդղակ. $M=4,345$, $SD=1,6602$

Բնականաբար, այս ցուցանիշները նորմատիվային չեն հայաստանյան նշված տարիքային խմբի համար, այնուամենայնիվ, վերջինս կարող է կողմնորոշիչ նշանակություն ունենալ:

ՀԱՐՑԱՐԱՆԻ ԲԼԱՆԿ

Հրահանգ. Ստորև նկարագրված են մի շարք բարդ իրավիճակներ, որոնց Դուք միգուցե առնչվել եք: Հետաքրքիր է իմանալ, թե Դուք ինչպես կարձագանքեք նույնիսկ այն իրավիճակներին, որոնք երբեք չեք ապրել: Յուրաքանչյուր իրավիճակի համար խնդրում ենք շրջանակի մեջ առնել այն պատասխանը, որը ցույց կտա, թե **որքան վատ կզգայիք Ձեզ.**

- 1=ոչ այդքան վատ,
2=մի քիչ վատ,
3=թեթևակի վատ,
4=չափավոր վատ,
5=շատ վատ,
6=չափազանց վատ:

		Ոչ այդքան վատ	Մի քիչ վատ	Թեթևակի վատ	Չափավոր վատ	Շատ վատ	Չափազանց վատ
1	Եթե ես թույլ տայի ուրիշներին վիրավորել իմ ընտանիքի անդամներին....:	1	2	3	4	5	6
2	Եթե ես ուրիշների ներկայությամբ քննադատեի ինչ-որ մեկին....:	1	2	3	4	5	6
3	Եթե ես խաբեի ուրիշներին....:	1	2	3	4	5	6
4	Եթե մրցակիցներիս ցույց չտայի, որ ուժեղ եմ....:	1	2	3	4	5	6
5	Եթե ես ինձ համեստ չպահեի հարաբերությունների պահպանման համար....:	1	2	3	4	5	6
6	Եթե ինձ չհաջողվեր ապրել այն սկզբունքներով, որոնք ինքս եմ սահմանել եմ ինքս ինձ համար....:	1	2	3	4	5	6
7	Եթե իմ մայրը կամ քույրը «ազատ վարքի» համբավ ունենային....:	1	2	3	4	5	6
8	Եթե ես ուրիշների ներկայությամբ ինձ զուսպ չպահեի....:	1	2	3	4	5	6
9	Եթե ես ընկերոջս հասցեին բացասաբար արտահայտվեի....:	1	2	3	4	5	6
10	Եթե իմ ընտանիքը վատ հեղինակություն ունենար....:	1	2	3	4	5	6

11	Եթե ինձ չհաջողվեր կանխել մտերմներիս հետ ունեցած տարաձայնությունները...:	1	2	3	4	5	6
12	Եթե ես խաբեի՝ խուսափելու համար ինչ-որ մեկին օգնություն ցուցաբերելուց...:	1	2	3	4	5	6
13	Եթե չպատժեի այն մարդկանց, որոնք վիրավորել են ինձ...:	1	2	3	4	5	6
14	Եթե ինձ չհաջողվեր հայտնել իմ կարծիքը...:	1	2	3	4	5	6
15	Եթե ուրիշները զգային, որ ես չեմ հարգում նրանց՝ որպես հավասարի...:	1	2	3	4	5	6
16	Եթե ես խաբեի ծնողներիս՝ ինչ-որ բան անելով կամ չանելով...:	1	2	3	4	5	6
17	Եթե վիրավորանք ստանալի և չկարողանալի պատասխանել ու թույլ երևալի...:	1	2	3	4	5	6
18	Եթե ինձ չհաջողվեր հարգալից լինել իմ վերադասների հանդեպ...:	1	2	3	4	5	6
19	Եթե ես չպահեի ուրիշին տված խոստումս...:	1	2	3	4	5	6
20	Եթե ես չկարողանալի ինքնուրույն որոշում կայացնել՝ անկախ մյուսների կարծիքից...:	1	2	3	4	5	6
21	Եթե ես չկարողանալի գաղտնիքներ պահել...:	1	2	3	4	5	6
22	Եթե մտերիմներս զգային, որ ես ցույց չեմ տվել այն աջակցությունը, որի կարիքը նրանք ունենին...:	1	2	3	4	5	6
23	Եթե ես ի վիճակի չլինեի պաշտպանել ընտանիքիս հեղինակությունը...:	1	2	3	4	5	6
24	Եթե ես վերցնեի ուրիշին պատկանող իրերն առանց թույլտվության...:	1	2	3	4	5	6
25	Եթե ես վիրավորանք ստանալի, և մտերիմներիս չհաջողվեր պաշտպանել ու աջակցել ինձ...:	1	2	3	4	5	6
26	Եթե ես դավաճանեի այն մարդուն, որի հանդեպ ունեմ անձնային պատասխանատվություն...:	1	2	3	4	5	6
27	Եթե ես անկեղծ չլինեի ինքս ինձ հետ՝ անկախ նրանից, թե ուրիշներն ինչ են մտածում...:	1	2	3	4	5	6
28	Եթե ես անհարմար վիճակի մեջ դնեի ուրիշներին...:	1	2	3	4	5	6
29	Եթե ես վնաս հասցնեի ընտանիքիս հեղինակությանը...:	1	2	3	4	5	6
30	Եթե ինձ չհաջողվեր պաշտպանել իմ համոզմունքները՝ անկախ մյուսների կարծիքից...:	1	2	3	4	5	6

8. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՔՍԻՈՄՆԵՐ

ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐ

Երկար ժամանակ միջմշակութային հետազոտություններում գերակշռել են արժեքային չափման ուսումնասիրությունները: Չնայած այս ուղղությամբ առաջընթացին՝ հետազոտողները, այնուամենայնիվ, գտնում են, որ հավելյալ կոնստրուկտների կարիք կա մշակութային չափումների ու մշակութային տարբերությունների բացատրման համար: Որպես այդպիսիք՝ առանձնացվում են համոզմունքները, որոնք կապված են սոցիալական վարքաձևերի լայն շրջանակի հետ⁹²: Օրինակ՝ վերահսկողության լոկուսը՝ որպես ընդհանրացված համոզմունք տեղի ունեցող իրադարձությունների պատճառների մասին, կապված է վարքաձևերի լայն բազմազանության հետ⁹³, մարդու բնույթի վերաբերյալ ընդհանրացված համոզմունքները, օրինակ՝ հուսալիությունը, կապված են միջանձնային վարքաձևերի հետ⁹⁴: Ընդ որում, համոզմունքները հաճախ ավելի օգտակար են անհատական մակարդակում միջմշակութային տարբերությունների բացատրման համար, քան արժեքները⁹⁵:

Համոզմունքների մի զգալի բազանություն առնչվում է կոնկրետ համատեքստներին՝ նկարագրելով դրանցում ներառված մարդկանց, կոնկրետ ժամանակահատվածը, փոխարենը որոշ համոզմունքներ ընդհանրացված են, ունեն վերացարկյան բարձր մակարդակ և հարաբերվում են տարբեր կոնտեքստների, մարդկանց, ժամանակահատվածների լայն շրջանակի հետ: Այսպիսի ընդհանրացված համոզմունքները սահմանվում են որպես սոցիալական արքսիոմներ: Ինչպես մաթեմատիկական արքսիոմները, այս համոզմունքները հիմնային դատողություններ են, որոնք մարդիկ օգտագործում են տարբեր իրավիճակներում՝ իրենց վարքը բացատրելու համար: Այս համոզմունքներն արքսիոմատիկ են, որովհետև հաճախ է, թեև ոչ գիտականորեն, ենթադրվում դրանց ճշմարտացիությունը անձնային փորձառնության ու սոցիալիզացիայի արդյունքում⁹⁶:

⁹² Տե՛ս **Fraser C. & Gaskell G.** (1988) *The social psychological study of widespread beliefs*. Oxford, UK: Glarendon, 1990, **Furnham A.**, Lay theories. London: Pergamon:

⁹³ Տե՛ս **Spector P. E.**, (1982) Behavior in organizations as a function of employee's locus of control. *Psychological-Bulletin*, 91, pp. 482-497:

⁹⁴ Տե՛ս **Wrightsmen L. S.** (1992) *Assumptions about human nature*. Newbury Park, CA: Sage:

⁹⁵ Տե՛ս **Leung K., Bond, M. H., & Schwartz S. H.** (1995) How to explain cross-cultural differences: Values, valences, and expectancies. *Asian Journal of Psychology*, 1, pp. 70-75:

⁹⁶ Տե՛ս **Leung K., Bond M. H., Reimel de Carrasquel S., Muñoz C., Hernández M., Murakami F., Yamaguchi S., Bierbrauer G. & Singelis T. M.** (2002) Social axioms: The search for universal

Սոցիալական արքիտմները մի այլ մարդու, սոցիալական ու ֆիզիկական միջավայրի կամ հոգևոր աշխարհի մասին ընդհանրացված համոզմունքներ են, որոնք հանդես են գալիս որպես երկու սուբյեկտների կամ կոնցեպտների միջև փոխհարաբերության մասին պնդումներ: Սահմանումից հետևում է սոցիալական արքիտմի բնութագրական կառուցվածքը. Ա-ն հարաբերվում է Բ-ի հետ, ընդ որում՝ Ա-ն և Բ-ն կարող են լինել սուբյեկտներ, իսկ նրանց միջև հարաբերությունը պատճառական կամ կորելյացիոն: Օրինակ՝ «լավ բաները տեղի են ունենում լավ մարդկանց հետ»։ մարդիկ տարբերվում են այս համոզմունքի տարբեր աստիճաններով: Սոցիալական արքիտմները տարբերվում են արժեքներից, որոնց հիմնական ձևը հետևյալն է. «Ա-ն լավ է, կարևոր կամ ցանկալի»։ Դրանք նաև տարբերվում են նորմատիվային համոզմունքներից, որոնք հրահանգչական պնդումներ են և երկու սուբյեկտների միջև կապի հղում չեն տալիս: «Մենք պետք է օգնենք աղքատներին» նորմատիվային համոզմունք է, բայց ոչ սոցիալական արքիտմ: Այս երկու տեսակի համոզմունքների միջև հիմնական տարբերությունն այն է, որ նորմատիվային համոզմունքները ներկայացնում են այն, թե որն է այս կամ այն գործողության ցանկալի ուղղվածությունը, իսկ արքիտմատիկ համոզմունքները արտացոլում են մի մարդու տեսանկյունից այն մասին, թե ինչպես է աշխարհը գործառում⁹⁷:

Սոցիալական արքիտմները կատարում են չորս կարևոր գործառույթ՝ 1) գործիքային՝ նպաստելով նպատակների իրագործմանը, 2) ինքնապաշտպանական՝ օգնելով մարդկանց պաշտպանել իրենց ինքնագնահատականը, 3) սպասարկում են արժեքների արտահայտմանը, 4) օգնում են մարդկանց հասկանալ աշխարհում տեղի ունեցողը: Ըստ էության, սոցիալական արքիտմները կենտրոնական և կազմակերպչական դեր են կատարում մարդու համոզմունքային համակարգում՝ ուժեղացնելով մարդկանց գոյապահպանումն ու գործառականությունը սոցիալական ու ֆիզիկական միջավայրում⁹⁸:

ՏԵՂԱՅՆԱՅՄԱՆ ԳՈՐԾԵՆԹԱՅԸ

Մեր ուսումնասիրության շրջանակում իրականացրել ենք Leung B.-ի և համահեղինակների կողմից առաջարկված չափողական մոդելի՝ Սոցիալական արքիտմների հարցարանի՝ (Social axioms Survey) կարճ տարբերակի տե-

dimensions of general beliefs about how the world functions. *Journal of Cross-Cultural Psychology*, 33, pp. 286-302:

⁹⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 289:

⁹⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 288:

դայնացումը⁹⁹: Մոդելում ներկայացված սոցիալական արքիտմները կարելի է խմբավորել չորս խմբերում¹⁰⁰.

- անհատական բնութագրերին վերաբերող արքիտմներ,
- արքիտմներ, որոնք վերաբերում են խմբերի, կազմակերպությունների, հասարակությունների սոցիալական բնութագրերին,
- մարդկանց հաղորդակցության վերաբերյալ արքիտմներ,
- միջավայրի տարբեր ասպեկտների մասին արքիտմներ, որոնք առնչում են սոցիալական վարքին:

Տեղայնացման գործընթացն իրականացվել է երկու փուլով. 1) հարցարանի քարգմանություն՝ անգլերենից հայերեն և հայերեն տարբերակի հետքարգմանություն անգլերենի՝ լեզվական և իմաստային առանձնահատկությունների պահպանմամբ, 2) հարցարանի հոգեչափողական հատկությունների՝ հուսալիության և կոնստրուկտային վալիդության ստուգում:

Հետազոտական ընտրամբը կազմել է 803 մարդ (373 տղամարդ և 430 կին)՝ 18-65 տարեկան, Երևան քաղաքից և ՀՀ չորս մարզերից¹⁰¹: Մասնակիցներին առաջադրվել են 39 պնդումներ, որոնք պետք է գնահատելին 1-5 ինտերվալային սանդղակով՝ ըստ իրենց համաձայնության աստիճանի («ընդհանրապես համաձայն չեմ»-ից «լիովին համաձայն եմ»): Հարցարանի միջոցով դուրս են բերվում հինգ գործոններ¹⁰²:

Սոցիալական ջինիզմը (Social cynicism) արտահայտվում է մարդկային բնույթի վերաբերյալ բացասական տեսակետով (հատկապես իշխանություն ձեռք բերելիս հեշտությամբ արատավորվելու իմաստով), որոշ խմբերի հանդեպ կողմնակալ, բացասական դիրքորոշմամբ, սոցիալական ինստիտուտների հանդեպ անվստահությամբ, ինչպես նաև նպատակին հասնելու համար բարոյական նորմերի/սկզբունքների անտեսմամբ:

Սոցիալական կյանքի բարդություն (Social complexity) համոզմունքում հիմնականն այն է, որ չկան անփոփոխ օրենքներ, որևէ բանի հասնելու մի բանի ճանապարհ կա, ինչպես նաև այն, որ մարդու վարքի փոփոխականությունը բնականոն երևույթ է:

⁹⁹ Տե՛ս Leung Kwok & Michael H. Bond (2004) Social axioms: A model of social beliefs in multicultural perspective. *Advances in Experimental Social Psychology*, 36, pp. 119- 97:

¹⁰⁰ Տե՛ս Leung Kwok, Bond M. H., Reimel de Carrasquel S., Muñoz C., Hernández M., Murakami F., Yamaguchi S., Bierbrauer G. & Singelis T. M. (2002) նշվ. աշխ.:

¹⁰¹ Հետազոտական տվյալները հավաքագրվել են 2011-2012 թվականներին:

¹⁰² Տե՛ս Խաչատրյան Ն. Գ., Մանուկյան Ս. Հ. և ուրիշներ (2014) Մշակույթ, արժեքներ, համոզմունքներ. վարքի կողմնորոշիչները փոփոխվող հայ հասարակությունում, Երևան, հեղ. իրատ., էջ 53:

Չանքերի դիմաց հատուցումն (Reward for Application). արտահայտվում է այն ընդհանուր համոզմունքով, որ ջանքը, գիտելիքը, մտածված պլանավորումը և այլ ռեսուրսների անձնական ներդրումը հանգեցնում են դրական արդյունքների և օգնում խուսափել ձախողումներից:

Կրոնականությունը (Religiosity) արտահայտում է համոզմունք գերբնական ուժերի գոյության նկատմամբ և առ այն, որ հավատքը օգտակար դեր ունի:

Ճակատագրի վերահսկումն (Fate control) արտահայտվում է այնպիսի համոզմունքներով, որ կյանքի բոլոր իրադարձությունները կանխորոշված են, ինչպես նաև այն, որ մարդիկ ինչ-որ կերպ կարող են ազդել դրանց վրա:

Յուրաքանչյուր գործոնի կոմստրուկտային վալիդությունը ստուգվել է գործոնային վերլուծությամբ (Exploratory factor analysis), որպես վերլուծության մեթոդ՝ ընտրվել է գլխավոր բաղադրիչների մեթոդը (PCA-principal components analysis)¹⁰³, համապատասխանաբար սանդղակների հուսալիությունն էլ ստուգվել է Կրոնբախի α գործակցով¹⁰⁴:

Ստորև աղյուսակում ներկայացված են յուրաքանչյուր գործոնի համար գործոնային վերլուծության մեթոդ կիրառելու նպատակահարմարությունը ցուցող չափորոշիչների արժեքները¹⁰⁵.

Աղյուսակ 8.1

Սոցիալական արքիտմների գործոնային վերլուծության համապատասխանությունը ցուցող չափորոշիչների արժեքները

Գործոն	Չափորոշիչ	
	Կայգեր-Մեյեր-Օլկինի աղեկվատության	Բարտլետի ոլորտայնության
Ճակատագրի վերահսկում	0.625	df=258.954; p<0.0001
Կրոնականություն	0.759	df=1224.612; p<0.0001

¹⁰³ Գործոնային վերլուծության ընթացակարգի, ինչպես նաև արդյունքների՝ վիճակագրորեն նշանակալից արժեքների մասին եզրակացությունները կատարվել են ըստ՝ **Peter S.** (2017) Advice on Exploratory Factor Analysis// http://www.open-access.bcu.ac.uk/6076/1/_staff_shares_storage%20500mb_Library_ID112668_Stats%20Advisory_New%20Statistics%20Workshops_18_ExploratoryFactorAnalysis_ExploratoryFactorAnalysis4.pdf (24.02.2021):

¹⁰⁴ Կրոնբախի α գործակցի արդյունքների ընդունելի մակարդակի մասին եզրակացությունները կատարվել են ըստ՝ **Taber K. S.** (2018) The Use of Cronbach's Alpha when Developing and Reporting Research Instruments in Science Education. *Research in Science Education*, 48 (6), pp. 1273-1296:

¹⁰⁵ Հետազոտական տվյալների համար գործոնային վերլուծության մեթոդ կիրառելու համապատասխանությունը ստուգվել է Կայգեր-Մեյեր-Օլկինի աղեկվատության և Բարտլետի ոլորտայնության չափորոշիչների միջոցով (KMO-Kaiser-Meyer-Oikin Measure of sampling Adequacy and Bartlett test of sphericity). արդյունքները վիճակագրորեն նշանակալից են եղել բոլոր երեք սանդղակների համար:

Ջանքերի դիմաց հատուցում	0.788	df=1014.700; p<0.0001
Սոցիալական կյանքի բարդություն	0.622	df=261.864; p<0.0001
Սոցիալական ցինիզմ	0.818	df=1256.753; p<0.0001

Բոլոր գործոնների համար երկու չափորոշիչների արժեքները վկայում են գործոնային մոդելների վիճակագրական նշանակալիությունը:

Աղյուսակ 8.2-ում էլ կարելի է տեսնել յուրաքանչյուր գործոնը կազմող հարցերի գործոնային կշիռները¹⁰⁶.

Աղյուսակ 8.2

Սոցիալական արսիոնների գործոնային կառուցվածքը

Սոցիալական արսիոններ	ՃՎ	Կ	ՋՀ	ՍԿԲ	ՍՅ
Չախորդությունից հետո հաջողություն է գալիս:	0.504				
Ճակատագիրն է որոշում մարդու հաջողություններն ու ձախողումները:	0.489				
Այնպիսի բնութագրեր, ինչպիսիք են մարդու արտաքին տեսքն ու ծննդյան օրը, ազդում են նրա ճակատագրի վրա:	0.511				
Աղետների մեծ մասը կարելի է կանխատեսել:	0.529				
Կան որոշակի ուղիներ, որոնցով կարող ենք մեր բախտն ավելի լավը դարձնել և անհաջողություններից խուսափել:	0.536				
Ապագան կանխատեսելու բազմաթիվ ձևեր կան:	0.626				
Կրոնական հավատը նպաստում է հոգեկան առողջությանը:		0.694			
Կրոնը իրականությունից փախուստի պատճառ է դառնում:		-0.382			
Ավելի հավանական է, որ հավատացյալ մարդիկ կպահպանեն բարոյական նորմերը:		0.724			
Կա մի գերագույն ուժ, որը կառավարում է աշխարհը:		0.435			

¹⁰⁶ Աղյուսակում հինգ գործոնները ներկայացված են կրճատ անվանումներով՝ Կ–կրոնականություն, ՍՅ–սոցիալական ցինիզմ, ՃՎ–ճակատագրի վերահսկում, ՍԿԲ–սոցիալական կյանքի բարդություն, ՋՀ–ջանքերի դիմաց հատուցում:

Կրոնական հավատը հանգեցնում է ոչ գիտական մտածողության:		-0.383			
Կրոնական հավատը օգնում է մարդուն հասկանալ կյանքի իմաստը:		0.795			
Կրոնական հավատը մարդկանց դարձնում է լավ քաղաքացիներ:		0.797			
Զգուշավորությունն օգնում է խուսափել սխալներից:			0.440		
Նա, ով չի կարողանում պլանավորել իր ապագան, հաջողության չի հասնի:			0.385		
Հաջողության համար գիտելիք է անհրաժեշտ:			0.615		
Ջանքեր գործադրելով՝ կարելի է հաղթահարել ծախսերությունները:			0.637		
Յուրաքանչյուր խնդիր լուծելի է:			0.572		
Մրցակցությունը նպաստում է զարգացմանը:			0.553		
Եթե մարդն իսկապես փորձի, նա հաջողության կհասնի:			0.705		
Զախտումը հաջողության սկիզբն է:			0.423		
Շատ աշխատող մարդիկ վերջում ավելի շատ բանի կհասնեն:			0.607		
Մարդու վարքը փոխվում է՝ միջավայրից կախված:				0.682	
Տարբեր իրավիճակներում մարդկանց վարքը կարող է տարբեր, անգամ հակասական լինել:				0.752	
Մարդը պետք է գործի տվյալ հանգամանքների համաձայն:				0.564	
Սովորաբար ամեն խնդիր լուծման միայն մեկ ճանապարհի ունի:				0.172	
Մարդու վարքը կարող է հակասել նրա իրական զգացմունքներին:				0.520	
Պարտադիր չէ, որ ներկայի կորուստները վատ անդրադառնան մարդու ապագայի վրա:				0.273	
Երիտասարդները գործում են պահի ազդեցությամբ և այդ տեսանկյունից անհուսալի են:					0.466
Իրական կյանքում երջանիկ ավարտ հազվադեպ կտեսնես:					0.484
Իշխանությունն ու դիրքը մարդկանց ինքնահավան են դարձնում:					0.629
Ազդեցիկ մարդիկ հակված են շահագործել ուրիշներին:					0.661

Բարեկեցիկ կյանք ապահովելուց հետո մարդիկ կդադարեն շատ աշխատել:					0.482
Տարբեր հասարակական կառույցներ կողմնակալ վերաբերմունք են դրսևորում հարուստների նկատմամբ:					0.567
Բարեսիրտ մարդկանց վրա հեշտ է ճնշում և ուժ գործադրելը:					0.544
Ծեր մարդիկ ծանր հոգս են հասարակության համար:					0.284
Սիրահարված մարդիկ սովորաբար «կույր» են:					0.497
Բարեսիրտ մարդիկ սովորաբար կորուստներ են ունենում:					0.626
Հասարակական հարցերի մասին մտածելը միայն անհանգստություն է պատճառում:					0.548

Հաշվի առնելով մեր ընտրանքի չափը (>800)՝ կարելի է ասել, որ բոլոր հարցերի գործոնային կշիռներն ընդհանուր առմամբ համապատասխանում են վիճակագրորեն նշանակալից արժեքներին¹⁰⁷:

Հոգեմետրիկական մյուս հատկության՝ հուսալիության ցուցանիշներն այսպիսին են.

- սոցիալական ցինիզմ՝ 0.740,
- ջանքերի դիմաց փոխհատուցում՝ 0.708,
- սոցիալական կյանքի բարդություն՝ 0.352,
- ճակատագրի վերահսկում՝ 0.495,
- կրոնականություն՝ 0.723:

Ինչպես երևում է ցուցանիշներից, ըստ էության, հուսալիությունը ցածր է «ճակատագրի վերահսկում» և «սոցիալական կյանքի բարդություն» գործոնների համար: Սոցիալական կյանքի բարդություն» սանդղակի հարցերի մեկի («Սովորաբար ամեն խնդիր լուծման միայն մեկ ճանապարհ ունի») դուրսբերման արդյունքում սանդղակի հուսալիությունը մեծանում է՝ հասնելով 0.489-ի:

ՀԱՐՑԱՐԱՆԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հարցարանը բաղկացած է 39 պնդումներից, որոնք պետք է գնահատվեն 1-5 ինտերվալային սանդղակով՝ ըստ համաձայնության աստիճանի («ընդ-

¹⁰⁷ Տե՛ս **Peter S.** (2016) նշվ. աշխ.:

հանրապես համաձայն չեն»-ից «լիովին համաձայն են»): «Կրոնականություն» և «ճակատագրի վերահսկում» գործոնների համար նախատեսված է 6-ական հարց, «սոցիալական կյանքի բարդություն» գործոնի համար՝ 5 հարց, «ջանքերի դիմաց փոխհատուցում» գործոնի համար՝ 9, իսկ «սոցիալական ցինիզմի» համար՝ 11 հարց:

Արդյունքների հաշվարկ. Յուրաքանչյուր գործոնի նշանակությունը որոշվում է այդ վերջինիս համապատասխանող բոլոր հարցերի միավորների թվաբանական միջինի (Mean) միջոցով՝ բանալուն համապատասխան: Ամիրաժեշտ է հաշվի առնել, որ 8-րդ, 11-րդ և 26-րդ հարցերը հակառակ հարցեր են, և վերջինիս տրվող միավորները պետք է փոխել հետևյալ սկզբունքով՝ (1=5) (2=4) (3=3) (4=2) (5=1).

- Սոցիական ցինիզմ. MEAN (29, 30, 31, 32, 33, 34, 35, 36, 37, 38, 39)
- Ջանքերի դիմաց հատուցում. MEAN (14, 15, 16, 17, 18, 19, 20, 21, 22)
- Սոցիալական կյանքի բարդություն. MEAN (23, 24, 25, 26, 27, 28)
- Դակատագրի վերահսկում. MEAN (1, 2, 3, 4, 5, 6)
- Կրոնականություն. MEAN (7, 8, 9, 10, 11, 12, 13)

Մեր հետազոտական ընտրանքի համար սոցիալական աքսիոմների՝ հինգ գործոնների միջինի ու ստանդարտ շեղման արդյունքներն այսպիսին են եղել (ցուցանիշներն առանձնացրել ենք՝ ըստ որոշակի տարիքային խմբերի).

Աղյուսակ 8.3

Սոցիական աքսիոմների գործոնների նկարագրական վիճակագրություն

	18-25 (N=187)		26-35 (N=177)		36-45 (N=163)		46-55 (N=154)		56-65 (N=113)	
	M	SD	M	SD	M	SD	M	SD	M	SD
Սոցիալական ցինիզմ	2.84	0.612	2.96	0.517	3.04	0.572	3.12	0.57	3.18	0.550
Ջանքերի դիմաց փոխհատուցում	3.93	0.617	3.85	0.549	3.92	0.513	3.94	0.491	3.88	0.519
Սոցիալական կյանքի բարդություն	3.70	0.533	3.67	0.479	3.71	0.562	3.78	0.539	3.77	0.527
Դակատագրի վերահսկում	2.91	0.608	2.96	0.588	2.98	0.589	3.08	0.521	3.05	0.635
Կրոնականություն	3.17	0.695	3.29	0.651	3.16	0.641	3.28	0.742	3.31	0.725

Բնականաբար, այս ցուցանիշները նորմատիվային չեն հայաստանյան նշված տարիքային խմբի համար, այնուամենայնիվ, վերջինս կարող է կողմնորոշիչ նշանակություն ունենալ:

ՀԱՐՑԱՐԱՆԻ ԲԼԱՆԿ

Հրահանգ. Ստորև բերված են դատողություններ, որոնք արտահայտում են կյանքի տարբեր ոլորտներին առնչվող համոզմունքներ: Խնդրում ենք ուշադիր կարդալ յուրաքանչյուր դատողություն և շրջանակի մեջ վերցնել այն քիվը, որն ամենից լավ է արտահայտում Ձեր համաձայնության աստիճանը.

1=ընդհանրապես համաձայն չեմ,

2=համաձայն չեմ,

3=չգիտեմ,

4=համաձայն եմ,

5=լիովին համաձայն եմ:

	Ընդհանրապես համաձայն չեմ	Համաձայն չեմ	Չգիտեմ	Համաձայն եմ	Լիովին համաձայն եմ
1. Ձախտորոշումից հետո հաջողություն է գալիս:	1	2	3	4	5
2. Ճակատագիրն է որոշում մարդու հաջողություններն ու ձախտումները:	1	2	3	4	5
3. Այնպիսի բնութագրեր, ինչպիսիք են մարդու արտաքին տեսքն ու ծննդյան օրը, ազդում են նրա ճակատագրի վրա:	1	2	3	4	5
4. Աղետների մեծ մասը կարելի է կանխատեսել:	1	2	3	4	5
5. Կան որոշակի ուղիներ, որոնցով կարող ենք մեր բախտն ավելի լավը դարձնել և անհաջողություններից խուսափել:	1	2	3	4	5
6. Ապագան կանխատեսելու բազմաթիվ ձևեր կան:	1	2	3	4	5
7. Կրոնական հավատը նպաստում է հոգեկան առողջությանը:	1	2	3	4	5
8. Կրոնը իրականությունից փախուստի պատճառ է դառնում:	1	2	3	4	5

	Ընդհանրապես համաձայն չեմ	Համաձայն չեմ	Զգիտեմ	Համաձայն եմ	Լիովին համաձայն եմ
9. Ավելի հավանական է, որ հավատացյալ մարդիկ կպահպանեն բարոյական նորմերը:	1	2	3	4	5
10. Կա մի գերագույն ուժ, որը կառավարում է աշխարհը:	1	2	3	4	5
11. Կրոնական հավատը հանգեցնում է ոչ գիտական մտածողության:	1	2	3	4	5
12. Կրոնական հավատը օգնում է մարդուն հասկանալ կյանքի իմաստը:	1	2	3	4	5
13. Կրոնական հավատը մարդկանց դարձնում է լավ քաղաքացիներ:	1	2	3	4	5
14. Զգուշավորությունն օգնում է խուսափել սխալներից:	1	2	3	4	5
15. Նա, ով չի կարողանում պլանավորել իր ապագան, հաջողության չի հասնի:	1	2	3	4	5
16. Հաջողության համար գիտելիք է անհրաժեշտ:	1	2	3	4	5
17. Ջանքեր գործադրելով՝ կարելի է հաղթահարել ձախտրությունները:	1	2	3	4	5
18. Յուրաքանչյուր խնդիր լուծելի է:	1	2	3	4	5
19. Միջակցությունը նպաստում է զարգացմանը:	1	2	3	4	5
20. Եթե մարդն իսկապես փորձի, նա հաջողության կհասնի:	1	2	3	4	5
21. Զախտղումը հաջողության սկիզբն է:	1	2	3	4	5
22. Շատ աշխատող մարդիկ վերջում ավելի շատ բանի կհասնեն:	1	2	3	4	5
23. Մարդու վարքը փոխվում է՝ միջավայրից կախված:	1	2	3	4	5
24. Տարբեր իրավիճակներում մարդկանց վարքը կարող է տարբեր, անգամ հակասական լինել:	1	2	3	4	5
25. Մարդը պետք է գործի տվյալ հանգամանքների համաձայն:	1	2	3	4	5

	Ընդհանրապես համաձայն չեմ	Համաձայն չեմ	Զգիտեմ	Համաձայն եմ	Լիովին համաձայն եմ
26. Սովորաբար ամեն խնդիր լուծման միայն մեկ ճանապարհ ունի:	1	2	3	4	5
27. Մարդու վարքը կարող է հակասել նրա իրական գգացմունքներին:	1	2	3	4	5
28. Պարտադիր չէ, որ ներկայի կորուստները վատ անդրադառնան մարդու ապագայի վրա:	1	2	3	4	5
29. Երիտասարդները գործում են պահի ազդեցությամբ և այդ տեսանկյունից անհուսալի են:	1	2	3	4	5
30. Իրական կյանքում երջանիկ ավարտ հազվադեպ կտեսնես:	1	2	3	4	5
31. Իշխանությունն ու դիրքը մարդկանց ինքնահավան են դարձնում:	1	2	3	4	5
32. Ազդեցիկ մարդիկ հակված են շահագործել ուրիշներին:	1	2	3	4	5
33. Բարեկեցիկ կյանք ապահովելուց հետո մարդիկ կդադարեն շատ աշխատել:	1	2	3	4	5
34. Հասարակական տարբեր կառույցներ կողմնակալ վերաբերմունք են դրսևորում հարուստների նկատմամբ:	1	2	3	4	5
35. Բարեսիրտ մարդկանց վրա հեշտ է ճնշում և ուժ գործադրելը:	1	2	3	4	5
36. Ծեր մարդիկ ծանր հոգս են հասարակության համար:	1	2	3	4	5
37. Սիրահարված մարդիկ սովորաբար «կույր» են:	1	2	3	4	5
38. Բարեսիրտ մարդիկ սովորաբար կորուստներ են ունենում:	1	2	3	4	5
39. Հասարակական հարցերի մասին մտածելը միայն անհանգստություն է պատճառում:	1	2	3	4	5

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**ԱՆՁԻ ԴԻՍՊՈԶԻՑԻՈՆԱԼ ԳԾԵՐ ԵՎ
ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐ.
ՀՈԳԵԶԱՓՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՏԵՂԱՅՆԱՑՈՒՄ**

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. խմբագրումը՝ Մ. Հովհաննիսյանի

Տպագրված է «ՎԱՌՄ» ՍՊԸ-ում:
Ք. Երևան, Տիգրան Մեծի 48, բն. 43

Ստորագրված է տպագրության՝ 01.03.2021:
Չափսը՝ 60x84 ¹/₁₆: Տպ. մամուլը՝ 8:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am